ԴՈՍՏՈԵՒՍԿԻՆ, ՏՈԼՍՏՈՅԸ ԵՒ ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԸ

T-H
OVE
977

INSTITUT FÜR ARMENISCHE FRAGEN • ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

2173

Է· ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԴՈՍՏՈԵՒՍԿԻՆ,
ՏՈԼՍՏՈՅԸ
ԵՒ ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԸ

Uit de nalatenschap van
Nubar Jessayan (1920-2009)

Է. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԴՈՍՏՈԵՒՍԿԻՆ, ՏՈԼՍՏՈՅԸ ԵՒ ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԸ

INSTITUT FÜR ARMENISCHE FRAGEN
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

1. Auflage 1977
© 1977 Institut für Armenische Fragen e. V. München.
Printed in Italy

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մենք ապրում ենք մի այնպիսի դարաշրջանում, որտեղ մարդկանց համոզում է բնազիտութիւնը, բայց ոչ դրականութիւնը, որտեղ զգացմունքները կորցրել են իրենց վստահելիութիւնը, որտեղ բոլոր բնագաւառներում իշխում է տրամաբանութիւնը, որտեղ արուեստը, կորցնելով իր ճանաչողական նշանակութիւնը, լաւագոյն դէպքում, դարձել է հաճոյք: Փիլիսոփայութիւնը արդէն վաղուց դարձել է նեղ մասնագիտութիւն եւ արդէն վաղուց փիլիսոփաները չեն ուսումնասիրում դրողներին, երաժիշտներին ու բանաստեղծներին:

Շեքսպիրի, Բայրոնի, Տոլստոյի ու Սոլժենիցինի տեղը փիլիսոփայութեան մէջ դրաւել են Անչտայնը, Հէյդինբերգը ու Վիները:

Թուում էր, թէ Դոստոեւսկիյով ու Տոլստոյով աւարտուեց ներըմբռնողական փիլիսոփաների համաստեղութիւնը եւ որ փիլիսոփայութիւնը ընկաւ չոր ու ցամաք տրամաբանութիւն ունեցող դիտնականների ձեռքը: Բայց ահա հայ ժողովրդի ծոցից ծնուեց Պարոյր Սեւակը եւ իր ներըմբռնողական փիլիսոփայութեամբ կանդնեց այդ երկու հսկաների կողքին:

Ոչ Դոստոեւսկին եւ ոչ էլ Տոլստոյը չէին ուսումնասիրել Արիստոտելին, Դեկարտին կամ Սպինոզային: Կարծում ենք, որ Սեւակն էլ նրանց վրայ շատ ժամանակ չէր կորցրել: Սակայն զգացմունքների ուժով, դեղարուեստական միջոցներով ու լեզուով այս երեքը ասացին աւելին, քան նրանց ժամանակակից փիլիսոփաներից որեւէ մէկը:

Սակայն այս համաստեղութեան մէջ Սեւակը դրաւում է առանձնայատուկ տեղ, որովհետեւ նա ծնուեց ու խօսեց այնտեղ,

որտեղ իդեալիզմը պաշտօնապէս արգելուած էր, որտեղ մատերիալիզմը դարձել էր պարտադիր մտածելակերպ:

Բայց, մինչեւ Սեւակին հասնելը, մենք ուզում ենք առաջարկել մեր ընթերցողին անցնել այն ճանապարհը, որով, մեր կարծիքով, անցնում են բոլոր ներըմբռնողական փիլիսոփաները եւ որը վերջին հաշուով կանդնեցնում է ճակատագրական ընտրութեան առջեւ՝ ԴԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒԹԻՒՆ, ԹԷ ԿԱՄՔԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ: Ժամանակակից պրոֆեսիոնալ փիլիսոփաների համար այս հարցը նոյնիսկ դոյութիւն չունի, այնքան կռապաշտ են նրանք դիտութեան հանդէպ: Եւ եթէ ժամանակ առ ժամանակ նրանց չցնցեն արուեստագէտները, ո՞վ դիտէ, թէ ինչպիսի՛ հոգեկան երաշտ էր սպասում մարդկութեանը: Յոնարհուենք հոգեկան ժանտախտից մեզ փրկող ներըմբռնողական փիլիսոփաների առջեւ:

Ճանապարհ ընկնելով ու քայլելով փիլիսոփայական անտառների միջով, որպէս ուղեկից մենք հրաւիրում ենք ռուս փիլիսոփայ Լեւ Շեստովին, առանց որի մեզ համար դժուար կլինէր այս անտառների միջով անցնող չաւիղով հասնել Պարոյր Սեւակին եւ փորձել հասկանալ նրա աշխարհայեացքը: Ճանապարհ ընկնելով, ուզում ենք նաեւ յիշեցնել, որ ուսումնասիրուած են Սեւակի ոչ բոլոր աշխատութիւնները եւ բանաստեղծութիւնները: Հաւանական է, որ լինեն այնպիսիները, որոնք էլ աւելի ապացուցեն մեր եզրակացութիւնները:

Բացառուած չէ նաեւ այն, որ կը գտնուեն մեր եզրակացութիւնները հերքող աշխատութիւններ: Այս ուղղութեամբ բոլոր քննադատների դիտողութիւնները «Հայկական Հարցերի Հաստատութիւնը» կ'ընդունի երախտագիտութեամբ:

Մի ԱԶՓՈՎ ԵՄ ՆԱՅՈՒՄ ԿԵԱՆՔԻՆ։
(ԵՐԿՐՈՐԴ ԱԶՓՍ ԱՊԱԿՈՒՑ Է)։
ԵՒ ՄԻ ՀԱՏԻԿ ԻՄ ԱՅՍ ԱԶՓՈՎ
ՇԱՏ ԵՄ ՏԵՍՆՈՒՄ,
ԻՍԿ ԵՐԿՐՈՐԴՈՎ՝ ԱՒԵԼԻ ՇԱՏ,
ՈՐՈՎՀԵՏԵՒ
ԱՌՈՂՋ ԱԶՓՈՎ ԵՍ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ,
ԻՍԿ ԿՈՅՐ ԱԶՓՈՎ... ՄԻՇՏ ԵՐԱԶՈՒՄ...

Պ. ՍԵՒԱԿ

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐԸ

Եկէք յիշենք բոլորին յայտնի, բայց որոշ չափով մոռացուած մատնուած մի հին պատմութիւն: Ասում են, թէ մի անդրագէտ, բայց խելամիտ դեղջկուհի, տեսնելով, թէ ինչպէս իմաստուն Թալէսը, որ աստղեր էր որոնում երկնքում, ընկաւ ջրհորը, անկեղծօրէն ծիծաղում էր տարօրինակ ծերունու վրայ եւ ասում. «Ոտքերիդ տակինը չես տեսնում, ինչպէ՞ս պէտք է աստղերը տեսնես երկնքում»: Բոլոր առողջամիտ կոչուող մարդիկ մտածում են ճիշտ այնպէս, ինչպէս որ մտածում էր Թրակիացի դեղջկուհին: Նոյնիսկ փիլիսոփաները արդէն վաղուց փորձում են հաստատել տիեզերական օրինաչափութիւնների անընդհատութիւնը:

Թալէսը ինքը այն փիլիսոփան էր, որը առաջին անգամ խօսեց աշխարհակառոյցի միասնութեան մասին: Եւ չատ հաւանական է, որ ջրհոր ընկած Թալէսը, լսելով դեղջկուհու ուրախ ծիծաղը, վիրաւորական վիճակում մտածեց, որ ճշմարտութիւնը դեղջկուհու կողմն է, որ, իսկապէս, երկինք ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ոտքերի տակ եղածը:

Թալէսը հնադարեան փիլիսոփայութեան հայրն էր եւ դեղջկուհու ծիծաղից առաջացած նրա չփոթութիւնը փոխանցուեց նրա աշակերտներին: Եւ նրանցից յետոյ եկող փիլիսոփաները արդէն յստակ գիտէին, որ երկնքին դիմելուց առաջ անհրաժեշտ է մանրամասնօրէն ուսումնասիրել ոտքերի տակ եղածը:

Պարզ ասած՝ դա նշանակում էր, որ փիլիսոփայութիւնը ամեն գնով ուզում էր գիտութիւն լինել: Նա ցանկանում էր գիտութեան նման իր չէնքը ամուր քարէ հիմքի վրայ կառուցել:

Այդ քարէ հիմքերը կառուցող Կանտի մասին յայտնի է Հեգելի դիտողութիւնը։ «Կանտը այն լողւորն էր, որը ջուր նետուելուց առաջ ցանկանում է իմանալ, թէ ինչպէս են լողում»։ Այդ դիտողութիւնը ճիշտ կը լինէր, եթէ Կանտից առաջ ոչ ոք տիեզերքը ուսումնասիրելու փորձ արած չլինէր։ Բայց այդպէս չէր։ Կանտից առաջ հարիւրամեակների ընթացքում մարդիկ լողում էին ու լողում էին չատ լաւ։ Եւ ինքը՝ Կանտը իր խմացութեան տեսութիւնը սկսեց կառուցել այն բանից յետոյ, երբ առանց լողալ իմանալու մի քանի անգամ նետուեց ջուրը։

Սակայն Հեգելի կատակը ունէր աւելի խոր իմաստ։ Հեգելը ցանկանում էր նշել, որ դիտութիւնների դոյութիւնը դեռ ոչինչ չի ասում այն մասին, որ նրանց նշանակութիւնը բացարձակ է եւ որ նրանց վրայ կարելի է հիմնել փիլիսոփայութիւնը։

Երեւոյթների դոյութիւնը դեռ ոչինչ չի ասում նրանց օգտին։ Գոյութիւն ունի դողութիւնը, պոռնկութիւնը, մահը, դժբախտութիւնը, բայց այս ամենի գոյութեան փաստը չի խօսում ոչ նրանց օգտին եւ ոչ էլ նրանց դէմ։

Եւ դիտութիւնների դոյութիւնն էլ, նրանց առջեւ խոնարհուած մարդկութեամբ հանդերձ, ամենեւին էլ չի պաշտպանում դիտութիւնները հնարաւոր յարձակումներից։

Այսօր դիտութիւնը, չնայած նրան, որ ստեղծել է ատոմային ռումբեր, բոլորի կողմից ճանաչուած է որպէս օգտակար մի բան։ Իսկ ո՞վ կարող է այսօր ասել, թէ ինչ է սպասում այն մարդուն, որը այդքան վստահում եւ հիանում է դիտութեան վրայ։ Ձի՞ կարող արդեօք այնպէս պատահել, որ դիտութեանը վստահող մարդուն ի վերջոյ վիճակուի մի աւելի սարսափելի վախճան, քան ոտքերի տակը լռեսնող, բայց հայեացքը երկնքին ուղղած թալէսին։

Իսկ եթէ այդպիսի վտանգ դոյութիւն ունի, արդեօք դա չի նշանակում, որ փիլիսոփան վտանգից խուսափելու համար պարտաւոր է խզել իր բոլոր կապերը դիտութեան հետ։ Ո՞վ կարող է պատասխանել այս հարցին։ Ո՞ւմ դիմել այս հարցով։ Արդեօք դոյութիւն ունի այնպիսիատեան, որին կարելի լինի դիմել այս հարցով։

Եթէ նոյնիսկ այդ ատեանը դոյութիւն ունի, ինչպէ՞ս իմանալ, որ հենց դա՛ է մեր որոնած դատարանը:

Կանտը այսպիսի հարցերից խուսափում էր: Նա համարում էր, որ մենք լողալ դիտենք եւ չենք խեղդուի, մնում է միայն պարզել, թէ ո՞ր շարժումների չնորհիւ է, որ մենք չենք սուզւում: Որտեղի՞ց էր Կանտի այս համազուածութիւնը, — այս մասին Կանտը ոչինչ չի ասում, կարծես թէ այս մասին բոլոր հարցերը աւելորդ են:

Բայց հարցեր կան, եւ եթէ Կանտը չի ցանկանում նրանց պատասխանել, անհրաժեշտ պատասխանի յետեւից պէտք է գնալ այլ տեղեր: Այնտեղ, որտեղ քմահաճոյքի առջեւ նահանջում է տրամաբանութիւնը, որտեղ երեխան կամ իշխանաւորը ոտքը դետնին խփելով ասում է՝ «ես այսպէ՛ս եմ ուզում, ուրեմն, սա՛ է ճշմարտութիւնը», որտեղ Դոստոեւսկու Թուարանութեան համաձայն՝ երկու անդամ երկու հինգ է, որտեղ Տոլստոյի համար լուծւում է անլուծելի մահուան հանելուկը եւ որտեղ Սեւակի համազուածութեամբ անկարելի է հաշուել,

Թէ ի՞նչ ալիքով, ֆանի՞ վայրկեանում
Եւ ֆանի՞ կրամ արիւն է հոսում աղջկայ սրտից
Դէպի ամօթխած այտերը նրա՝
Առաջ բերելով ա՛յն բռնկումը ջերմամիջուկեան,
Որ մինչեւ այսօր միամտաբա՛ր, շիկնանիք եմք կոչել:

Ի հարկէ, այն տեղը, որտեղից մենք ուզում ենք ստանալ մեզ յուզող հարցերի պատասխանը, դիտուն փիլիսոփաների համար վիրաւորական է: Հեգել, Կանտ, Արիստոտել մէկ կողմից եւ քմահաճ թագաւորներ, երեխաներ ու միամիտ դրողներ մեւս կողմից: Սակայն, բացի այն, որ վիրաւորուելն ու վրդովուելը երբեք չի կարող ապացոյց ծառայել, բացի այդ, եթէ Կանտը, Արիստոտելը ու Հեգելը չունէին ոտքը դետնին խփող սեփական ուղեցոյցներ, ապա որտեղի՞ց եւ ինչպէ՞ս նրանք լուծեցին իրենց տարակուսանքները եւ որտեղի՞ց իմացան, թէ ինչպէս լողալ եւ ճանապարհով քայլել:

Ոչ Կանտը եւ ոչ էլ Հեգելը չէին փորձում արդարացնել դիտուԹիւնը եւ տրամաբանուԹիւնը: Նրանք հիանալի գիտէին, որ չի կարելի բարձրացնել գիտական գիտելիքների իրաւասուԹեան հարցը: Նրանք միայն ուզում էին հեղինակազրկել ինքնակամ եւ քմահաճ մետաֆիզիկան, ապացուցելով, որ նա իր չէնքը կառուցում է ոչ ամուր դրանտի, այլ փխրուն աւազի վրայ:

Իսկ սեփական համոզուածուԹեան համար Հեգելը եւ Կանտը աղբիւրներ չէին որոնում: Նրանց բոլորովին չէր հետաքրքրում, Թէ որտեղից եկաւ իրենց սեփական համոզուածուԹիւնը. կարեւորը այն էր, որ այդ համոզուածուԹիւնը կար: Աւելին, նրանք համարում էին, որ միայն այն համոզուածուԹիւնն է ամուր, որի մասին ոչ ոք չի կարող ասել, Թէ որտեղից նա եկաւ:

Որովհետեւ եԹէ մենք սկսենք քրքրել համոզուածուԹեան ըղըդապատճառները եւ դրանք դտնենք, ո՞վ կարող է վստահեցնել մեզ, Թէ չի Թուլանայ մեր համոզուածուԹիւնը:

Ուրեմն, կորչի՛ աւազի վրայ կառուցուած մետաֆիզիկան, կեցցէ՛ անյայտ տեղից եկող՝ դրանիտի վրայ կառուցուած դիտուԹիւնը:

Նորագոյն փիլիսոփայուԹիւնը զարդացաւ այն համոզուածուԹեամբ, որ դիտուԹեան եւ մետաֆիզիկայի բախումը ամենուր կ՚աւարտուի դիտուԹեան փայլուն յաղԹանակով: Դեկարտից եւ Սպինոզայից յետոյ ոչ մի ճանաչուած փիլիսոփայ այլ կերպ չէր մտածում:

Սպինոզան իր Թէորեմներով եւ փիլիսոփայական աշխատուԹիւնների համար անսովոր հաշուարկներով փիլիսոփայուԹիւնը դարձրեց դիտուԹիւն: Իմիջիայլոց, ոչ Սպինոզան, ոչ Կանտը եւ ոչ էլ մեծ փիլիսոփաներից որեւէ մէկը չեն պատասխանել այն հարցին, Թէ ինչ բան է դիտուԹիւնը: Բոլորս գիտենք, որ դիտուԹիւնը դա ԹուաբանուԹիւնն է, երկրաչափուԹիւնը, աստղագիտուԹիւնը, ֆիզիկան եւ նոյնիսկ պատմուԹիւնը: Սակայն դիտուԹեան եւ բանականուԹեան սպառիչ սահմանումը մենք չենք դտնում նոյնիսկ Կանտի մօտ, որը «Զուտ ԲանականուԹեան քննադատուԹեան» հեղինակն էր:

Ենթադրում է, որ բոլորը գիտենք, թէ ինչ բան է բանականութիւնը եւ ինչ բան է գիտութիւնը: Իսկ եթէ մենք փորձենք սեփական ուժերով փիլիսոփաների աշխատութիւններից պատկերացում կազմել գիտութեան եւ բանականութեան մասին, ապա մենք ի վերջոյ կը յանգենք այն տեսակէտին, որ գիտութիւնը եւ բանականութիւնը տալիս են մեզ ՀԱՄԱՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ:

Այնտեղ, որտեղ տիրում են համապարտադիր դատողութիւնները, վերջանում են բոլոր տեսակի կասկածները ու վէճերը, այնտեղ բոլորը մտածում են միանման, այնտեղ երկու անգամ երկու չորս է, եւ ուրեմն, այնտեղ բնակւում է յաւերժական ճշմարտութիւնը: Այս պատճառով է, որ փիլիսոփաներին միշտ հրապուրել է մաթեմատիկան:

Պլատոնը հեռացնում էր երկրաչափութիւն չիմացող աշակերտներին: Կանտը մաթեմատիկան անուանում էր գիտութիւնների թագուհի: Սպինոզան խոստանում էր Աստծոյ գոյութիւնը ապացուցել այնպէս, ինչպէս ապացուցւում է, որ եռանկիւնու անկիւնների գումարը հաւասար է 180 աստիճանի: Իսկ Մարքսը համարում էր, որ միայն այն գիտութիւնը կարող է կատարելագործուել, որին յաջողւում է օգտուել մաթեմատիկայից:

Սպինոզան առաջինն էր, որ իր վրայ վերցրեց փիլիսոփայութեան մաթեմատիկացումը: Նա առաջինն էր, որ խոստացաւ փիլիսոփայական բառարանից դուրս չպրտել մարդու ցանկութիւններին վերաբերուող բոլոր բառերը: Ջարն ու Բարին, դեղեցիկն ու տգեղը, լաւն ու վատը՝ այս ամենը, — ասում է Սպինոզան, — չի պատկանում ճշմարտութիւնը որոնելու միջոցներին: Մարդը անսահման չղթայի, անսահման միասնութեան օղակներից մէկն է և նրա ցանկութիւնները չեն կարող փիլիսոփայութեան համար դառնալ ուսումնասիրութեան առարկայ: Փիլիսոփայութիւնը պէտք է ուսումնասիրի, թէ առանձին օղակներից ինչպէս է ստեղծւում այն միասնութիւնը, որին Սպինոզան ինքը անուանում է մէկ Աստուած, մէկ բնութիւն, մէկ էութիւն: Աստուած բառը Սպինոզան մի կողմ չնետեց, բայց այդ բառի իմաստը նոյնացրեց բնութեան հետ:

Նրա փիլիսոփայութեան մէջ Աստուած ու բնութիւն դարձան նոյն հասկացութիւնները: Բայց նոյնիսկ կրօնական փիլիսոփայութիւնից անտեղեակ մարդկանց համար պարզ էր, որ նոյնացնելով բնութիւնը Աստծոյ հետ՝ Սպինոզան փաստօրէն հրաժարուեց Աստծոյ դաղափարից եւ ճշմարտութեան յետեւից դնաց այնտեղ, որտեղ մաթեմատիկոսները լուծում էին իրեն խնդիրները:

Ջէ՞ որ երկու անդամ երկուսի պատասխանը որոնելիս, մենք համոզուած ենք, որ այդ պատասխանը զուրկ է աղատութիւնից, մենք դիտենք, որ պատասխանը մէակն է: Եթէ փիլիսոփաներն էլ իրենց դիտութիւնից պահանջում են այդպիսի յատկութիւն, ապա նրանք պէտք է դուրս չպրտեն փիլիսոփայութիւնից այն ամենը, ինչ որ չի ենթարկւում մաթեմատիկական օրինաչափութիւններին:

Եւ Սպինոզան դուրս է նետում փիլիսոփայութիւնից թէ մարդու եւ թէ Աստծոյ աղատութիւնը: Մարդիկ եւ Աստուած դառնում են տիեզերական օրինաչափութիւններին ենթարկուող օզակներ: Այստեղից էլ նրա վերաբերմունքը Աստուածաշնչի հանդէպ: Աստուածաշնչում, — ասում է նա, — ճշմարտութիւն չկայ, Աստուածաշունչը ճշմարտութեան տեղը չէ: Աստուածաշնչում կան միայն բարոյական քարոզներ, որը մենք կարող ենք ընդունել, բայց ճշմարտութեան յետեւից պէտք է գնալ ուրիշ տեղ: Ու որքան էլ ուզեն առարկել փիլիսոփայութեան պատմութեան մասնագէտները, փաստը այն է, որ մինչեւ այսօր փիլիսոփաներին չի յաջողուել դուրս դալ Սպինոզայի այս դաղափարների իշխանութեան տակից:

Ոչ Կանտը, ոչ Հեգելը, ոչ Լայբնիցը, ոչ Շելինգը, ոչ Մարքսը եւ ոչ էլ ամենաժամանակակից փիլիսոփաները իրենց մէջ ուժ չդտան՝ դուրս դալու համար Սպինոզայի կողմից դծուած շրջանակից:

Սպինոզան յետագայում քննադատուեց տարբեր կողմերից, բայց ոչ ոք չհամարձակուեց վերանայել նրա հիմնական դրոյթը, թէ՝ «ճշմարտութեան յետեւից մենք պէտք է դնանք այն դատաւորի մօտ, ումից իմացանք, որ երկու անդամ երկու չորս է»: Բոլորը հաւատում են, որ ուրիշ աւելի արդար դատաւոր դոյութիւն

չունի եւ հաւատում են, որ Սպինոզան, իսկապէս, բոլոր ճշմարտութիւնները գտնում էր հենց այդ դատաւորի մօտ:

Փիլիսոփաներից եւ ոչ մէկը չհամարձակուեց ասել այն, ինչ որ ասացին Դոստոեւսկին ու Տոլստոյը: Նրանք ասացին, որ ուրքը դետնին խփող կենդանի մարդու քմահաճոյքը պակաս արժէք չունի, քան միապատասխան օրինաչափութիւնները: Ոչ ոք Սեւակի նման չկարողացաւ օրինաչափութիւնների յետեւից տեսնել անորոշութիւնը:

Դու՝ 20-րդ եւ, անտարակոյս, յաբելեանական,
Դու՝ հիւլէական,
կարծես էական
Եւ աւելի բան կարծես բանական
Բայց նաեւ նոյնիսկ խելագար դարի
Ո՛վ բաղաբացիդ անզօր ու հզօր,
Անորոշութեան ցաւով ես հիւանդ,
Անորոշութեան անդարման ցաւով,
Որ բողբոջում է բջիջներիդ մէջ...

Եւ ահա մենք տեսնում ենք, որ փիլիսոփաները, ճշմարտութիւն որոնող փիլիսոփաները, որոնց համար ճշմարտութիւնից աւելի թանգ բան գոյութիւն չունի, աւելի ստախօս են դտնւում, քան փիլիսոփայութիւնից հեռու կանգնած արուեստագէտները, որոնք չեն որոնում համապատասխան դատողութիւններ, ուստի չեն յարմարւում ընդունուած տեսակէտներին: Նոյնիսկ սոփեստները, որոնց համարձակութիւնը անցնում էր բոլոր սահմանները, նոյնիսկ նրանք՝ ճշմարտախօսութեան խմաստով չհասան արուեստագէտներին: Նրանք վիճում էին Սոկրատէսի հետ, որովհետեւ ուզում էին, որ Սոկրատէսը եւ բոլոր մարդիկ ընդունէին, համաձայնուէին իրենց ճշմարտութեան հետ: Բայց եթէ սոփեստները թալէսին ծաղրող դեղջկուհու նման ծիծաղէին Սոկրատէսի վրայ, այլ ոչ թէ վիճէին նրա հետ, ապա Սոկրատէսը անմիջապէս կը գինաթափուէր:

Սակայն, ըստ երեւոյթին, սուիեստնե՛րն էլ բոլորի նման հաւատում եւ ընդունում էին բանականութեան իրաւունքը: Այսպէս թէ այնպէս՝ փիլիսոփայութեան պատմութիւնը վկայում է, որ մարդու համար ճշմարտութեան որոնումը միշտ էլ եղել է համապարտադիր դատողութիւնների որոնում: Մարդու համար ճշմարտութիւն ձեռք բերելը քիչ է, նա ուզում է աւելին. նա ուզում է, որ իր ճշմարտութիւնը բոլորի կողմից ընդունուի, բոլորի համար ճշմարտութիւն լինի: Այդ իրաւունքը ձեռք բերելու համար մարդը ստեղծել է առասպել, թէ իբր իր ճշմարտութիւնը ոչ թէ ինքն է ստեղծել, այլ պատրաստի ձեւով վերցրել է մէկ ուրիշ տեղից, եւ այն էլ ոչ թէ իր նման քմահաճոյքներով օժտուած մարդուց, այլ այն բացարձակ արդար դատաւորից, որը մեզ տուել է երկու անգամ երկուսի ճշմարտութիւնը: Եւ եթէ ճշմարտութեան հեղինակը մի անչունչ էակ է, ապա մարդուն մնում է միայն հրաժարուել սեփական քմահաճոյքից ու կրքերից, բոլոր ցանկութիւնները ենթարկելով բացարձակ ու գիտականօրէն ապացուցուած ճշմարտութեանը:

Մ.Ջ.Ին դարերում եւ աւելի առաջ, դեռեւս մեր թուարկութեան առաջին 50ամեակից սկսած, քրիստոնէութեամբ ոգեւորուած փիլիսոփաները Հելլեններից ժառանգած իմաստութեան դէմ պայքարելու փորձեր էին կատարում: Բայց նրանց ճիգերը կանխապէս դատապարտուած էին ու անցան ապարդիւն:

Եւրոպացիների Աստուածաչնչի հետ ծանօթանալուց մի քանի տասնամեակ առաջ Փիլոն Յուդայացին արդէն ջանում էր հաշտեցնել արեւելեան մարգարէութիւնը արեւմտեան գիտութեան հետ: Սակայն այն, ինչը նա անուանում էր հաշտութիւն, փաստօրէն դաւաճանութիւն էր, որովհետեւ Աթէնքը երբեք հաշուի չէր նստի Երուսաղէմի հետ, նա միայն կարող էր կործանել Երուսաղէմը:

Շատ քիչ մարդ էր հասկանում Աթէնքի վտանգը: Այդ քչերի թւումն էր Տերտուլիանոսը, որը այս հռչակաւոր դարձած մտքի հեղինակն էր.

«Մահացաւ Աստծոյ որդին՝ ամօթ չէ, որովհետեւ խայտառակութիւն է: Ու մահացաւ Աստծոյ որդին՝ հաւատալի է, որովհե-

տեւ անխմաստ է: Ու թաղուելուց յետոյ յարութիւն առաւ, ճըշմարիտ է, որովհետեւ անհաւատալի է»:

Միայն մէկ մարդ այն ժամանակուանից ի վեր հասկացաւ, որ մտքի փառաբանումը եւ երկրպագութիւնը նրա առջեւ խլում է մեզանից ամենաթանկագինը՝ հաւատքը: Տերտուլիանին ոչ ոք չլսեց, նոյնիսկ ինքը իրեն չլսեց: Նրա խօսքերը կամ ամբողջովին մոռացութեան են մատնուած եւ կամ էլ օգտագործւում են որպէս ծայրահեղ անմտութեան օրինակ: Բոլորը իրենց պարտքն են համարում ոչ միայն չհաշտեցնել Երուսաղէմը Աթէնքի հետ, այլ պահանջել, որ Երուսաղէմը Աթէնք դնայ իրեն արդարացնելու եւ օրհնութիւն ստանալու համար:

Այս ցանկութիւնը այնքան մեծ էր, որ մուտք գործեց նոյնիսկ սուրբ գրքերի մէջ: «Ի սկզբանէ էր բանն», — սա նշանակում էր, որ սկզբից եղել է Աթէնքը, իսկ յետոյ Երուսաղէմը: Եւ, ուրեմն, այն ամենը, ինչը գալիս է Երուսաղէմից պէտք է կշռուի Աթէնքի կշեռքի վրայ:

Այժմ, երբ Աթէնքի յաղթութիւնը ակնյայտ է, ոչ մի ԽԵԼՔԸ ԳԼԽԻՆ մարդ չի ընդունում, որ ճշմարտութիւնը կարող է գոյութիւն ունենալ նաեւ առանց մեծամասնութեան կողմից ընդունուելու: Ոչ մի ԽԵԼՔԸ ԳԼԽԻՆ կոչուող մարդ չի ընդունում նաեւ այն, որ երբեմն ղեկավարները տրամաբանութիւնից բարձր են ու անսխալ: Ինքնաբերաբար բոլորը սկսել են հետեւել Սալինոզային, որը իբր թէ անաչառ կերպով միայն ղրանցում էր ճշմարտութիւնը:

Սակայն Սալինոզան ատում էր: Ճիշտ չէ, որ նա իր փիլիսոփայութիւնը համարում էր ոչ թէ լաւագոյնը, այլ միայն ամենաճշմարիտը: Ճիշտ չէ, որ իր փիլիսոփայութիւնը ստեղծելիս նա չէր յուզւում, չէր ծիծաղում ու անիծում, այլ միայն լսում էր, թէ ինչ է ասում տրամաբանութիւնը, այսինքն նա, ով որոշել էր անկիւնների դումարը: Սալինոզան պարզապէս իր փիլիսոփայութիւնը ծանրակշիռ դարձնելու համար դիմում էր տրամաբանութեանը:

Այսպիսով, Սալինոզան չփոթութեան մէջ գցեց մարդկութեանը, պարզապէս խաբելով նրան: Սակայն մարդկութիւնը ուզում

էր խաբուել, որովհետեւ այն պահից, երբ մարդու միտքը որդեդրեց դիտելիքների իշխանութիւնը, կեանքը ենթարկուեց դիտելիքներին: Եթէ հաւատանք փիլիսոփաներին, դա տեղի ունեցաւ Եւրոպայում մեր թուարկութիւնից վեց դար առաջ եւ այդ ստի հեղինակը Թալէսն էր: Եթէ հաւատանք Աստուածաշնչին, դա տեղի ունեցաւ շատ աւելի շուտ, երբ երկրագնդի վրայ կային միայն երկու մարդ: Այդ ըմբռնման մէջ ստի հեղինակը ոչ թէ մարդն էր, այլ օձի կերպարանք ընդունած սատանան: Բայց Աստուածաշնչի մենք չենք հաւատում, ուրեմն՝ մնաց Թալէսը: Այսպէս թէ այնպէս, Թալէսի, թէ սատանայի մեղքով մարդիկ ունեն խորը համոզուածութիւն, որ իրենք պտնւում են ինչ որ տիեզերական ուժերի իշխանութեան տակ, որոնք որոշում են ե՛ւ եռանկիւնու անկիւնների գումարը, ե՛ւ մարդու ու աղղերի ճակատագիրը, ե՛ւ մարդու ղպացմունքները եւ թէ մարդու անխուսափելի մահը:

Բոլոր վորձերը՝ դուրս գալ այդ ուժերի իշխանութեան տակից՝ հանդիպում են մի շարք խոչընդոտների, որոնք անյաղթահարելի են դառնում հենց այն պատճառով, որ համապարտադիր են: Ինչպէս յայտնի է, կանտը բազմից յայտարարել է, թէ Հիւմը արթնցրեց իրեն: Եւ, իսկապէս, այն, ինչ տեսել էր Հիւմը եւ ինչ որ նրա չնորհիւ տեսնում էր կանտը, ոչ միայն քնածին, այլ մեռածին էլ կարթնացնէր: Հիւմը գրում էր. «Կա՛յ, արդեօք, բնութեան մէջ աւելի խորհրդաւոր սկզբունք, քան մարմնի եւ հոգու կապը: Մի սկզբունք, որի չնորհիւ հոգին ձեռք է բերում մարմնի վրայ այնպիսի իշխանութիւն, որ կոպիտ մարմինը պտնւում է նուրբ մտքի ազդեցութեան տակ: Եթէ մենք ձեռք բերենք սարերը եւ մոլորակները տեղաշարժելու ուժ, դա չէր լինի աւելի զարմանալի ու տարօրինակ, քան այն, ինչ որ մենք արդէն ունենք»:

Կանտը, դրեթէ կրկնելով Հիւմին, ասում էր. «Այն, որ իմ կամքը շարժում է իմ ձեռքը, ինձ համար նոյնքան անհասկանալի է, որքան որ անհասկանալի կը լինէր, եթէ ինձ ասէին, որ իմ ձեռքը կարող է կանղնեցնել լուսնի շարժումը»: Թւում է, թէ Հիւմը, իսկ յետոյ էլ կանտը, պատրաստ էին դուրս պրծնել գիտութեան չղթաների միջից եւ Տերտուլիանի նման հաւատալ անհաւատալին: Բայց ոչ, թէ Հիւմը եւ թէ կանտը այդպէս էլ չարթ-

նացան, նրանք այդպէս էլ չկարողացան բարձրանալ արուեստագէտի մակարդակին: Չհասաւ այդ մակարդակին նաեւ Հեղելը: Որքան էլ նա փորձեց պայքարել Սպինոզայի դէմ, որքան էլ նա ցանկացաւ իր ուսուցչի միասպաղաղութիւնը յաղթահարել ոգու դինամիզմով, միեւնոյն է, ոչինչ չփոխուեց, այլ ընդհակառակն, աւելի հաստատուեց բանականութեան իշխանութիւնը: Ինչ մնում է ժամանակակից փիլիսոփաներին, ապա նրանց մասին խօսելն էլ աւելորդ է, այնքան վախենում են նրանք տրամաբանութիւնից ու նահանջում նրա առջեւ: Նրանց համար բանականութեան իշխանութիւնը այնքան բացարձակ է եւ այնքան անսասան, որ նրանց մտքովն անգամ չի անցնում, թէ այստեղ դեռ վիճելու ու պայքարելու տեղ կայ: Այն հրաշքները, որոնց մասին ժամանակ առ ժամանակ մտածում էին Հիւմը եւ Կանտը, վաղուց մոռացութեան են մատնուած: Այսօր բոլոր փիլիսոփաները միաձայն կը յայտարարեն, թէ ոչքեր դիտութեան հետ չեն, նրանց սպասում է թալէսի ճակատագիրը, այսինքն ջրհոր ընկնելը եւ դեղջկուհու ծաղրանքին արժանանալը:

Բայց այսպէս էին մտածում եւ այդպէս են մտածում փիլիսոփայ մասնագէտները: Այդպէս են մտածում նաեւ դիտութիւնից հեռու կանգնած հասարակ մարդիկ: Մինչդեռ այդպէս չէին մտածում ներըմբռնողական փիլիսոփաներ՝ Դոստոեւսկին, Տոլստոյը եւ Պարոյր Սեւակը:

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՅԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ ԳԵՐՏԵՍՈՂՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ

«Ո՛վ դիտի, դուցէ մահը կեանք է, իսկ կեանքը մահ», — ասում էր Էւրիպիդէսը: Այս նոյն միտքը կրկնում է իմաստուններից իմաստուն Սոկրատէսը: Սա ի՛նչ տարօրինակ բան է: Ամէն մի հասարակ մարդ յստակօրէն դիտի, թէ ինչով է մահը տարբերւում կեանքից, իսկ Պլատոնի, Էւրիպիդէսի ու Սոկրատէսի նման իմաստունների համար կեանքի ու մահի տարբերութիւնը հանելուկ է: Ինչպէ՞ս է պատահում, որ իմաստունները տատանւում ու չփոթւում են այնտեղ, որտեղ հասարակ մարդիկ ոչ մի դժուարութիւն չեն տեսնում: Ինչո՞ւ հասարակ մարդիկ յստակօրէն տարբերում են սեւը սպիտակից ու դեղինը կանաչից, իսկ նկարիչների համար դոյները բաժանող սահմաններ գոյութիւն չունեն: Արդեօք դա չի՞ նշանակում, որ գոյութիւն ունեն երկրորդ տեսողութիւն, երկրորդ լսողութիւն ու ճաշներորդ զգայարան ունեցող մարդիկ:

Այդ զգայարաններով նրանց յաջողւում է տեսնել այն, ինչը անկարելի է տեսնել սովորական աչքերով: Բայց որովհետեւ մեր բանականութիւնը, փորձը, համընդհանուր դաղափարները անմիջականօրէն կապուած են սովորական զգայարանների հետ, ինչ որ յաջողւում է տեսնել մեր երկրորդ զգայարաններով, համարւում է անօրինական, անմիտ, երազային կամ հիւանդ երեւակայութեան տեսիլք:

Թւում է, թէ ե՛ւս մի քանի տեսիլք՝ եւ քեզ խելագար համարելով կուղարկեն հոգեբուժարան: Եւ հենց այդ պահից սկսւում է

պայքարը երկու տեսողութիւնների միջեւ, որի աւարտը ճիշտ այնքան հանելուկային է, որքան որ նրա սկիզբը:

Անկասկած, այս երկու տեսողութիւններով օժտուած մարդկանց թուին էին պատկանում Դոստոեւսկին, Տոլստոյը եւ Պարոյր Սեւակը: Դժուար է ասել, թէ երբ այս երեքից ամէն մէկը ձեռք բերեց իր երկրորդ տեսողութիւնը: Ասում են, թէ Դոստոեւսկին այդ տեսողութիւնը ձեռք բերեց այն պահին, երբ մահուան դատապարտուած՝ կանգնած էր կախաղանի առջեւ: Իսկ դուցէ եւ տաժանավայրում, որի մասին վկայում է նրա լաւագոյն ստեղծագործութիւններից մէկը՝ «Յիշողութիւններ մեռեալ տնից»: Այսպէս թէ այնպէս, Դոստոեւսկին, որը երազում է ազատուել տաժանավայրից, որը քանի-քանի էջեր է գրում իր այդ երազի մասին, բանտից ազատուելուց յետոյ յանկարծ տեսնում է, որ ազատ կեանքը ոչնչով չի տարբերւում բանտից: Այն ազատ մարդիկ, որոնց նա այնքան նախանձում էր բանտում, նոյնքան ճնշըւում են կապոյտ երկնքի կողմից, որքան որ ճնշւում էր ինքը բանտախուցի առաստաղով: Ինչո՞ւ այդպէս պատահեց: Դեռ երէկ էր գրուել «Յիշողութիւններ մեռեալ տնից» երկը, որտեղ կալանաւորների կեանքը նկարագրուած էր որպէս մի մղձաւանջ: Դեռ երէկ Դոստոեւսկին միայն բանտի ներսումն էր մղձաւանջ տեսնում, իսկ բանտից դուրս կեանքը նրա համար դեղեցիկ էր ու երջանիկ:

Բայց այդպէս էին տեսնում նրա սուլորական աչքերը, այդպէս էր գաւում նրա սուլորական տրամաբանութիւնը: Ու, յանկարծ, այս գաւողութիւններին հակառակ՝ նոր, բոլորովին ուրիշ վկայութիւն: Դուցէ՞ հենց այստեղ է ձեռք բերել Դոստոեւսկին իր երկրորդ տեսողութիւնը: Յայտնի է, որ առաջին տեսողութիւնը, այսինքն իր բնական աչքերը մարդը ձեռք է բերում ընկալման մնացեալ բոլոր ընդունակութիւնների հետ միասին, եւ դրա համար էլ այդ առաջին տեսողութիւնը բոլոր զգայարանների հետ գոնւում է ներդաշնակութեան մէջ: Իսկ երկրորդ տեսողութիւնը գալիս է աւելի ուշ եւ այնպիսի ձեռքերից, որոնք ամենեւին էլ ներդաշնակութիւնը պահպանելու մտադրութիւն չունեն:

Տոլստոյի երկրորդ տեսողութեան մասին մենք ունենք աւելի յստակ տեղեկութիւններ: Տոլստոյի ստեղծագործութիւնների մէջ

կայ «Ելատարի նօթադրութիւնները» վերնագրով չաւարտուած մի փոքր պատմուածք: Բովանդակութիւնը շատ պարզ է: Մի հարուստ կալուածատէր, լսելով, որ Պենզայում շատ էժան գնով տուն է վաճառւում, մեկնում է Պենզա այդ տունը գնելու: Ճամբորդում է նա ուրախութեամբ, որովհետեւ համոզուած է, թէ գործարքը շահաւէտ է լինելու: Եւ յանկարծ ճանապարհին, առանց որեւէ արտաքին պատճառների, նա ամբողջովին փոխւում է: Նա բոլորովին ուրիշ աչքերով է տեսնում աշխարհը եւ ամբողջ իր կեանքը, ընտանիքը, կալուածքները, առեւտուրը՝ այս բոլորը թւում են անմիտ ու դատարկ բաներ: Սարսափահար եղած կալուածատէրը հասնում է խելագարութեան աստիճանի:

Եթէ այս չաւարտուած պատմութիւնը համեմատենք Տոլստոյի կնոջը ուղղուած նամակներից մէկի հետ, ապա կը տեսնենք, որ «Ելատարի նօթադրութիւնների» հերոսը ինքը Տոլստոյն է: Իմիջիայլոց, այս նամակը Տոլստոյը ուղարկել է կնոջը Պենզա տանող ճանապարհից, որտեղ նա մտադրուած էր կալուածք գնել, բայց այդպէս էլ չգնեց: Այս նամակը մենք մէջբերում ենք ամբողջովին:

«Երկու օր առաջ ես գիշերեցի Արզամասում եւ ինձ հետ կատարուեց մի տարօրինակ բան: Գիշերուայ երկուսին ես յանկարծ զգացի մի անսովոր վախ եւ սարսափ, սարսափ, որը ինձ երբեք ծանօթ չէր: Իմ այդ զգացմունքների մասին ես քեզ յետոյ կը պատմեմ, բայց ներկայումս անդամ չեմ ցանկանայ այդպիսի տանջալի զգացմունք: Ես վեր կացայ գիշերուայ կէսին եւ կարգադրեցի պատրաստել կառքը: Բայց մինչեւ որ կառքը պատրաստեցին՝ ես քնեցի եւ արթնացայ բոլորովին առողջ: Երէկ այդ զգացմունքը վերադարձաւ, բայց ես նախապատրաստուած էի եւ չենթարկուեցի, մանաւանդ որ այս անդամ զգացմունքը աւելի թոյլ էր: Այժմ առողջ եմ եւ այնքան ուրախ, որքան հնարաւոր է ուրախ լինել առանց ընտանիքի: Այս անդամ ես առաջին անդամ լինելով զգացի, թէ որքան եմ միաձուլուել քո եւ երեխաների հետ: Ես կարող եմ մնալ մենակ, եթէ զբաղուած եմ, բայց երբ զգում եմ, որ առանց զբաղմունքի եմ՝ բոլորովին չեմ կարող տանել մենակութիւնը»:

Այստեղ նոյնիսկ նամակի մանրամասնութիւնները համընկնում են «խելագարի նօթադրութիւնների» հետ: Եւ քանի որ Տոլստոյի երկրորդ տեսողութիւնը առաջին անգամ արտայայտուել է հենց այդ պատմուածքում, մենք բաւական ճշտօրէն կարող ենք եզրակացութիւն անել այդ տեսողութեան ծնունդի ժամկէտի մասին:

Սեւակի պարապան աւելի բարդ է: Նա այնքան երիտասարդ տարիքում հրաժեշտ տուեց այս աշխարհին, որ դուցէ դեռ չէր էլ վերջնականապէս հաստատուել ու հասունացել նրա երկրորդ տեսողութիւնը: Բայց որ այդ տեսողութիւնը կար՝ կասկածից վեր է: Դժուար չէ կռահել նաեւ այն, թէ երբ Սեւակը տեսաւ չրջապատը՝ ոչ սովորական աչքերով: Իր կարճատեւ կեանքում նա ականատես եղաւ մի քանի՝ արժէքները վերագնահատող ցնցումների: Պատերազմ եւ պատերազմի աւարտ, Ստալինի մահ եւ աղգային զղացմունքների վերելք, Խռուչչովեան ժամանակաչրջանի որոշ ազատութիւններ եւ արտայայտուելու հնարաւորութիւն:

Անկասկած, այս բոլոր ժամանակաչրջանները իրենց կնիքը դրեցին Սեւակի երկրորդ տեսողութեան վրայ:

Սակայն, ի՞նչն է առաջին հերթին նկատում երկրորդ տեսողութիւնը, որտե՞ղ է նա մրցութեան մէջ մտնում սովորական տեսողութեան հետ: Ի՞նչ է տեսնում երկրորդ տեսողութիւնը, որ չի տեսնում առաջինը:

Պատասխանը չատ տարօրինակ պէտք է թուայ: Ոչ թէ աւել, այլ պակաս է տեսնում երկրորդ տեսողութիւնը: Երկրորդ տեսողութիւնը չի տեսնում երեւոյթները բաժանող սահմանները: Այդ տեսողութեան չնորհիւ յանկարծ պարզուում է, որ խիստ սահման գոյութիւն չունի կեանքի ու մահուան, յաղթանակի ու պարտութեան, սեւի ու սպիտակի, չարի ու բարու միջեւ: Այսինքն, երկրորդ տեսողութիւնը օգնում է մեզ հրաժարուել հակասութիւնների օրինաչափութիւններից, որոնք ըստ Արիստոտելի անսասան են, բայց որոնց հետեւելով մենք ստիպուած կը լինենք ասել՝ աշխարհում կայ կամ մահ կամ կեանք, երկուսը միասին չեն կարող գոյութիւն ունենալ:

Բայց, կամ հակասութիւնների օրէնքը այդքան անսասան չէ եւ կամ էլ մարդը կարող է ղեկավարուել այդ սկզբունքով միայն

այնտեղ, որտեղ ինքն է ստեղծագործում: Այն սահմաններում, որտեղ մարդը տէր ու տիրական է, այնտեղ այս օրէնքը ծառայում է մարդուն: Բայց ոչ կեանքը եւ ոչ էլ մահը մարդու կողմից չեն ստեղծուած, եւ չնայած նրան, որ երկուսը բացառում են մէկը մեւսին, երկուսն էլ միաժամանակ դոյութիւն ունեն աշխարհում, տանջելով մարդու միտքը, թէ որտեղ է վերջանում կեանքը ու սկսւում մահը:

Ու Դոստոեւսկին յանկարծ տեսաւ, որ երկինքը եւ բանտի առաստաղը, չղթաները եւ ազատութիւնը ոչ թէ հակասութիւններ են, ինչպէս մտածում էր ինքը եւ բոլոր սովորական մարդիկ, այլ նոյնութիւններ: Այսինքն, նրա երկրորդ տեսողութիւնը այլեւս չէր տեսնում նրանց միջեւ անցնող սահմանը: Դոստոեւսկին չէր տեսնում եւ հաւատում էր իր այդ երկրորդ աչքերին: Այդպիսին չէր Սեւակը:

Զտեսնելով պղտորի ու վճիտի, խրճիթի ու հոյակապ ապարանքի, պարտութեան ու յաղթանակի միջեւ տարբերութիւնները, Սեւակը վերադրում է դա իր անիրական ենթադրութիւններին:

Ես կարող եմ ենթադրել,
Թէ այս ջուրը ոչ թէ պղտոր, այլ վճիտ է:
Ես կարող եմ ենթադրել,
Թէ հոյակապ ապարանք է այս խրճիթը:
Ես կարող եմ ենթադրել,
Թէ այս ծուխը
Գոլորշացող խարածուխ է,
Եւ այս կարմիր ճոթը բարակ
Ոչ թէ լաթ է, այլ բոց-կրակ···

Ու տեսնելով այս ամէնը, Սեւակը չի հաւատում իր երկրորդ աչքերին, նա առայժմ չի բաւարարւում իր ունեցած ճշմարտութեամբ, նա ուրիշների հաւանութիւնն է որոնում, նա ուզում է, որ իր ճշմարտութիւնը համընդհանուր լինի:

Ես կարող եմ ենթադրել,
Բայց ինչ օգուտ···

Միտքը կարելի էր չարունակել՝ բայց ինչ օգուտ, որ ուրիշները չեն ենթադրում: Եւ կամ էլ՝ ինչ օգուտ, չէ՞ որ պարտութիւնը յաղթանակ չէ:

Երկու այս վերջաւորութիւնն էլ վկայում են միայն մէկ բան. Սեւակը սկսել է չտեսնել երեւոյթները բաժանող սահմանները եւ տառապում է անորոշութիւնից: 9 տարի յետոյ այդ անորոշութեան մասին նա կը խօսի աւելի յստակ:

Անորոշութեան ցաւով ես հիւանդ,
Անորոշութեան ոխերի՛մ ցաւով,
Որ մահդ է տենչում:
Բայց մահ էլ չունես.
Կարգին մեռնելու համար էլ
Պիտի մարդ բախտ ունենայ...

Սակայն ե՞րբ Սեւակը որոշեց հրաժարուել համընդհանուր գըեղահատականներից, ե՞րբ նա ցանկացաւ իր երկրորդ աչքերով տեսածի հիման վրայ կառուցել սեփական աշխարհը: Այս մասին մենք ունենք յստակ տեղեկութիւններ, այս մասին վկայում է ինքը բանաստեղծը.

Եւ... ևո՛ր աշխարհ եմ ստեղծում հիմա՝
Առայժմ եթէ ոչ ձեզ բոլորիդ,
Ապա գոնէ ի՛նձ, միայն ի՛նձ համար,
Որպէսզի նախ ե՛ս
Եւ հետց ի՛նձ վրայ
Բժշկի նման փորձարկեմ կարգին,
Ու եթէ լինի այս անգամ սարքին՝
Նո՛ր միայն վստահ յանձնեմ ձե՛զ նաեւ,
Եւ ապրէք այնտեղ դուք մարդավայել:

Ինչպէս մենք տեսնում ենք, այստեղ էլ Սեւակին չի յաջողւում դուրս գալ համընդհանուր չղթաներից: Նա չի բաւարարւում սեփական աշխարհը կառուցելով, նա ցանկանում է այդ աշխարհը

բժշկի նման վորճարկելուց յետոյ յանձնել բոլորին, այսինքն դարձնել «աշխարհ բոլորի համար»:

Բայց Սեւակը արդէն վստահում է իր զգացմունքներին, իր երկրորդ տեսողութեանը, որովհետեւ ինքը իրեն նոր աշխարհ վորճարկելու դատաւոր է հռչակում: Նա մարդկանց չի ուղարկում ուրիշ դատաւորների մօտ, մանաւանդ նրանց մօտ, ովքեր որոշում են եռանկիւնու անկիւնների դումարը: Նա այդ դատաւորի պարտականութիւնը վերցնում է իր վրայ:

Բոլորովին այլ ճանապարհով է հասնում Տոլստոյը երեւոյթները բաժանող սահմանների ջնջմանը: Նրա այդ երկրորդ տեսողութիւնը անձնական կեանքի վերագնահատման մէջ է արտայայտւում: Դոստոեւսկու նման նա վորճում է նոր կեանք սկսել, սխալ համարելով հինը: Սակայն սկսելով այդ նոր կեանքը, նա յանկարծ տեսնում է, որ անյայտացան հին ու նոր կեանքի միջեւ անցնող սահմանը, որ, ինչպէս ժամանակին Դոստոեւսկուն յայտնի դարձաւ, որ երկինքը ճնշում է բանտախուցի առաստաղից ոչ պակաս: Եւ Տոլստոյը սկսում է նկարագրել երկու տարբեր աշխարհներ (Պարահանդէսից յետոյ, Իւան Իլիչի Մահը, Տէրն ու Մշակը), որոնք այնքան տարբեր են, որ նրանց միջեւ անցնող սահմանը պարզ երեւում է:

Բայց անտեսանելի ուժիններով, իր տաղանդի վարպետութեամբ, Տոլստոյը կամաց-կամաց այնպէս է ջնջում այդ սահմանները, որ չարն ու բարին խառնւում են մղձաւանջային մի քաոսի մէջ: Առաջին հայեացքից տարբեր են Դոստոեւսկու, Տոլստոյի եւ Սեւակի երկրորդ տեսողութիւնները, ընդհանուր է միայն այն, որ երեքն էլ այդ տեսողութիւնը ունեն: Սակայն, աւելի մանրամասնօրէն ուսումնասիրելով նրանց տեսածը, դալիս ենք այն եզրակացութեան, որ մի ինչ որ բան երեքն էլ տեսնում էին միանման: Ամբողջովին նոյնացնել նրանց տեսողութիւնները՝ կը նշանակէր վարկաբեկել երկրորդ տեսողութեան գաղափարը, որը ծնւում է համընդհանուրից փախչելու հողի վրայ: Այնուամենայնիւ, մի ինչ որ բանում այս երեք տեսողութեան մէջ նկատւում է նմանութիւն: Այդ նմանութիւնը բացայայտելու համար դիմենք նրանց տեսողութիւններին առանձին-առանձին:

ՖԵՈԴՈՐ ԴՈՍՏՈԵՒՍԿԻՆ

Այսպէս, ուրեմն, Դոստոեւսկին դուրս եկաւ բանտից եւ յանկարծ տեսաւ, որ երկինք ոչ մի տեղ չկայ, որ կայ միայն ճնշող հորիզոն, անտեսանելի չղթաները, որոնք աւելի անտանելի են, քան բանտի տեսանելի չղթաները: Նա տեսաւ, որ ոչ մի բարի գործերի միջոցով մարդը չի կարող ազատուել իր անվերջ բանտարկութիւնից:

Նոր կեանք սկսելու եւ ուղղուելու այն երդումները, որ նա տալիս էր բանտում, այժմ թւում էին սրբապղծութիւններ: Նրա հետ կատարուեց մօտաւորապէս այն, ինչ որ կատարուել էր Լիւթէրի հետ, որը զղուանքով ու սարսափով էր յիշում այն ուխտերի մասին, որոնք արել էր վանք մտնելիս:

Իր այս նոր աչքերով տեսածը Դոստոեւսկին դարձրեց «Ցիչողութիւններ ընյատակից»՝ իր փայլուն ստեղծագործութիւններից մէկի նիւթը: Ինչպէս յայտնի է, այս փոքրիկ երկի մէջ, մինչեւ Լեւ Շեստովը, բոլորը տեսնում էին եւ այսօր էլ շատերը շարունակում են տեսնել միայն չրջապատի մերկացում:

Մի ինչ որ ընդյատակում ապրում են խղճուկ, դժբախտ ու հիւանդ մարդիկ, որոնք, վիրաւորուած զզուելի ճակատագրից, անմիտ վրդովմունքի մէջ ամէն ինչ հերքում են: Բայց այդպիսի մարդիկ միշտ էլ եղել են, կան եւ այսօր:

Եթէ Դոստոեւսկին ցանկացել է նկարագրել միայն այդ հիասթափուած մարդկանց, ապ դա նորութիւն չէ: Շեստովը այս երկի մէջ դտաւ աւելին, նա կռահեց, որ նկարագրուածը Դոստոեւսկու երկրորդ տեսողութիւնն էր: Դոստոեւսկին ինքը մինչեւ կեանքի վերջը այնպէս էլ չհամոզուեց, թէ արդեօք ինքը տեսե՞լ էր այն

ամէնը, ինչի մասին պատմում էր «Ցիշողութիւններ ընդյատակից» դրքում, թէ՞ այդ ամէնը միայն երեւակայութիւններ էին: Եւ դրա համար էլ այդքան տարօրինակ է ընդյատակեայ մարդու պատմութիւնը: Նրա ամէն մի յաջորդ միտքը հեքում եւ ծաղրում է նախորդը:

Պատմուածքի առաջին իսկ էջերից մենք զգում ենք, որ ընդյատակեայ մարդը զուրկ է սովորական տրամաբանութիւնից, որ նա դուրս է եկել կեանքի սովորական հունից եւ սլանում է առաջ, առանց դիտնալու, թէ ուր է դնում ինքը: Ահաւասիկ, այս հատուածով է աւարտւում «Ցիշողութիւնների» առաջին գլուխը. «Այո, 19-րդ դարի մարդը անողնաշար էակ պէտք է լինի, նա բարոյապէս պարտաւոր է լինել այդպիսին: Գործիչը պէտք է սահմանափակ լինի: Սա իմ 40 տարուայ համոզմունքն է: Ես հիմա 40 տարեկան եմ, իսկ 40 տարին իմ ամբողջ կեանքն է: 40 տարուց աւել ապրելը անյարմար է, ամօթ է, անբարոյականութիւն է: Ո՞վ է 40 տարուց աւել ապրում, — պատասխանէ՛ք, անկեղծօրէն ու աղնուօրէն պատասխանէ՛ք: Ես ձեզ կ'ասեմ, թէ ով է ապրում. ապուշները եւ սրիկաները են ապրում: Ես սա կ'ասեմ բոլոր ծերունիներին, կը շպրտեմ իմ ճշմարտութիւնը այդ ճերմակամազ ու բուրումնալից պառաւների աչքերի մէջ: Ամբողջ աշխարհին կ'ասեմ: Ես իրաւունք ունեմ այսպէս ասելու, որովհետեւ ինքս ապրելու եմ 60 տարի, մինչեւ 70 տարի, մինչեւ 80 տարի: Սպասեցէք, թոյլ տուէք չունչ քաշեմ»:

Եւ, իսկապէս, անհրաժեշտ է կանգնել ու չունչ առնել: Իսկապէս, ի՞նչ է նշանակում, թէ 19-րդ դարի մարդը պէտք է լինի անողնաշար, իսկ գործիչը՝ սահմանափակ: Սա ի՞նչ է՝ լուրջ համոզմո՞ւնք, թէ՞ խելագարի ցնորք: Առաջին հայեացքից հարց դրնելն իսկ աւելորդ է. ի հարկէ, ցնորք է, դատարկ խօսքեր: Բայց եկէք յիշենք, որ լաւագոյն փիլիսոփաներից մէկը, բոլորի կողմից ճանաչուած Պլոտինը, որի մասին, ըստ Շեստովի, Դոստեւսկին չէր էլ լսել, արտայայտել է նոյն կարծիքը: Նա էլ պնդում է, որ գործիչը միշտ սահմանափակ է, որ գործունէութեան էութիւնը՝ ինքնասահմանափակումն է: Ով մտածելու եւ հայեցողութեան մէջ սուզուելու ընդունակութիւն չունի՝ նա գործում է:

Սակայն Պլոտինը իր այս միտքը, ի տարբերություն Դոստոեւսկու, յայտնում է շատ հանդիստ, առանց ցնորքային տաղնապի, յայտնում է այնպէս, որ կարծես թէ դա ինքնըստինքեան հասկանալի է:

Հետագայում Դոստոեւսկին եւս համեմատաբար հանդստօրէն կը յայտնի իր երկրորդ աչքերով տեսածը, բայց այժմ նա չափազանց բռնկուած է տեսածով եւ չի կարողանում սառնասիրտ լինել: Եւ, բացի դրանից, այն փիլիսոփայական ճանապարհը եւ դպրոցը, որը անցել էր Պլոտինը, Դոստոեւսկին չէր անցել:

Պլոտինը հելլէնների կողմից ծնուած մի չարք խոշոր փիլիսոփաներից վերջինն էր: Նրա յետեւում մնացել էր լարուած փիլիսոփայական ջանքերի մէկ հաղարամեակ: Այստեղ էին եւ ակադեմիականները եւ ստոյիկները, եւ թէ Փիլոն Ալեքսանդրացին, Արիստոտելը, Պլատոնը, Սոկրատէսը:

Չէ՞ որ Պլատոնն էլ ունէր ընդյատակ, միայն թէ այդ ընդյատակը նա անուանեց քարայր ու ստեղծեց իր հռչակաւոր պատմութիւնը քարայրում ապրող մարդկանց մասին: Բայց նա կարողացաւ դա անել այնպէս, որ ոչ ոքի մտքով անգամ չանցաւ, թէ Պլատոնի քարայրը՝ ընդյատակ է, իսկ Պլատոնը՝ աննորմալ, հիւանդ երեւակայութիւն ունեցող մի մարդ է, որին, մնացած «նորմալ» մարդկանց կարծիքով, անհրաժեշտ է, բուժել:

Իրականում Դոստոեւսկու հետ կատարուեց այն, ինչ-որ նրանից շատ առաջ կատարուել էր Պլատոնի հետ: Նրանք երկուսն էլ ձեռք էին բերել երկրորդ տեսողութիւնը եւ տեսնում էին այն, ինչ-որ չէին տեսնում ուրիշները ու չէին տեսնում այն, ինչ-որ ուրիշներին պարզ երեւում էր: Դժուար է ասել, թէ այս երկուսից ով աւելի շատ հասաւ իր նպատակին: Պլատո՞նը, որ ստեղծեց իդեալիզմը եւ նուաճեց մարդկութիւնը, թէ՞ Դոստոեւսկին, որը իր տեսածի մասին պատմեց այնպէս, որ բոլորը վախեցած երես դարձրին ընդյատակեայ մարդուց:

Ի հարկէ, այստեղ «նպատակ» բառը օգտագործելը այնքան էլ տեղին չէ: Երեւի ոչ Պլատոնը եւ ոչ էլ Դոստոեւսկին որեւէ նպատակ չունէին, երբ մէկը պատմում էր իր քարայրի, իսկ միւսը՝ իր ընդյատակի մասին: Ոչ մի նպատակ չի կարելի վերագրել՝ հին կեանքից դէպի նորը ելնող մարդուն: Այդ փոփոխութիւնը դժուար

է նկարագրել նոյնիսկ նրանց կողմից, ովքեր իրենք ապրել են այդ վերածնունդը եւ դրչի վարպետներ են: Նրանց դրուածներից մի-այն պարզւում է, որ հաւասարակշռութիւնը, խաղաղութիւնը, բաւարարուածութիւնը եւ այն ամէնը, ինչը ուրիշների համար եր-ջանկութեան աղբիւր է, ոմանց ճնշում է այնպէս, որ այդ կա-ցութիւնը դառնում է անտանելի:

Անտիսթենէսը, որը իրեն համարում էր Սոկրատէսի աշակերտ, ասում էր, որ ինքը աւելի պատրաստ է խելագարուելու, քան բա-ւարարուածութեան ղգացմունք ապրելու: Եւ Դիոգենէսը, որին համարում էին խելագարուած Սոկրատէս, նոյնպէս ամենաչատը վախենում էր հաւասարակշռութիւնից: Եւ, որոշ իմաստով, Դիո-գենէսի կեանքը աւելի շատ բան է ասում Սոկրատէսի էութեան մասին, քան Պլատոնի փայլուն երկխօսութիւնները: Յամենայն-դէպս, նա, ով ուզում է հասկանալ Սոկրատէսին, պէտք է այն-պէս ուշադիր լինի Դիոգենէսի այլանդակ կերպարին, որքան որ Պլատոնի ստեղծած Սոկրատէսին:

Խելագարուած Սոկրատէսը դուցէ հենց այն Սոկրատէսն է, որը իր մասին ամէն ինչ կը պատմի: Չէ՞ որ խելքը գլխին մարդը՝ թէ յիմարը եւ թէ խելացին, պատմում են ոչ թէ իրենց մասին, այլ այն մասին, ինչը անհրաժեշտ է եւ օգտակար բոլորին: Խելքը գլխին մարդը հենց նրանով է խելքը գլխին, որ նա արտայայ-տում է բոլորի համար ընդունելի մտքեր: Եւ նոյնիսկ ինքը տես-նում է միայն այն, ինչը բոլորին օգտակար է: Խելքը գլխին մար-դը՝ համընդհանուր մարդ է: Եւ հետաքրքիրն այն է, որ Սոկրա-տէսը, բոլորովին համընդհանուր մարդ չլինելով, պահանջում էր մարդկանցից, որ իրեն համընդհանուր համարէն: Նա գիտէր, որ միայն համընդհանուրն է պահպանում պատմութիւնը:

Եւ, իսկապէս, պատմութիւնը զարմանալիօրէն մոռացութեան է մատնում բոլոր անսովոր երեւոյթները: Եւ դուցէ դրանից է, որ պատմաբանները, որոնք բոլորից շատ են հետաքրքրուած անցեա-լով, առաւել եւս համոզուած են, որ աշխարհում ամէն ինչ կա-տարուել է «բնականօրէն» ու բաւարար չափով հիմնաւորուած»:

Պատմութեան հիմնական խնդիրը միշտ էլ համարուել է ան-ցեալի վերարտադրումը՝ մէկը միւսին յաջորդող եւ անընդհատ

չղթայ կազմող օղակների միջոցով, որոնց պատճառ ու հետեւանք լինելը բացատրելի է: Պատմաբանների համար Սոկրատէսը պէտք է լինի համընդհանուր մարդ: Այն, ինչը իր մէջ անձնական էր եւ ինչը նրան Սոկրատէս էր դարձրել, պատմաբանի համար դոյութիւն չունի; Նա համոզուած է, որ այդ ամէնը կ'անյայտանայ՝ կը մնայ միայն համընդհանուր Սոկրատէսը: Պատմաբանին չի հետաքրքրում ոչ Լիւդովիկոսի ղեցմունքները, ոչ Արդուլ Համիդի արնախում լինելը, ոչ Ստալինի իշխանամոլութիւնը եւ ոչ էլ որեւէ բան, ինչը արտակարգ է ու անսովոր, ինչը չի կարող վերածուել պատմական չղթայի հերթական օղակի:

Դէ՛, ինչպէ՞ս, օրինակ, պատմական օղակ դարձնել Ալեքսանդր Մակեդոնացուն խայթող մոծակին, որի պատճառով նա մահացաւ: Ո՛չ — ասում են պատմաբանները, — սա լուրջ բան չէ, Մակեդոնացին մահացաւ, որովհետեւ պէտք է մահանար, այդպէս ուզում պատմութիւնը: Նա մահացաւ ոչ թէ մոծակի, այլ պատմական օրինաչափութիւնների պատճառով:

Պատմաբանի աչքերով էր նայում կեանքին նաեւ Դոստոեւսկին: Բայց երբ նա ձեռք բերեց երկրորդ տեսողութիւնը՝ այլ բան տեսաւ: Նա տեսաւ, որ մարդու տրամաբանութեան կողմից արդարացուած աշխարհը միակը չէ: Նա փորձեց հեռանալ այդ բոլորի կողմից ընդունուած աշխարհից, մեկուսանալ ընդյատակում, ինչպէս դա անում էին ճգնաւորները:

Դեռ եւս Արիստոտելը հռչակել էր, որ ուրիշ մարդու պահանջ չունեցող մարդը կամ ամէն ինչ իր մէջ ունեցող Աստուած է, կամ էլ վայրի գազան: Դոստոեւսկին լսում էր այդ ձայնը: Ինչ որ մէկը քշում էր նրան անապատ, Աստուած կամ գազան դառնալու երազներով: Բայց մի՞թէ պարզ չէ, որ մարդու համար Աստուած դառնալը անկարելի է, ուստի գազան դառնալը՝ միակ հնարաւորութիւնն է:

Մեր բազմադարեան պատմութիւնը վկայում է, որ մարդիկ ամէն քայլափոխում գազաններ են դառնում, բայց Աստուածներ՝ երբեք: Եւ ընդյատակեայ մարդու փորձն էլ այդ մասին է վկայում: Տեսնենք, թէ ինչ է պատմում իր մասին այդ մարդը.

«Գիտե՞ս, թէ ինչ է ինձ հարկաւոր, դիտե՞ս: Ինձ հարկաւոր է, որ դուք բոլորդ կործանուէք: Ինձ հանդստութիւն է հարկաւոր: Այո, որպէսզի դուք ինձ չխանգարէք, ես մէկ կոպեկով ձեզ բոլորիդ կծախեմ: Աշխա՞րհը կործանուի, թէ՞ ես իմ թէյից հրաժարուեմ: Ես կասեմ, թող աշխարհը կործանուի, իսկ ես իմ թէյը միշտ կխմեմ: Դու հասկանո՞ւմ ես: Իսկ ես հասկանում եմ, որ սրիկայ եմ, ծոյլ, ինքնահաւան, յիմար, ամենածիծաղելին, ամենաստորը, ամենանախանձը, երկրի բոլոր որդերից ամենաապուշը»: Այսպիսի խոստովանութիւններով լեցուն են «Ցիշողութիւններ ընդյատակից» գրքի էջերը: Բայց չզարմանանք: Այդպիսի խոստովանութիւններով լեցուն են նաեւ մեծագոյն սրբերի մեղքերի քաւութեան գրքերը: Նրանք էլ իրենց համարում էին ստոր, թոյլ, անբարոյական էակներ: Քրիստոնէութեան ամբողջ էութիւնը եւ մեղքերի քաւութեան ծարաւը, որը միջնադարի հոգեկան չարժիչն էր, ծագեց այս խոստովանութիւններից:

Ինչո՞ւ Աստուած ստիպուած եղաւ մարդ դառնալ եւ կրել այն տառապանքները, որի մասին պատմում է Աւետարանը: Միայն նրա՛ համար, որ այլ կերպ հնարաւոր չէր քաւել մարդու մեղքերը: Այնքան էր ստորացել մարդը, որ ոչ մի երկրային ջանքերով այլեւս չէր կարելի փրկել նրան: Անհրաժեշտ էին երկնային ջանքեր, անհրաժեշտ էր Աստծոյ Որդու զոհաբերութիւնը: Այդպէս էին տեսնում եւ այդպէս էին մեկնաբանում Աւետարանը աստուածաբանները: Այդպէս էր տեսնում նաեւ Դոստոեւսկին:

«Ցիշողութիւններ մեռեալ տնից» ստեղծագործութեան մէջ Դոստոեւսկին պատմում է յուսահատուած ցմահ կալանաւորների մասին, որոնք փախուստի ապարդիւն փորձեր են կատարում: Նրան հիացմունք էին պատճառում որպէս վճռականութեամբ օժտուած մարդիկ, բայց վճռականութիւնը, որպէս երեւոյթ, Դոստոեւսկու համար մնում էր անբացատրելի: Նա կարողանում էր միայն նշել, որ վճռական մարդիկ շատ քիչ են պատահում: Աւելի ճիշտ կը լինէր ասել, որ վճռական մարդիկ ընդհանրապէս գոյութիւն չունեն: Կան միայն հոչակաւոր որոշումներ, որոնք անբացատրելի են, որովհետեւ ոչ մի բանի վրայ չեն յենւում եւ սկզբունքօրէն բացատրում են բացատրութիւնները: Այդ որոշումները չեն ենթար-

կըլուում ոչ մի տեսակի օրինաչափութիւնների եւ հենց դրա համար էլ դրանք կոչւում են որոշումներ, այլ ոչ թէ տրամաբանական եզրակացութիւններ: Եւ հենց նրա համար են նրանք հռչակաւոր, որ անբացատրելի են:

Երբ Դոստոեւսկին գտնւում էր բանտում, նա, ինչպէս բոլորը, հաւատում էր, որ մարդու ճանաչողութիւնը ունի սահմաններ, որ սահմանները որոշւում են անսասան օրինաչափութիւններով եւ սկզբունքներով: Եւ, յանկարծ, «Յիշողութիւններ ընչայմակից» աշխատութեան մէջ նա յայտարարում է, որ այդպիսի սահմաններ գոյութիւն չունեն: Դոստոեւսկին այդ սահմանները վերագրում է սովորական մարդկանց: Ահաւասիկ.

«Պատի առջեւ անմիջական մարդիկ եւ դործիչները անկեղծօրէն նահանջում են: Նրանց համար պատը, ի տարբերութիւն մեզ, յետ դառնալու պատրուակ չէ: Այդ պատրուակին մենք միշտ ուրախ ենք: Իսկ նրանք ոչ, նրանք պատի առջեւ նահանջում են անկեղծօրէն: Պատը նրանց համար մի ինչ որ հանդստացուցիչ բան է, նահանջի բարոյական թոյլատրութիւն, նոյնիսկ միստիկական մի երեւոյթ: Այ, հենց այս անմիջական մարդն է, որին ես համարում եմ նորմալ: Այդպիսին էր ուզում տեսնել նրան նուրբ բընութիւնը, որ սիրալիր նրան աշխարհ էր բերել: Այդպիսի մարդուն ես չափազանց նախանձում եմ: Այո, նա յիմար է, այդ մասին ես ձեզ հետ չեմ վիճում: Բայց գուցէ նորմալ մարդը հենց յիմար էլ պէտք է լինի, ես ի՞նչ դիտեմ: Գուցէ դա նոյնիսկ դեղեցիկ է»:

Այս խօսքերի մէջ պարունակւում է մեծ փիլիսոփայութիւն, որը Դոստոեւսկին, ինչպէս միշտ, յայտնում է ոչ թէ պատասխանի, այլ հարցի ձեւով: Ընդորում, այդ հարցը դրւում է այնպիսի անորոշ «դուցեների» միջոցով, որ ընթերցողը սուզւում է մի այնպիսի անորոշութեան մէջ, որտեղ ջնջւում են երեւոյթների միջեւ գոյութիւն ունեցող սահմանները: Բայց ամենակարեւորը այն է, որ այդ անորոշութիւնը դառնում է մեզ համար ոչ թէ անհծք, այլ Աստծոյ պարգեւ: «Օ՛, այդ ո՞վ առաջինը ասաց, ո՞վ յայտարարեց, որ մարդը, եթէ նրան լուսաւորեն, եթէ նրա աչքերը բացեն, եթէ նրան բացատրեն իր նորմալ հետաքրքրութիւն-

ները, ապա նա անմիջապէս բարի ու աղնուաբարոյ կը դառնար, որովհետեւ լուսաւորուելով, նա կը տեսնէր, որ բարին համընկնում է իր շահերին, ուրեմն, մարդը, անհրաժեշտութիւնից ելնելով, ստիպուած կը լինէր բարի գործեր կատարել: Օ՛, մանուկներ, Օ՛, ծծկեր երեխաներ: Շա՞հ: Իսկ ի՞նչ է շահը: Ձի՞ կարող արդեօք այնպէս պատահել, որ մարդու շահը, ոչ միայն երբեմն կարող է, այլ հենց նրանումն է կայանում որ դու քեզ ոչ թէ լաւ, այլ վատը ցանկանաս: Իսկ եթէ այդպէս պատահի, ուրեմն ամբողջ օրինաչափութիւնները սուտ են»:

Ի՞նչն է դայթակղեցնում Դոստոեւսկուն: Այն ամէնը, ինչը դիտութեան եւ տրամաբանութեան կողմից ճանաչւում է որպէս բացասական, կամ ընդհանրապէս դոյութիւն չունեցող: Դոստոեւսկին չատ լաւ դիտի, թէ ինչպէս են մտածում բոլորը: Հաստկանում է Դոստոեւսկին նաեւ այն, որ հին ժամանակներից օրինաչափութիւնների հանդէպ արհամարհանքը համարուել է մեծադոյն յանցանք: Եւ ահա մի սարսափելի կասկած է մտնում նրա հոգու մէջ. իսկ դուցէ հենց դրանո՞ւմ են մարդիկ միշտ էլ սխալուել: Եւ զարմանալին այն է, որ Դոստոեւսկին, բոլորովին զուրկ լինելով փիլիսոփայական կրթութիւնից, այդպէս պարզ տեսել է, թէ ինչո՞ւմն է կայանում փիլիսոփայութեան յաւերժական խնդիրը:

Դոստոեւսկու «Ցիչողութիւններ ընդյատակից» երկը չի յիշատակւում ոչ մի փիլիսոփայական դասագրքերում: Մինչդեռ եթէ որեւէ ժամանակ գրուած է եղել զուտ տրամաբանութեան ուսումնասիրութիւն, ապա դա գրաւել է հենց Դոստոեւսկու կողմից եւ գրաւել է «Ցիչոխութիւններ ընդյատակից» երկի մէջ:

Այն, ինչ փորձում է այդ ուղղութեամբ անել Կանտը, բոլորովին անհիմն է: Կանտը խոստովանում է, թէ Հիւմը արթնացրեց իրեն, բայց տեսնենք, թէ ինչպէս է նա ձեւակերպում խնդիրը արթընալուց յետոյ: Ահաւասիկ.

«Դոյութիւն ունի մաթեմատիկա դիտութիւնը, դոյութիւն ունեն կենսաբանական դիտութիւններ: Կարո՞ղ է դոյութիւն ունենալ նաեւ մետաֆիզիկա դիտութիւնը, որի տրամաբանական կառուցուածքը լինի այնպիսին, ինչպիսին է արդէն իրենց արդարացրած բնական դիտութիւնների տրամաբանութիւնը»:

Եւ սա Կանտը համարում է արթնացում: Եթէ այդքան ուղում էր արթնանալ Կանտը, նա պէտք է առաջին հերթին պարզէր, թէ արդեօք այդքան արդարացրե՞լ են իրենց բնական դիտութիւնները եւ արդեօք դրանց կողմից հռչակուած ճշմարտութիւնը՝ ճշմարտութի՞ւն է: Արդեօք չի՞ կարող պատահել, որ նրանց կողմից մատուցուած ճշմարտութիւնը խաբեբայութիւն է ու երեւակայական: Այդպէսի հարց Կանտը չի դնում, որովհետեւ նա ամենեւին էլ չի արթնացել իր դիտական քնից: Նա համոզուած է, որ դիտութիւնը արդարացրել է իրեն իր «յաջողութիւններով», այսինքն, այն «չահերով», որոնք ստացել են մարդիկ: Եւ, ուրեմն, դիտութիւնը դատաստանի առջեւ կանգնացնելու պատճառ չկայ, դիտութիւնը՝ ինքն է դատաւոր: Եւ, եթէ մետաֆիզիկան ուղում է գոյութիւն ունենալ, նա պէտք է նախնապէս դրա համար ստանայ մաթեմատիկայի եւ բնական դիտութիւնների թոյլատրութիւնը: Մնացածը յայտնի է:

Գիտութիւնները դիտութիւններ դարձան միայն նրա չնորհիւ, որ իրենց ձեռքի տակ ունէին բոլորի կողմից ընդունուած մի քանի սկզբունքներ եւ օրինաչափութիւններ: Այդ սկզբունքների եւ օրինաչափութիւնների օգտագործման ոլորտը սահմանափակ է եւ, ուրեմն, մետաֆիզիկան որը, ըստ Կանտի, ձգտում է անսահմանութեանը՝ անկարելի է: Այդպէս եզրակացրեց Կանտը:

Իսկ Դոստոեւսկին, որը ոչ մի պատկերացում չունէր Կանտի մասին, ձեւակերպեց նոյն հարցը, բայց պատասխանելիս նա շատ աւելի արթուն գտնուեց, քան Կանտը: Դոստոեւսկին յանդեց այն եզրակացութեան, որ ոչ թէ դիտութիւնն է դատում մետաֆիզիկային, այլ մետաֆիզիկան դիտութեանը: Յարգենք մեր սահմանափակութիւնը եւ երկրպագենք նրան, — ասում է Կանտը, — քանզի Աստուած չի պահանջում մեզանից անկարելին:

«Սուտ է, — բացականչում է Դոստոեւսկու ընդյատակեայ մարդը, — Աստուած պահանջում է անկարելին: Աստուած միայն անկարելին է պահանջում: Այդ դո՛ւք էք, որ նահանջում էք պատի առջեւ, եւ պատի մէջ գտնում էք մի լինչ որ հանդստացնող ու վերջնական բան: Իսկ ես ձեզ յայտարարում եմ, որ ձեր պատերը, ձեր անկարելին, միայն նահանջելու առիթ է ու պատրուակ եւ

ձեր Աստուածը, այն Աստուածը, որ չի պահանջում անկարելին, ոչ թէ Աստուած է, այլ նողկալի մի կուռք, այսինքն այն փոքր ու մեծ չահերից մէկը, որից այն կողմ դուք երբեք ոչ դնացել էք եւ ոչ էլ կը դնաք: Դուք համարում էք, որ մետաֆիզիկան անկարելի է, ուրեմն, ես մետաֆիզիկայից բացի ոչ մի ուրիշ բանի մասին ոչ կը խօսեմ եւ ոչ էլ կը մտածեմ»:

Երբ Կանտը լսում է «օրինաչափութիւն» բառը, նա անմիջապէս հանում է դլխարկը: Նա չի ուզում, չի համարձակւում վիճել: Եթէ օրէնք է, ուրեմն՝ իշխանութիւն է: Եթէ իշխանութիւն է, ուրեմն անհրաժեշտ է ենթարկուել, որովհետեւ մարդու բարձրադոյն բարոյականութիւնը հնազանդութեան մէջ է: Բայց իր հարկ է, Կանտի օրէնքները՝ մարդկային օրէնքներ չեն: Մարդը՝ լինքը բնութեան մասնիկ է եւ ենթարկւում է բնական օրինաչափութիւններին: Վերջնական իշխանութիւնը պատկանում է ոչ թէ կենդանի, այլ վերացական մարդուն: Ուրիշ խօսքով, ամենից առաջ կանդնած է օրինաչափութիւնը: Ըստ Կանտի, ոչ թէ բնութիւնը, ոչ թէ մարդն է թելադրում օրէնքները, այլ մարդուն եւ բնութեանը թելադրւում են օրէնքներ հենց օրէնքների կողմից: Այստեղից էլ բխում էր սովորական մարդու վարքադծի օրինաչափութիւնը. «Վարուիր այնպէս, որ քո վարքադծի սկզբունքը դառնայ համընդհանուր օրինաչափութիւն»: Այսինքն, օրինաչափութիւնն այն է, ինչով կարելի է արդարացնել քո վարքադիծը:

Դոստոեւսկին իր երկրորդ տեսողութեան չնորհիւ հասկացաւ, թէ ինչպէս պէտք է ձեւակերպուի փիլիսոփայութեան դլխաւոր հարցը, այսինքն այն հարցը, թէ արդեօք մետաֆիզիկայի դոյութիւնը, որպէս դիտութիւն, հնարաւո՞ր է: Սակայն, առաջինը՝ ինչո՞ւ մետաֆիզիկան պէտք է անպայման դիտութիւն լինի: Երկրորդը՝ երբ մենք խօսում ենք մետաֆիզիկայի որեւէ ձեւով դոյութեան մասին, ի՞նչ արժէք ունի մեզ համար դոյութիւն բառը:

Դիտութիւնը, որպէս իր դոյութեան համար անհրաժեշտ պայման, ենթադրում է համընդհանուր, բոլորի կողմից ճանաչուած դատողութիւնների ներկայութիւն: Դոստոեւսկին հիանալի հասկանում էր, թէ ինչու է դիտութիւնը այդքան կարօտ համընդհանուր ճշմարտութիւնների: Որովհետեւ փաստերը, ինքնըստինքեան,

մեզ չահ չեն բերում: Ի՞նչ օգուտ կայ նրանում, որ մենք նկատեցինք, թէ այս քարը տաքացաւ արեւի տակ, թէ այս փայտը չի սուզւում ջրի տակ, թէ այս մի բաժակ ջուրը ծարաւ է յագեցնում: Գիտութեանը առանձին փաստեր հարկաւոր չեն, նա այդ առանձին փաստերով չի հետաքրքրւում: Նրան անհրաժեշտ է այն, ինչը առանձին փաստերը դարձնում է օրինաչափութիւն: Երբ մենք իրաւունք կը ստանանք ասելու՝ արեւը ՄԻՇՏ տաքացնում է ԲՈԼՈՐ քարերը, փայտը ԵՐԲԵՔ ՈՉ ՄԻ ՋՐՈՒՄ չի սուզւում, ջուրը ՄԻՇՏ յագեցնում է ԲՈԼՈՐ ծարաւները, միայն այդ ժամանակ մենք գործ ունենք գիտութեան հետ: Ուրիշ խօսքով, գիտութիւնը գիտութիւն է դառնում միայն այն դէպքում, երբ մեզ յաջողւում է առանձին փաստերի միջոցով տեսնել այն տեսանելի օրինաչափութիւնները, ինչը–որ արդէն վաղուց իշխում է Աստուածների եւ ուրուականների փոխարէն:

Ինչո՞ւ օրինաչափութիւնների իշխանութիւնը մեզ համար այդքան համակրելի է: Միայն այն պարզ պատճառով, որ չահ է բերում: Եթէ մենք գիտենք արեւի տաքացնելու օրինաչափութիւնը, ապա քար տաքացնելու անհրաժեշտութեան պահին մենք անմիջապէս կ'օգտուենք այդ օրինաչափութիւնից:

Բայց Դոստոեւսկին գիտէր նաեւ այն, որ սկզբունքների եւ օրինաչափութիւնների առջեւ երկրպագութիւնը թափանցել էր նաեւ բարոյականութեան ոլորտը: Բոլորը պէտք է վարուէին այնպէս, որ չխախտուէին այսպէս կոչուած բարոյականութեան օրինաչափութիւնները: Բայց որտեղից վերցնել բարոյականութեան օրինաչափութիւնները: Մի՞թէ Աւետարանից: Մի՞թէ այն դրքից, որը գրուել է անկիրթ ու կիսագրագէտ մարդկանց կողմից: Բայց Դոստոեւսկին ուրիշ ելք չէր տեսնում: Նա ստիպուած էր Ս. Օգոստինոսի պէս բացականչել.

«Բարձրանում են տգէտները եւ հիացնում են երկինքը»: Այո, նա համոզուեց, որ երկինքը հիացնելու համար անհրաժեշտ է հրաժարուել գիտականութիւնից եւ այն հիմնական դաղափարներից, որոնցմով մենք ներծծուել ենք կաթի հետ միասին:

Դոստոեւսկին իր ամբողջ էութեամբ սկսում է հասկանալ, որ գիտական մտածելակերպը մարդկանց ստիպում է սահմանագծել,

թէ ինչն է երազ եւ ինչը իրականութիւն, ինչը՝ կարելի է, ինչը՝ ոչ, ինչը՝ բարիք է, ինչը՝ չարիք, ինչը՝ պարտադիր է, ինչը՝ ոչ: Նա այնքան յստակ է արտայայտում իր բողոքը այդ սահմանների հանդէպ, որ դժուար թէ որեւէ հոչակաւոր փիլիսոփայ կամ անիշխանական համարձակուէը այդ անել այդքան համարձակօրէն: Ահա ընդյատակում գտնուող մարդու դատողութիւնը.

«Ես չարունակում եմ խօսել ամուր ջղերով մարդկանց մասին... Այս պարոնները... անկարելիութեան առջեւ անմիջապէս հնազանդւում են: Անկարելութիւնը նշանակում է քարէ պատ: Ի՞նչ քարէ պատ: Դէ, ի հարկ է, բնութեան օրինաչափութիւնները, բնական գիտութիւնների եզրակացութիւնները, մաթեմատիկան: Դէ, եթէ ապացուցեն քեզ, օրինակ, որ կապիկից ես առաջացել, էլ, մի՛ ծոմռի դէմքդ, ուրեմն այդպէս է: Դէ, եթէ ապացուցեն քեզ, որ փաստօրէն քո մի կաթիլ սեփական ճարպը քեզ համար պէտք է աւելի կարեւոր լինի, քան հազար քեզ նման էակներ, ուրեմն ընդունի, անելիք չունես, որովհետեւ երկու անգամ երկու՝ չորս է: Փորձիր առարկել: Քեզ կ'ասեն՝ ի՞նչ է, ցնդե՞լ ես, առարկել չի կարելի. չէ՞ որ երկու անգամ երկու՝ չորս է: Բնութիւնը քեզ չի հարցնում, նա բոլորովին անտարբեր է ձեր ցանկութիւնների նկատմամբ, նրան բոլորովին չի հետաքրքրում, թէ ինչ էք դուք մտածում իր օրէնքների մասին, եւ որքան են այդ օրէնքները ձեզ դուր գալիս: Դուք պարտաւոր էք ընդունել այդ օրէնքները այնպէս, ինչպէս նրանք կան: Պատը մնում է պատ: Բայց, Աստուա՛ծ իմ, ես ի՞նչ գործ ունեմ բնութեան օրինաչափութիւնների եւ թուաբանութեան հետ, եթէ այս կամ այն պատճառով այդ օրէնքները ինձ դուր չեն գալիս: Ի հարկէ, ճակատով ես չեմ քանդի այդ պատը, եթէ քանդելու համար ուժերս չեն բաւարարում, բայց ես չեմ համակերպւում այդ պատի հետ միայն նրա համար, որ պատը քարից է, իսկ ես ուժ չունեմ: Կարծես թէ այդ քարէ պատը իսկապէս կարող է հանդստացնել՝ միայն այն պատճառով, որ երկու անգամ երկու՝ չորս է: Օ՛, անհեթեթութիւնների անհեթեթութիւն»:

Դոստոեւսկու այս փորձերը՝ յաղթահարել անյաղթահարելի համընդհանուր դաղափարները, չմեղուցիչ են: Ցիրաւի, ինչ-

պէ՞ս կարելի է չնահանջել պատի առջեւ, — մտածում ենք մենք: Ինչպէ՞ս կարելի է հակադրուել բնութեանը, որը իր դործը կատարում է առանց մեզ հարցնելու: Ինչպէս կարելի է մեր տկար ես-ով ոչ միայն հակադրուել հզօր բնութեանը, այլեւ անհեթեթութիւնների անհեթեթութիւն անուանել հակառակ տեսակէտը: Բայց եթէ Դոստոեւսկին կասկածում է, թէ որքանով է տրամաբանութիւնը իրաւասու դատելու անհնարինի մասին, ապա նա նոյնպէս կասկածում է, թէ որքանով է տրամաբանութիւնը իրաւասու դատել կարելիի անսահմանութեան մասին: Եթէ տրամաբանութիւնը չի որոշում կարելին ու անկարելին, ապա՝ ո՞վ:

Դոստոեւսկուց 1500 տարի առաջ մեծանուն փիլիսոփայ Պլոտինը, որը Դոստոեւսկու նման փորձում էր դուրս գալ մեր դիտելիքներով կաշկանդուած սահմաններից, պատում է, որ այդպիսի թռիչքից յետոյ առաջին տպաւորութիւնը՝ վախն էր: Թուում էր, թէ ամէն ինչ անյայտացաւ եւ մնաց միայն մաքուր «ոչինչ»-ը: Բայց մենակութեան սարսափի հետ միասին ի յայտ է գալիս հիացմունքը: Մեծ հիացմունքի համար պահանջւում է մեծ սարսափ: Իմիջիայլոց, Պլոտինը այն փիլիսոփան էր, որը, իմ կարծիքով, տուել է փիլիսոփայութեան միակ ճշմարիտ սահմանումը: «Ի՞նչ բան է փիլիսոփայութիւնը» հարցին նա պատասխանել է՝ ամենակարեւորը: Այս պատասխանով Պլոտինը քանդում է բոլոր այն սահմանումները, որոնք հին ժամանակներից ի վեր դոյութիւն ունէին փիլիսոփայութեան, կրօնի եւ արուեստի մէջ: Զէ՞ որ ե՛ւ արուեստագէտը ե՛ւ մարդարէն որոնում են նոյնպէս ամենակարեւորը: Դրանից բացի, Պլոտինի սահմանումը ոչ միայն չի դնում փիլիսոփայութիւնը դիտութեան իշխանութեան տակ, այլ եւ ուղղակի հակադրում է դիտութեանը:

Գիտութիւնը առարկայական է ու անդգայ: Նրա համար ամէն ինչ նոյնն է, նա անտարբեր է: Նա հանդիստ նայում է մեղաւորներին եւ արդարներին ու չի ղգում ոչ խղճմտանք, ոչ էլ զայրոյթ: Իսկ այնտեղ, որտեղ տիրում է անտարբերութիւն, որտեղ երեւոյթները ենթարկւում են ոչ թէ պնահատականների, այլ՝ դասակարգութեան, այն տեղ չի կարող լինել կարեւոր եւ ոչ-կարեւոր, եւ, ուրեմն, ըստ Պլոտինի, փիլիսոփայութիւնը չի կարող դիտու-

թիւն լինել: Աւելին, նրա բախումը գիտութեան հետ անխուսափելի է:

Եւ դա հասկանալի է, որովհետեւ չափազանց սխալւում են այն մարդիկ, որոնց կարծիքով, գիտութիւնը միայն փաստեր է հաւաքում: Փաստերը ինքնըստինքեան գիտութեանը պէտք չեն, նոյնիսկ այնպիսի գիտութիւններին, ինչպիսիք են՝ բուսաբանութիւնը, կենդանաբանութիւնը, պատմութիւնը, աշխարհագրութիւնը եւ այլն: Գիտութիւնը տեսութիւն է պահանջում, այսինքն այն, ինչը՝ մէկ անգամ տեղի ունեցած մեր աչքերի համար պատահական երեւոյթը դարձնում է բացատրելի անհրաժեշտութիւն: Գիտութիւնից այդ իրաւունքը խլել, նշանակում է նրան վար իջեցնել իր պատուանդանից: Գիտութիւնը տրամաբանութեան դատն է: Այդ տրամաբանութիւնը որոշում է, որ նիւթը եւ էներգիան անոչնչանալի են, իսկ մենք անձերս՝ ոչնչանալի: Ու չնայած նրան, որ տրամաբանութիւնը յանդել է այդ եզրակացութիւններին իր սեփական օրինաչափութիւններից ելնելով, մեզանից եւ ոչ մէկը չի համարձակւում առարկել, չի համարձակւում նոյնիսկ հարցնել, թէ ինչո՞ւ տրամաբանութիւնը հռչակեց այն անարդար օրէնքը, որի համաձայն մատերիան չի ոչնչանում, իսկ Նարեկացին, Վարուժանը ու Կոմիտասը ոչնչանում են:

Բայց թողնենք այս օրէնքի անարդարութեան կողմը: Ինչպէ՞ս պատահեց, որ անվերջ գոյութիւն ունեցող աշխարհում, խակապէս, չկորաւ ոչ մի ատոմ եւ ոչ մի էներգիա: Չէ որ սա հրաշք է: Եւ այս հրաշքի առջեւ խոնարհուեց մարդը:

Աստծոյ մասին ասուած է, թէ «սիրիր Նրան ամբողջ սրտով»: Գիտութեան համար այդ պատգամը աւելորդ է, առանց հրամանի էլ կը սիրեն:

Առանձին փաստերից օրինաչափութիւններ կազմելու հրաշքը այնքան դերեց մարդկանց, որ նրանք ընդունեցին, թէ տրամաբանութիւնը դատում է, բայց դատի ենթակայ չէ:

Դոստոեւսկին իր երկրորդ աչքերով չուտով տեսաւ, որ փորձը, որից մարդիկ սկսում են իրենց գիտութիւնը, ոչ թէ իրականութիւն է, այլ՝ տեսութիւն: Ու տեսաւ նա նաեւ այն, որ տեսութիւնը չի կարող արդարացուել ոչ մի յաջողութեամբ եւ հրաշ-

քով: Դոստոեւսկին հարց է տալիս՝ արդեօք մի՞ակ իշխելու իրաւունքը տրուած է տրամաբանութեանը, արդեօք նա այդ իրաւունքը չի՞ զաւթել անօրինական կարգով: Այսինքն, Դոստոեւսկին «համընդհանուրի» եւ առանձին մարդու վէճը դարձնում է ոչ թէ ճշմարտութեան, այլ իրաւունքի վէճ:

Համընդհանուրը զաւթել է իշխանութիւնը, պէտք է նրան զահից դցել, բայց դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է ըմբռնել այդ զաւթման անօրինականութիւնը, եւ հասկանալ, որ թշնամին ոչ թէ սեփական ոտքերի վրայ է կանգնած, այլ մեր այն հաւատքի վրայ, թէ իսկապէս այդպիսի ոտքեր գոյութիւն ունեն:

Դոստոեւսկին տատանւում է՝ իսկ դուցէ դիտական ճշմարտութիւնները նման են աքաղաղի այն զգացմունքներին, որոնց համաձայն նա չի կարողանում դուրս գալ իր չուրջը կաւճով գրծուած շրջանակից: Յայտնի է, որ աքաղաղը պտտւում է կաւճով գծած շրջանակի մէջ եւ դուրս չի գալիս այնտեղից, կարծես թէ այդ շրջանակը քարերից շարուած պատ լինի: Եւ եթէ աքաղաղը խօսել իմանար ու կարողանար արտայայտել իր մտքերը, ապա, անտարակոյս, նա կը ստեղծէր մի տեսութիւն, որում կաւճով գրծած սահմանագիծը կը ներկայանար իբրեւ աքաղաղների կարողութեան սահմանը: Իսկ եթէ դա այդպէս է, ուրեմն, դիտութեան սկզբունքների դէմ պէտք է պայքարել ոչ թէ ապացոյցներով, այլ ուրիշ միջոցներով:

Ապացուցները եւ տրամաբանութիւնը օգտակար էին այնքան ժամանակ, քանի դեռ գոյութիւն ունէին անապացուցելի «աքսիոմ» կոչուող հիմնաքարերը, որոնց վրայ կառուցուած է դիտութիւնը

Էւկլիդեան կոչուող ամբողջ երկրաչափութիւնը կառուցուած է այն ՀԱԻԱՏՔի վրայ, թէ երկու կէտերի միջեւ ամենակարճ տարածութիւնը ուղիղ գիծն է: Լոբաչեւսկին «ՉՀԱԻԱՏԱԾ» դրան եւ ընդունելով մէկ ուրիշ սկզբունք, կառուցեց մի նոր երկրաչափութիւն:

Ի հարկէ, այս մասին ոչինչ չգիտէր Դոստոեւսկին, բայց իր երկրորդ աչքերով նա տեսաւ, որ «երկու անգամ երկու, պարոնայք, սա արդէն ոչ թէ կեանք է, այլ մահուան սկիզբ: Յամե-

նայնդէպս, մարդիկ միշտ էլ վախեցել են երկու անգամ երկուսից, իսկ ես հիմա էլ վախենում եմ: Ընդունենք, որ մարդը միայն ներանով է ղբաղուած, որ որոնում է այդ երկու անգամ երկուսի պատասխանը: Անցնում է ովկիանոսների վրայով, կեանք է զոհաբերում երկու անգամ երկուսի պատասխանը գտնելու համար, բայց, Աստուած վկայ, իրականում վախենում է պատասխանը գտնելուց: Բայց երկու անգամ երկու չորս է, — սա իմ կարծիքով միայն լկտիութիւն է: Երկու անգամ երկուսը ձեռքերը գրպանը դրած, նայում է մեզ հպարտութեամբ եւ քմծիծաղով թքում է մեր երեսներին, նա կանդնած է մեր ճանապարհի վրայ: Ես համաձայն եմ, որ «երկու անգամ երկու՝ չորսն»-ն հիանալի բան է, բայց եթէ մենք ամէն ինչ պէտք է դուվաբանեաք, ապա ընդունենք, որ «երկու անգամ երկու՝ հինգ է», — նոյնպէս պակաս քնքշութիւն չունի»:

Գուցէ փիլիսոփայական կրթութիւն ունեցող մարդկանց վերադուվեցնեն Դոստոեւսկու այս պրիմիտիւ թուացող դատողութիւնները, բայց բանը նրանումն է, որ տրամաբանութիւնը մերժում է մեզ վիճաբանութիւն վարել իր իրաւունքների վերաբերեալ: Ճանաչել այդ վիճաբանութեան իրաւունքը՝ կործանարար է նրա համար: Տրամաբանութիւնը հրաժարւում է կանդնել դատարանի առջեւ: Նա ուզում է լինել եւ օրէնսդրական եւ դատական մարմին: Նա, ով չի ցանկանում ճանաչել տրամաբանութեան այդ իրաւունքը, պատժւում է եւ անէծքի ենթարկւում, նա հեռացւում է համընդհանուր աշխարհիկ եկեղեցուց: Այստեղ վերջանում է վիճելու հնարաւորութիւնը, այստեղ սկսւում է կենաց եւ մահու կատաղի պայքարը:

Դոստոեւսկու ընդյատակեայ մարդը զրկուած է օրէնքի հովանաւորութիւնից ու պաշտպանութիւնից: Օրէնքը, ինչպէս մենք գիտենք, պաշտպանում է միայն նիւթը եւ էներգիան: Իսկ մարդը, որքան էլ որ նա մեծ լինի, Բեթհովենը, Զարենցը ու ինքը՝ Դոստոեւսկին, սրանք բոլորն էլ ոչ մէկի կողմից պաշտպանուած չեն: Եւ խղճուկ ընդյատակեայ մարդը համարձակւում է պաշտպանել ինքն իրեն: Բայց նա գիտի, որ վէճը տրամաբանութեան դէմ՝ անօգուտ է, եւ նա ընտրում է միակ ճիշտ եւ հնարաւոր ճանապար-

հը՝ նա ծաղրում է տրամաբանութիւնը եւ հրաժարւում է բոլոր տրամաբանական ապացոյցներից:

Դոստոեւսկին չի վիճում այն պարզ պատճառով, որ քայլ դիտակցում է, որ եթէ գործը հասնի վէճի, ապա տրամաբանութիւնը կը յաղթի: Եւ հենց այստեղ է Դոստոեւսկու բոլոր փիլիսոփայական հարցերի վերջնական պատասխանը: Նա պատասխան չունի: Նա կանգնած է մի ահաւոր կշեռքի առջեւ, որտեղ մէկ կողմի վրայ դրուած է ծանր բնութիւնը, իր սկզբունքներով եւ օրինաչափութիւններով, իսկ միւս կողմը նա դնում է իր երկրորդ աչքերով տեսած, կշիռ չունեցող եւ ոչնչով չպաշտպանուած «ամենակարեւորը», — ո՞րը կը քաշի:

Այս հարցի պատասխանը Դոստոեւսկին չգիտի: Եւ հենց դրանով նա զերազանցում է բոլոր փիլիսոփաներին, որովհետեւ չդրտնուեց եւ ոչ մէկը, որի համար երկու անգամ երկուսի պատասխանը չգերակշռէր զգացմունքներով ընկալած ճշմարտութեանը:

Այն, ինչ հասկացել էր Դոստոեւսկին եւ ինչը յամառօրէն չէին ուզում հասկանալ փիլիսոփաները, մեծ ուշացումով հասկացաւ նաեւ Տոլստոյը:

ԼԵՒ ՏՈԼՍՏՈՅԸ

Արիստոտելը ասում էր, որ ամէն մի երազ տեսնող գտնւում է իր սեփական աշխարհում, իսկ բոլոր արթունները ունեն մէկ ընդհանուր աշխարհ:

Այս միտքը ոչ միայն Արիստոտելեան փիլիսոփայութեան հիմնաքարն է, այլեւ բոլոր նրանից առաջ ու նրանից յետոյ գոյութիւն ունեցած փիլիսոփայութիւնների: Այս միտքը միաժամանակ ընդունւում էր որպէս ճշմարտութիւն եւ ողջամտութիւն: Իսկ կարո՞ղ է արդեօք մարդը հրաժարուել ողջամիտ ճշմարտութիւնից: Ոչ, չի կարող, որովհետեւ ինքն՝ Աստուած երբեք չի պահանջում անկարելին: Սակայն, մահը այս տեսակէտի հետ հաշուի չի նստում: Նա ունի իր սեփական ճշմարտութիւնը, սեփական օրինաչափութիւնները եւ սեփական հնարաւորութիւնները: Այդ օրինաչափութիւնները չեն հաշուում մեր սովորական պատկերացումների հետ եւ մենք չենք կարողանում թափանցել նրա գաղտնիքների մէջ:

Միայն առանձնայատուկ մարդիկ, հոգեկան լարուածութեան բացառիկ պահերին կարողանում են հասկանալ մահուան առեղծուածային լեզուն: Այդ պահերը ապրելու երջանկութիւնը չնորհուեց Տոլստոյին:

Մենք սկզբում արդէն պատմեցինք, թէ ինչպէս «Ռելատարի նօթագրութիւններում» Տոլստոյը նկարագրում է իր տարօրինակ վիճակը, երբ առանց որեւէ պատճառի ինքը յանկարծ ընկել է մի այնպիսի կացութեան մէջ, որտեղ «մահ եւ կեանք խառնուել էին իրար», որտեղ «առանց որեւէ պատճառի առաջանում էր կործանուող կեանքիս սարսափը»:

Այն, ինչ պատահեց Տոլստոյի հետ, սպառնում է խախտել մարդու բնական բանականութիւնը: Այսօր, առանց որեւէ պատճառի այդ վտանգը սպառնում է Տոլստոյին, վաղը այդ նոյն վիճակի մէջ կարող են ընկնել ուրիշները, իսկ օրերից մի օր էլ այդ վարակը կարող է տարածուել ամբողջ մարդկութեան վրայ:

Եթէ լրջօրէն մօտենանք «Խելագարի նօթատրութիւններում» պատմածին, ապա մարդկութիւնը կանգնած է ընտրութեան առջեւ. կամ, ինչպէս վարւում էին միջին դարերում բոր հիւանդութեամբ տառապողների հետ, մեկուսացնել Տոլստոյին հասարակութիւնից, ճանաչելով նրան որպէս խելագար, կամ ճանաչել նրա օրինական ապրումները եւ սպասել, որ կը գայ ժամանակը, երբ ամբողջ մարդկութիւնը կը հասնի այդ վիճակին եւ արթուն մարդկանց ընդհանուր աշխարհը կը փլի:

Արթուն եւ մէկ աշխարհ ընկալող մարդիկ այն ժամանակ կը վերածուեն էակների, որոնք ոչ թէ երազում, այլ իրականութեան մէջ ամէն մէկը կ'ունենայ իր սեփական աշխարհը: Բայց, ինչպէս մենք դիտենք, ողջամտութիւնը եւ ողջամտութիւնից ծնուած դիտութիւնը չի տատանւում այդպիսի ընտրութիւնների առջեւ: Տոլստոյը, իր ցնորային տեսիլքներով հանդերձ, սխալ է:

Ճիշտ է մարդկութիւնը իր համընդհանուր դաղափարներով եւ պարզ պատճառական կապերով: Այսպիսին կը լինէր ողջամիտ մարդկութեան պատասխանը եւ Տոլստոյը, եթէ աշխարհահռչակ գրող չլինէր, իր կեանքի երկրորդ կէսը ստիպուած կը լինէր անցկացնել հոգեբուժարանում, որպէս հասարակութեան համար վտանգաւոր մի մարդ: Բայց Տոլստոյը Ռուսաստանի պարծանքն է, եւ ինչ էլ որ նա ասի, նրան չարունակում են լսել, նրա հետ չարունակում են հաշուի նստել: Իսկ նա ասում է. «Այսօր ինձ քննութեան տարան նահանգի վարչարանը եւ կարծիքները բաժանուեցին: Նրանք վիճեցին եւ որոշեցին, որ ես խելագար չեմ: Բայց նրանք այդպէս որոշեցին, որովհետեւ ես ինձ զուսպ պահելու համար լարել էի ամբողջ ուժերս եւ քննութեան ժամանակ չարտայայտուեցի: Իսկ չարտայայտուեցի, որովհետեւ վախենում էի զժանոցից, վախենում եմ, որ այնտեղ ինձ կարգելեն իրականա-

ցընել իմ դիժ դործերը: Նրանք ինձ առողջ ճանաչեցին, բայց ես հո դիտեմ, որ խելագար եմ»:

Այստեղ անկասկած ճիշտ է Տոլստոյը, այլ ոչ թէ նրանք: Ամբողջ կեանքում Տոլստոյը ղղում էր, որ մի ինչ որ բան անընդհատ դուրս էր մղում իրեն սովորական աշխարհից: Դեռեւս մանկական հասակում նա մէկ անգամ ականատես է եղել, թէ ինչպէս են ծեծում մի տղայի: «Ես ամբողջ օրը լալիս էի, — դրում է նա, — եւ այդ լացը իմ խելագարութեան առաջին արտայայտութիւնն էր: Յետոյ ինձ պատմեցին, թէ ինչպէս էին տանջում Յիսուսին: Եւ կրկին ես դուրս եկայ իմ սովորական վիճակից եւ սկսեցի դըլուխս պատին զարկել»:

Ի հարկէ, ոչ միայն Տոլստոյն է մանուկ հասակում յուզուել չրջապատող անարդարութիւնից: Բայց չատերը յուզւում եւ մոռանում են, տպաւորութիւնները ինքնըստինքեան կորչում են ուրիշ տպաւորութիւնների ովկիանոսում: Բայց Տոլստոյը ոչ միայն չէր կորցնում իր մանկական տպաւորութիւնները, այլեւ ինչ որ անհասկանալի խնամքով պահպանում էր այն, քաջ գիտակցելով, որ կը դայ նաեւ այս տպաւորութիւնները ծնող օրինաչափութիւնների իշխանութեան ժամանակը: Իսկ մինչ այդ, նա ապրում էր մեծագոյն լարուածութեան տակ, որովհետեւ դտնուելով իր սեփական աշխարհում, տեսնելով իր երկրորդ աչքերով, արտաքուստ նա ապրում էր ինչպէս բոլորը:

Մինչեւ 50 տարեկան հասակը Տոլստոյը չանում էր փակել իր երկրորդ աչքերը եւ տեսնել այն, ինչ տեսնում էին բոլորը: Նրա դրչի տակից դուրս են դալիս «Պատերազմ եւ խաղաղութիւն», «Աննա Կարենինա», Ռոստովները, Բեզուխովները, Բոլկոնսկիները, — սրանք բոլորը Տոլստոյի սովորական աչքերով տեսած հերոսներն են: Բայց ահա 1903 թուին, երբ Տոլստոյը արդէն 70-ից անց էր, նա գրում է մի կարճ պատմուածք՝ «Պարահանդէսից յետոյ» վերնադրով, որտեղ առերեսում է տալիս իր սովորական եւ երկրորդ աչքերով տեսածին, իսկ աւելի սարդ, առերեսում է տալիս իր կեանքի առաջին եւ երկրորդ կէսերին:

Այդ պատմուածքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում նկարադրւում է դեղեցիկ, ուրախ եւ հետաքրքիր մի պարա-

հանդէս: Նկարագրուում է այնպիսի վարպետութեամբ, որին հասասարը չի ունեցել ռուսական դրականութիւնը ոչ Տոլստոյից առաջ, ոչ էլ նրանից յետոյ: Պարահանդէսը, իսկապէս, դեղեցիկ է. երաժշտութիւնը, պարերը, խմիչքները, վերնախաւի աղնուապատրոյ ու համակրելի մարդիկ, չքնաղ երիտասարդ հերոսուհին եւ նրան սիրահարուած երիտասարդը, որի անունից չարադրուում է պատմութիւնը, — այս ամէնը կազմում են մի դեղեցիկ տեսարան:

Իսկ պարահանդէսից մէկ ժամ յետոյ, երբ սիրահարուած, երջանիկ, պարահանդէսում նուրբ զգացմունքներ ապրած մեր երիտասարդը տուն է վերադառնում, փողոցում նա ականատես է լինում մի այլ տեսարանի: Ձինուորները ծեծում են բանակը լքած մի թաթար երիտասարդի: Եւ այդ անտանելի պատիժը կատարուում է իր սիրոյ առաւրկայի հօր ղեկավարութեամբ: Այն նոյն դընդապետի, որը այնքան դեղեցիկ էր պարում պարահանդէսի ժամանակ եւ այնքան սիրալիր էր:

Այս պատմուածքով Տոլստոյը, կարծես թէ, ուզում էր ասել, որ իր կեանքի առաջին կէսում ինքը նկարագրում էր կեանքը որպէս մի դեղեցիկ պարահանդէս, իսկ երկրորդ կէսում, իր կողմից ընկալուած կեանքը նմանուում էր թաթար ղինուորի տանջանքներին:

Շատերը Տոլստոյի այսպէս կոչուած տարօրինակութիւնները բացատրում են սարսափով, որը իբր թէ դոյութիւն ունէր նրա մօտ մահուան հանդէպ: Բացատրութեան այս ձեւը նոր չէ: Թերեւս Արիստոտելը յստակօրէն դծել էր այն դիծը, որը պէտք է սահմանն ծառայեր մարդկային որոնումների համար: Ըստ նրա, չէր կարելի մօտենալ այն դծին, որտեղ թաքնուած էին վերջին դաղտնիքները, ի դէմս մահուան դաղտնիքի: Կարելի չէր թոյլ տալ, որ մահուան դաղտնիքի մասին մտորումները իշխանութիւն հաստատեն մարդու հոգում:

Սակայն, բոլորովին այլ էր Պլատոնի ուսմունքը: Իր ամենափայլուն երկխօսութիւններից մէկում նա անկեղծօրէն հաղորդեց մարդկանց այն մեծ ճշմարտութիւնը որ փիլիսոփայութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մահուան պատրաստութիւն եւ մահուան ընթացք: Եւ եթէ ճիշտ է Պլատոնը, այլ ոչ թէ Արիստոտելը, ապա

Տոլստոյը իր կեանքի վերջին տասնամեակում հանդէս եկաւ որպէս իսկական փիլիսոփայ: Այն ամէնը, ինչ նա անում էր, ունէր մէկ նպատակ. թուլացնել իր կապերը սովորական աշքերով տեսնուելիք աշխարհի հետ, իր կեանքի նաւից մի կողմ նետել այն բեռը, որը հասասարակչռութիւն է տալիս նաւին, բայց միաժամանակ արգելում է դէտնից կտրուելը, Եւ, որովհետեւ այդ բեռը դրեթէ բոլորի համար մի թանդարժէք գանձ է, նրան չատերը այդ բեռը նետելու համար յանցաւոր են համարում:

Նա վիրաւորում է սրբութիւնները, սասատում է հասարակական հիմքերը, թունաւորում է մարդկային ուրախութիւնները: Նա բերում եւ կարող է բերել միայն տառապանք: Եւ դա չէր կարող չազդել չրջապատի վրայ: Ահա թէ ինչ է ասում Տոլստոյի կնոջը նրա քոյրը.

«Եթէ դու իմ քոյրը չլինէիր եւ Տոլստոյը ոչ թէ քո ամուսինը լինէր, այլ պարզապէս մի ծանօթ, ես կը դտնէի, որ նա խրայատուկ է եւ հետաքրքիր: Գուցէ ես էլ նրա հետ համաձայնուէի: Բայց երբ ես տեսնում եմ, որ քո ամուսինը չիմարացել է, ուղղակի ապուշ է դարձել, ես չեմ կարող քեզ չասել, թէ ինչ եմ մտածում նրա մասին»:

Եւ այդպէս դատում էին դրեթէ բոլորը: Տոլստոյի չրջապատը պատրաստ էր ընդունել, որ նրա դաղափարները հետաքրքրական են, ճանաչել նրա բոլոր արժանիքները, այնքան ժամանակ, քանի դեռ նա սահմանափակւում էր լոկ դատողութիւններով: Բայց հենց որ նա սկսում էր իրականացնել իր դաղափարները, բոլորը անմիջապէս ըմբոստանում էին նրա դէմ:

Բայց Տոլստոյը չի դիջում իր սեփական երկրորդ աչքերով տեսած աշխարհը: Սակայն, նոյն յամառութեամբ չի դիջում իր սովորական աշխարհը նրա ընտանիքը, որի համար այդ աշխարհը միակ իրականութիւնն է: Նրանց համար միայն այդ աշխարհում է դտնւում առաջին ու վերջին ճշմարտութիւնը, այն ճշմարտութիւնը, որոնց չքեղ յուչարձանները դեռ մի քանի տարի առաջ «Պատերազմ եւ Խաղաղութիւն» ստեղծագործութեան մէջ կառուցել էր ինքը՝ Տոլստոյը:

Ո՞ւմ համար է աշխարհը՝ Աստծոյ վառքի՞, թէ՞ մարդկանց համար: Այս հարցի պատասխանն էր որոնում Տոլստոյը իր ամբողջ կեանքի ընթացքում: Բայց ո՞վ կարող էր պատասխանել այս հարցին: Կա՞յ արդեօք այս դատը դատելու դատաւորը: Տոլստոյը հաւատացած էր, որ այդ դատաւորը կայ: Դա պարզ երեւում է մի երիտասարդ քահանայի հետ իր ունեցած հետեւեալ վէճից:

ՏՈԼՍՏՈՅ. Հաւա՛տք է հարկաւոր, հաւա՛տք, անկարելի է առանց հաւատքի: Բայց ոչ այնպիսի հաւատք, երբ ես ուրիշի աստուածներին եմ հաւատում: Այլ հաւատք, որը առաջանում է իմ բանականութիւնից, իմ մտքերի բնական ընթացքից: Աստծոյ հաւատք, յաւերժ կեանքի հաւատք:

ՔԱՀԱՆԱՅ. Բանականութիւնը կարող է խաբել, ամէն մէկը ունի իր սեփական բանականութիւնը:

ՏՈԼՍՏՈՅ. Հէնց դա է, որ սարսափելի սրբապղծութիւն է: Աստուած մեզ չնորհել է ճանաչողութեան մի սուրբ միջոց, միջոց, որը միակն է, որ կարող է մեզ միացնել, իսկ մենք չենք հաւատում նրան:

ՔԱՀԱՆԱՅ. Բայց ինչպէ՞ս հաւատք, եթէ տարակարծութիւններ կան:

ՏՈԼՍՏՈՅ. Որտե՞ղ են տարակարծութիւնները: Ո՞ր «երկու անգամ երկու՝ չորս է» եւ որ «ուրիշին չպէտք է պատճառել այն, ինչ չես ուզում, որ քեզ պատճառեն» եւ սրա նման ճշմարտութիւնները մենք ընդունում ենք, որովհետեւ նրանք համընկնում են մեր տրամաբանութեան հետ: Իսկ որ Աստուած խօսեց Մովսէսի հետ Սինայ սարի վրայ, որ Բուդդան հեռացաւ արեւի ճառագայթի վրայ, կամ որ Մահմէդը երկինք է թռել, — այս եւ նման մանրամասնութիւնների մէջ մենք տարակարծութիւններ ունենք»:

Այստեղ Տոլստոյը արտայայտում է այն միտքը, որը իր կարծիքով կազմել է իր կեանքի ամբողջ փիլիսոփայութիւնը: Իրեն թւում էր, որ ամբողջ կեանքում լինքը ղեկավարուել է այն տեսակէտով, թէ բանականութիւնը բոլորի համար է եւ միշտ լինքը

իրեն հաւասար: Բայց ինչո՞ւ այդ դէպքում մինչեւ 50 տարեկան դառնալը Տոլստոյը չէր լսում բանականութեան կարդադրիչ ձայնը: Եւ ինչո՞ւ երբ նա առաջին անգամ հասկացաւ, որ չի կարողանում դուրս գալ բանականութեան իշխանութեան ճանկերից, նա այդքան սարսափահար եղաւ: Ինչո՞ւ այն ժամանակ նա ստիպուած եղաւ ասելու. «Նրանք ինձ առողջ ճանաչեցին, բայց ես հո դիտեմ, որ խելագար եմ»:

Տոլստոյը իր հետագայ կեանքով ապացուցեց, որ սխալւում էր, երբ քահանայի հետ ունեցած իր վէճում երկրպագում էր բանականութեանը: Աւելի անկեղծ էր նա երբ խօսում էր պատճառներից առաջացած երեւոյթների եւ հոգեկան տպաւորների մասին:

25 տարի Տոլստոյի ընտանիքը ապրում էր խաղաղութեան, փոխադարձ սիրոյ եւ համաձայնութեան մէջ: Սակայն, այն օրից, երբ Տոլստոյը ուրիշ աչքերով տեսաւ աշխարհը, խաղաղութիւնը եւ սէրը վերջացան: Ընտանիքը չբաժնուեց, բայց նրանց միասնական կեանքը նմանուեց մէկ չղթայով կապուած կալանաւորների կեանքի: Եթէ ճիշտ է, որ բանականութիւնը մխացնում է, ապա Տոլստոյի ընտանիքում ըստ երեւոյթին բանականութիւնը փոխարինուել էր այլ սկզբունքով: Ընտանիքի բոլոր անդամները Տոլստոյի ապացոյցները համարում էին զուրկ տրամաբանութիւնից, պայքարում էին նրա դէմ, քալ դիտակցելով, որ նրա դատողութիւնների յետեւում կանգնած է խելագարութիւն ու ցնորային մի սկզբունք: Տոլստոյը «Խելագարի նօթագրութիւնների» վերջին տեսարանում փաստօրէն նկարագրում է իր սեփական ընտանիքը եւ իր սեփական վիճակը:

Վերեւի յարկում, զարդարուած ու լուսաւորուած սենեակներում պարահանդէս է՝ ծաղիկներով, երաժշտութեամբ եւ սիրալիր ֆրանսացիներով: Իսկ ներքեւում, առաջին յարկում, ընտանիքի գլխաւորը պատրաստւում է փախչել տնից պատահական ուղղութեամբ, աննպատակ, ճամբով, միայն թէ չտեսնի այն այլանդակութիւնը, ինչ որ կինը եւ երեխաները համարում են կեանքի միակ դեղեցկութիւնը: Եւ նա կը գնար, ոչ կինը եւ ոչ էլ երեխաները չէին կարող համոզել նրան՝ փոխել իր որոշումը: Կնոջ կողմից գործադրուող համոզամիջոցներից վերջինը՝ սպառնալիքն էր: Եթէ

նա գնայ տնից, ապա կինը սպառնում է իրեն գնացքի տակ դնել: Ու այստեղ նահանջում է տրամաբանությունը եւ առաջ է գալիս սպառնալիքը: Այդ սպառնալիքը ստիպում է նահանջել ընտանիքի հօրը: Նա խոստանում է մնալ եւ չարունակել իր համար բոլորովին անտանելի կեանքը:

Սակայն Տոլստոյի նահանջը երկար չտեւեց: Այդ նահանջը անկարելի դարձաւ, երբ նա յստակօրէն հռչակեց. «Սարսափելի չէ մահը, սարսափելին մեր անիմաստ ու դատարկ կեանքով ապրելն է: Մեր կեանքը մահ է, մեր մահը կեանք»: Սա էր այժմ Տոլստոյը տարածում իր շրջապատում, բայց մարդիկ նրան երբեք չհասկացան ու չէին էլ կարող հասկանալ, որովհետեւ յայտնութիւնները հենց նրանով են յայտնութիւն, որ անտրամաբանելի ու անբացատրելի են:

Իսկ մենք զարմանալիօրէն ուզում ենք, որ մեր յայտնութիւնները, երազները ու զառանցանքները ենթարկուեն օրինաչափութիւնների:

Երբ Դեկարտին չնորհուեց «ամէն ինչ կասկածի՛ ենթարկիր» յայտնութիւնը, նա առաջին հերթին կասկածի ենթարկեց իր դոյութիւնը: Նա ժխտեց տրամաբանութեան բոլոր ապացոյցները եւ թւում էր, թէ Դեկարտը կը դառնայ այն առաջին գիտնականը, որը պարզօրէն կը հռչակի, թէ կեանքում դոյութիւն ունի տրամաբանութիւնից աւելի բարձր սկզբունք, որ այդ բարձր սկզբունքով է մարդը տարբերւում կենդանուց, որը որոշ չափաւորով, բնութեան օրինաչափութիւններին ենթարկուելու եւ նրանցից օգտուելու չափաւորով, շատ աւելի տրամաբանական է:

Բայց Դեկարտը վախեցաւ հրաժարուել աւրորական կոչուող աշխարհից, որտեղ միայն ճշդրիտ գիտութիւնը կարող էր դոյութիւն ունենալ: Իր յայտնութիւնը մարդկանց փոխանցելով Դեկարտը հռչակեց, թէ «ինքը մտածում է, ուրեմն դոյութիւն ունի»:

Այս հարցում Տոլստոյը աւելի քաջ դտնուեց, նա ոչ միայն տեսականօրէն հրաժարուեց բոլորի համար ընդհանուր աշխարհից, այլ ինքը իր անձնական կեանքով ապացուցեց իր հրաժարականը:

Բայց ինչո՞ւ պէտք է մարդիկ լսեն ու հաւատան մի մարդու, որը ինքը իր մասին ասում է՝ «ես հո դիտեմ, որ խելառդար եմ»:

Արիստոտելը իր «Մետաֆիզիկան» սկսում է այսպէս. «իրենց բնութեան համաձայն, բոլոր մարդիկ ձգտում են իմացութեան»: Իսկ ժամանակակից ամենափայլուն փիլիսոփաներից մէկը՝ Բերդսոնը ասում է հետեւեալը. «Սկզբից մենք մտածում ենք միայն գործելու համար: Ցետոյ վերացական եզրակացութիւններ անելու համար: Բայց վերացական եզրակացութիւնները՝ պերճանք են, իսկ գործողութիւնները՝ անհրաժեշտութիւն»: Սակայն Բերգսոնի այս վերջին արտայայտութեան մէջ կայ չպարզուած մի խնդիր: Ո՞րն է առաջնակարգ՝ պերճա՞նքը, թէ՞ անհրաժեշտութիւնը, այսինքն ո՛րն է առաջնակարգ՝ վերացական եզրակացութիւննե՞րը, թէ՞ գործողութիւնը: Կարելի է ենթադրել, որ մարդիկ սկզբից մտածում են անհրաժեշտը ձեռք բերելու մասին, յետոյ միայն ճոխութիւնը: Բայց կարելի է նաեւ ենթադրել հակառակը: Մարդիկ ըստ էութեան ձգտում են պերճանքի եւ միայն այդ դէպքում նպատակին չհասնելով՝ բաւարարւում են անհրաժեշտով: Երեւի այս երկրորդ տեսակէտը աւելի ճիշտ լինի, որովհետեւ կենդանական աշխարհում, օրինակ, երիտասարդ կենդանիները ամբողջ օրը խաղում են, եւ միայն վորձուած մեծերն են ստիպուած սահմանափակուել զոյութեան պայքար մղելով, այսինքն անհրաժեշտով:

Երեւի Արիստոտելը աւելի ճիշտ էր, քան Բերգսոնը, երեւի իմացութիւնը կազմում է մարդկային կեանքի էութիւնը: Դրախտում, որտեղ ամէն ինչ կար, գործելու անհրաժեշտութիւնը բացակայում էր: Միայն դրախտից վտարուածները կանդնեցին երկու հնարաւորութիւնների առջեւ՝ գործի՛ր կամ կործանուի՛ր:

Եւ այս ճակատագրական ընտրութեան տրամաբանութիւնը դարեր շարունակ կախուած է սեփական քրտինքով հաց վաստակող մարդու վրայ: Այդ տրամաբանութիւնը արմատապէս աղաւաղել է մեր իմացութեան էութիւնը, դարձնելով այն մեր շահերի տրամաբանութիւն: Մտածել, ճանաչել ու դիտենալ կարող է միայն նա, ով զուրկ է առօրեայից, ով անելիք չունի, ով իրերի բերումով դուրս է նետուած բոլորի համար ընդհանուր ու սովորական աշ-

խարհից եւ ով ինքը իր հետ մենակ մնալով հասկացել է, որ ճըշմարտութիւնը, ըստ էութեան, չի կարող լինել ոչ անհրաժեշտ եւ ոչ էլ համընդհանուր:

Այդպիսի մարդու համար դիտութիւնից դուրս նետուած պատահականութիւնը դառնում է հետաքրքրասիրութեան միակ առարկան: Այդպիսին էր Տոլստոյը: Նրա կեանքի առաջին կէսի կենսունակ ու ակտիւ հերոսները կամաց-կամաց հեռանում են կեանքից: Բայց եթէ «Ալեքսանդրի նօթադրութիւններում» կամ «Հայր Սերգիոսում» հերոսները դեռ որոշ չափով մասնակցում են կեանքին, պայքարում են իրենց դաղափարների համար, ապա «Իւան Իլիչի մահուան» կամ «Տէրն ու մշակի»մէջ Տոլստոյի հերոսները չունեն որեւէ բան անելու ոչ ցանկութիւն եւ ոչ էլ հնարաւորութիւն: Նրանք ոչնչով չեն մասնակցում կեանքին եւ երկուսն էլ մահանում են, այսինքն դադարում են գոյութիւն ունենալ՝ բոլորի համար ընդհանուր աշխարհում:

Թւում է, թէ այս նիւթի չուրջ դրելու բան էլ չկայ: Եթէ, իսկապէս, Տոլստոյը այնպէս խոնարհուէր բանականութեան առջեւ, ինչպէս բազմիցս այդ մասին դրում էր, ապա նա չէր փորձի դիմել այնպիսի անիմաստ նիւթի, ինչպիսին էր մահը: Մարդը մեռնում է՝ նրան հարկաւոր է թաղել: Մի՞թէ բանականութեան համար անիմաստ հետաքրքրութիւն չէ՝ ասանջ դնելը, թէ ինչ է կատարւում մեռնող մարդու հոդում:

Բայց Տոլստոյին բանականութեան դատարանը չէր հետաքրքրում: Երբ անհրաժեշտ էր, նա կարողանում էր ոչ միայն խուսափել բանականութեան դատաստանից, այլ նաեւ դատաստանի կանչել հենց բանականութիւնը:

Իւան Իլիչը զդում է, որ իր հետ կատարւում է տարօրինակ, անսովոր, բայց դրա հետ միասին չափազանց կարեւոր մի բան: Եւ նա միակն էր, որ դիտէր այդ մասին: Նա ապրում էր մահուան եզրին միայնակ, առանց որեւէ մէկի, որին կարողանար պատմել իր ապրումները, եւ որը կարող էր խղճալ իրեն: Նրան չրջապատող մարդիկ ոչ միայն չէին հասկանում նրա ապրումները, այլեւ նա նոյնիսկ ամենամօտիկ հարազատների համար դարձել էր մի

անտանելի ու ծանր հոգս: Ոչ ոք չէր հաւատում, որ Իւան Իլիչի հետ կատարւում է մի ինչ որ նոր բան, չնայած նրան, որ Իւան Իլիչը փորձում էր բացատրել բոլորին իր յայտնութիւնը: Բոլորը համոզուած էին, որ Իւան Իլիչը իր քմահաճոյքներով անօրինական կարգով խախտում է կեանքի ընդունուած ընթացքը:

Թատրոն գնալը, աղջկան ամուսնացնելը, հաղուստներ եւ զարդեղէն գնելը՝ այս ամէնը արդելուած էր: Բայց ինչպէ՞ս կարելի էր կանդնեցնել կեանքի սովորական ընթացքը միայն նրա համար, որ Իւան Իլիչի հետ կատարւում էր մի ինչ որ նոր բան: Չէ՞ որ այդ արտակարգ բանը մահն էր, որը բոլորի կարծիքով կատարւում է ամենուր եւ ոչ մի խորհրդաւորութիւն չի պարունակում իր մէջ: Իւան Իլիչի շրջապատը պահում էր իրեն այնպէս, ինչպէս մենք բոլորս պահում ենք նման դէպքերուն:

Երբ մենք լսում ենք մի օտար մարդու մահուան մասին, մենք սառնասրտօրէն համարում ենք, որ դա տեղի ունեցաւ բնութեան օրինաչափութիւնների հետեւանքով: Երբ մահանում է մեր հարազատը, մենք անում ենք մեղանից կախուած այն ամէնը, ինչը կարող է թեթեւացնել հիւանդի տառապանքները մեռնելուց առաջ: Մենք կանչում ենք ամենալաւ բժշկին, գնում ենք ամենալաւ դեղերը, փորձում ենք զուարճացնել եւ հանգստացնել հիւանդին:

Այս ամէնը անում էին նաեւ Իւան Իլիչի հարազատները: Բայց նրանց այդ ընդունուած գործողութիւնները աւելի էին բորբոքում հիւանդին: Նա տեսնում էր, որ իր հարազատները, որ սովորական մարդիկ էին, չեն ուզում հաշուի նստել Իւան Իլիչի անտովոր ապրումների հետ: Աւելին, նրանք պահանջում էին, որ Իւան Իլիչը եւս լուրջ չվերաբերուի իր նոր ապրումներին: Կամաց-կամաց հիւանդի անկողնու մօտ ստեղծւում է մի անտանելի կացութիւն. նա վիրաւորում է բոլորին, նա պահանջում է բոլորից անկարելին, նա ուզում է, որ իր նման բոլորը հաւատան, թէ այն, ինչ կատարւում է իր հետ, աշխարհի ամենակարեւոր բանն է եւ դրա համար բոլորը պէտք է մոռանան աշխարհի սովորական օրինաչափութիւնները եւ ըմբոստանան դոյութիւն ունեցող կացութեան դէմ: Իւան Իլիչը իր հերթին չարունակում է կարծել, որ եթէ ինքը ճիշտ է, ապա բոլորը պարտաւոր են ընդունել այդ ճըշ-

մարտունքիւնը: Ուրիշների կողմից պաշտպանութիւն չգտած ճըշմարտունքիւնը իրեն հարկաւոր չէ:

Բայց հիւանդի ըղջապատը ոչ միայն չի կարող հետեւել, այլ եւ չի էլ հասկանում նրան, ինչպէս չէր հասկանում դա ինքը՝ Իւան Իլիչը հիւանդանալուց առաջ:

Տոլստոյը նկարագրում է, թէ ինչպէս Իւան Իլիչը առանց որեւէ պատճառի հրաժարուեց իր սովորական կեանքից: «Երբ սկըսուեց այն, ինչի շնորհիւ նա դարձաւ այսօրուայ Իւան Իլիչը, նրա բոլոր ուրախութիւնները խաւարեցին եւ այն, ինչը ժամանակին ունէր բարձր դին, այսօր դառնում էր ոչնչութիւն: Ամուսնութիւնը, կնոջ բերանի հոտը, ծառայութիւնը, դրամ վաստակելու մըտահոգութիւնները: Եւ այս ամէնը տարեց-տարի, տասը տարի, քսան տարի: Ես դլորւում էի դէպի անդունդ, երեւակայելով, թէ սար եմ բարձրանում: Հասարակական կարծիքը համարում էր, որ ես բարձրանում եմ, ճիշտ այնքան, որքան որ ես իջնում էի եւ որքան ինձանից անջատւում էր կեանքը: Եւ հիմա ամէն ինչ պատրաստ է՝ մահացիր»:

Ահա այսպէս էր մտածում Իւան Իլիչը, երբ անելիք չունէր եւ երբ հասկացել էր լաւի եւ վատի իմաստը: Նա հասկացել էր, որ իրականութիւնն ու զառանցանքը միայն երեւակայութիւններ են, ինչպէս ամբողջ այն ընդհանուր աշխարհը, որում երկրպագում են յօրինուած ճշմարտութիւններին: Իւան Իլիչի յայտնութիւնը այն էր, որ նա յանդեց այն եզրակացութեան, թէ թողնում է աշխարհը, դիտակցելով, որ ինքը կործանել է այն ամէնը, ինչ որ իրեն տրուած էր: Երբ դրանից յետոյ, առաւօտեան նա տեսաւ ծառային, յետոյ կնոջը, յետոյ աղջկան, յետոյ բժշկին, ապա բոլոր նրանց չարժումները, նրանց ամէն մի բառը ապացուցում էր այն սարսափելի ճշմարտութիւնը, որին նա յանդել էր դիշերը: Շրջապատի մէջ նա տեսնում էր իր սեփական կեանքը, որը ամբողջովին խաբեբայութիւն էր, որի յետեւում չէր երեւում մահը եւ կեանքը:

«Իւան Իլիչի մահից» 10 տարի յետոյ Տոլստոյը դրում է «Տէրն ու մշակը»: Այս երկու պատմուածքները այնքան նման են մէկը

մխսին, որ չնայած արտաքին տարբերությանը, թվում է թէ սըրանք նոյն թեմայի տարբերակներ են:

Ըստ երեւոյթին, այն օրից, ինչ բացուեց Տոլստոյի երկրորդ տեսողութիւնը, նրան հանդիստ չէր տալիս մահուան դաղտնիքը: Եթէ ճիշտ էր Պլատոնը, որ փիլիսոփաները ոչ մի ուրիշ բանով չեն զբաղւում, քան մահուան դաղտնիքով, ապա վերջին հարիւրամեակում չատ քիչ մարդ էր այդքան զբաղուել փիլիսոփայութեամբ, որքան Տոլստոյը:

«Տէրն ու մշակը» պատմուածքի հերոս հարուստ վաճառական Բրեխունովը ամէն ինչ ունի եւ իր ունեցուածքով հպարտ է, որովհետեւ ամէն ինչ ձեռք է բերել սեփական ուժերի չնորհիւ: Նա ատում է բոլոր նրանց, ովքեր չեն կարողացել յաջողութիւնների հասնել: Նա համոզուած է, որ իսկական մարդը իր սեփական միջոցներով պէտք է արժանանայ Աստծոյ բարեացակամութեանը: Եւ ահա, այս ինքնահաւան ու ինքնավստահ մարդուն հեղինակը տեղափոխում է ձիւնապատ մի դաշտ, որտեղ իրեն եւ իր խղճուկ Նիկիտա ծառային վիճակուած է սառչել: Նիկիտան հնազանդօրէն պատրաստւում է մահուան: Ինչպէս ամբողջ կեանքում, այստեղ էլ նա հնազանդ է: Նրա մահը Տոլստոյին չի հետաքրքրում: Չի հետաքրքրում նրա մահը նաեւ Բրեխունովին, որը համարում է, որ Նիկիտայի խղճուկ ոչ մի արժէք չունի: Տոլստոյին հետաքրքրում է միայն ինքնահաւան եւ ինքնավստահ Բրեխունովը:

Նոյնիսկ այն պահին, երբ նա համոզւում է, որ ճանապարհը կորցրել է, որ գիշերը պէտք է անցկացնել դաշտում եւ որ երկու ժամ յետոյ ձիւնը ամբողջովին կծածկի նրանց, նոյնիսկ այդ ժամանակ նա չի հաւատում, որ իր սեփական ուղեղը եւ տաղանդը կարող են դատապարտել, որ ամբողջ կեանքում օգնութեան հասնող տրամաբանութիւնը կարող է այս անգամ ելք չգտնել:

Բայց ձիւնը թափւում է ու թափւում, իսկ ելք չի գտնւում: Կեանքում առաջին անգամ Բրեխունովը սկսում է անհանգստանալ: Ի՞նչ անել: Բրեխունովը նայում է Նիկիտային, որը դեռ չէր հասկանում՝ քնում է ինքը, թէ՞ մահանում, բայց պատրաստ էր ամէն ինչի: Իր ամբողջ կեանքում նա սովորել էր ենթարկուել, ենթարկւում էր եւ մահուան: Իսկ Բրեխունովը, որ ամբողջ կեան-

քում իշխել էր, չէր կարողանում յանձնել իր կամքը ճակատագրին: Հաւաքելով իր վերջին ուժերը՝ Բրեխունովը նստում է ձին եւ, դաշտում թողնելով Նիկիտային փորձում է դանել ճանապարհը: Սակայն այս փորձն էլ է անցնում ապարդիւն: Նա վայր է ընկնում ձիուց, որը փախչում է, Բրեխունովին թողնելով մենամենակ դաշտում: Վերջապէս Բրեխունովը դիմում է ամենավերջին միջոցին՝ նա սկսում է աղօթել: Երբ այս վերջին միջոցն էլ չի օգնում, նա վերջնականապէս զրկւում է իր հաւասարակշռութիւնից, ու ճանապարհը որոնելու փոխարէն սկսում է խելագարի նման դէս ու դէն նետուել:

Ու այս տրամաբանութիւնից զուրկ անցուդարձի ժամանակ նա կրկին հանդիպում է կիսամեռ Նիկիտային: Եւ այստեղ, մահացող Նիկիտայի առջեւ, իր անխուսափելի մահուան առջեւ Բրեխունովը որոշում է կտրել իր նախկին կեանքի հետ բոլոր կապերը: Որտեղի՞ց եկաւ այս որոշումը եւ դա ի՞նչ էր նշանակում, Տոլստոյը չի բացատրում եւ պէտք է ասել, որ ճիշտ է անում, որովհետեւ բոլոր փորձերը՝ մարդու անյայտ ձգտումը բացատրել յայտնի զգացմունքներով, անթոյլատրելի են:

Բրեխունովը հրաժարւում է իր անցեալից եւ արցունքները աչքերին փրկում է Նիկիտային, իսկ ինքը այլեւս մահից չի վախենում: Մահից վախենում են ուժեղները: «Գալիս եմ, գալիս եմ», — ասում է նա, հեշտութեամբ յանձնելով իրեն մահուան դիրկը:

«Տիրոջ ու մշակի» վերջը մարգարէական էր: Տոլստոյին վիճակուած էր իր կեանքը աւարտել դաշտում՝ ձեան ու փոթորիկի մէջ: Այդպէս էր ուզում ճակատագիրը:

Տոլստոյի համբաւը տարածուեց ամբողջ աշխարհով: Նրա 80-ամեակի կապակցութեամբ խօսում էին աշխարհի բոլոր ծայրերում, բոլոր լեզուներով: Այդպիսի պատիւ չէր տեսել մահկանացուներից եւ ոչ մէկը: Եւ ահա չուտով, իր փառահեղ յոբելեանից յետոյ, նա գիշերով փախչում է տնից եւ գնում պատահական ուղղութեամբ: Նրան ձանձրացրել էր սեփական փառքը: Նա հրաժարւում է իր անցեալի ամբողջ բեռից եւ կարծես թէ թեթեւացած, ձեան ու փոթորիկների մէջ իրեն յանձնում է մահուան:

Այսպիսով, եթէ Դոստոեւսկին դուրս գալով դիտութեան օրինաչափութիւնների կաշկանդուածութիւնից՝ իր երկրորդ աչքերով տեսաւ ու հասկացաւ ամէն մի անձի քմահաճոյքի ճշմարտութիւնը, ապա Տոլստոյը հասկացաւ մահուան դաղտնիքը: Շատ աւելի դժուար պայմաններում, որտեղ պահանջւում էր շատ աւելի սուր տեսողութիւն, այս ամէնը տեսաւ նաեւ Պարոյր Սեւակը:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԸ

19–րդ դարում իշխող դիտակցութիւնը, որը իրեն համարում էր առաջադէմ, կրօնը փոխարինեց հասարակագիտութեամբ: Հասարակագիտութիւնը դարձաւ առաջադէմ մարդկանց Աւետարանը:

Արագ թափով սկսեց զարգանալ գիտութիւնը եւ մարդկանց թուաց, որ գիտութիւնը ի վիճակի է կարղաւորել նաեւ բարոյական քնագաւառը: Բայց ահա ատրտուեց համեմատաբար հանդիստ 19–րդ դարը եւ 20–րդ դարի սկզբին քաղաքակիրթ կոչուող մարդկութիւնը ականատես եղաւ այնպիսի վայրենութիւնների, որոնք վայել էին նախնադարեան մարդկանց: Գիտութիւնը չէր փրկում: Բարոյական ասպարէզի վրայ գիտութիւնը իշխանութիւն չունէր:

Բայց հասարակագէտները չտատանուեցին: Նրանք այս կամ այն ձեւով մարդկութիւնը տարան դէպի այնտեղ, որտեղ հաւասարութիւնը հռչակուեց արդարութեան չափանիշ, ժողովրդավարութիւնը՝ ազատութիւն, գիտութիւնը՝ իմաստութիւն:

Թէպէտեւ շատ հեռու էր հաւասարութիւնից, ժողովրդավարութիւնից եւ իսկական գիտութիւնից այն երկիրը, որտեղ ծընուեց Պարոյր Սեւակը, բայց, այնուամենայնիւ, դոնէ վերացական արժէքների իմաստով, այդ դաղափարների մէջ էր դաստիարակւում նրա սերունդը: Եւ այդ դաղափարների միջից նրան վիճակուեց տեսնել այն, ինչը մինչեւ այսօր չեն կարողանում տեսնել նրա հայրենակից պետնականները ու փիլիսոփաները:

Սեւակի հաւատքը դէպի կարգն ու կանոնը, դէպի բնական օրինաչափութիւնները, դէպի համապարտադիր ճշմարտութիւննե-

րը չատ մեծ է: Նա պարզապէս ատում է այն ամէնը, ինչը խախտում է ընդունուած կարգը:

Ատում եմ ձիւնը՝
Թէ նա տեղում է ամառուայ կէսին,
Եւ մահն եմ ատում՝
Թէ հիւր է գալիս աղջկատեսին,
Մահից ոչ պակաս՝
Եւ ա՛յն ֆօղարկուած մենատընտեսին, —
Նրա՛ն ու նրա՛նց,
Ովքեր ուրիշի շէն տունն են ֆանսում՝
Իրենց պէտք եկած գերանի համար,
Ովքեր ուրիշի ծառերն են ջարդում՝
Մի բուռ չհասած ծիրանի համար.
Ովքեր հաւայնքի ծովից են խօսում,
Բայց դէպի իրենց լճակն են հոսում...

Սեւակը անմիջապէս խոստովանում է, որ բոլոր օրինաչափութիւնների մէջ իր համար համակրելի են մխային նրանք, որոնք օգտակար են:

Խաւարն եմ ատում, եթէ խաւարում
Ո՛չ միտք է ծնւում, եւ ո՛չ էլ զաւակ:
Եւ լոյսն եմ ատում, թէկուզեւ պայծառ,
Թէ չի հանդուրժում միւնչեւ իսկ շուաք...

Բայց, ինչպէս մենք տեսանք, — այս համակրանքը օգտակարի հանդէպ ունէին բոլորը, այդ թւում նաեւ Դոստոեւսկին ու Տոլստոյը, միայն թէ նրանք դա տեսնում էին իրենց սովորական աչքերով: Իսկ այն երկրորդ աչքերը, որոնք զուրկ էին անընդհատ զարգացումից, որոնք զալիս էին անապատելիօրէն ու միանգամից, այդ աչքերը այլ բան էին տեսնում:

Գուցէ՞ Սեւակի այս համակրանքը օգտակարի հանդէպ նոյնպէս սովորական աչքերի տեսածն է, գուցէ՞ նա էլ սկսել է մէկմէկ տեսնել խաւարի մէջ աւելին, քան «զաւակ ծնելու միջոց»:

Նա բոլորի նման հասկանում է, որ, բնական օրինաչափութիւնների համաձայն, ամէն ինչ զարդանում է սեփական ճանապարհով, բայց դրա հետ միասին նրա ոգին ըմբոստանում է այդ դանդաղ ընթացքի դէմ եւ ցանկանում է տեսնել ոչ թէ ընթացքը, այլ վերջնական նպատակը:

Ասում են, թէ միանգամայից կեանքում ոչի՛նչ չի կատարւում,
Միանգամից ո՛չ մի կարպետ եւ ո՛չ մի գորգ չի պատրւում,
Միանգամիշ բերդ չի շինւում ու չի բանդւում միանգամից,
Միանգամից ձիւն չի գալիս եւ չի փչում անգամ բամին
Մի՛րգ չի հասնում միանգամից, ո՛ւր մնաց թէ՝ խելօքանան,
Զո՛յգ չեն կազմում միանգամից, ո՛ւր մնաց թէ՝ երեքանան:
Միանգամից չեն կշտանում եւ չեն զգում ջրի կարիք,
Ո՛չ այսօրն է անցեալ դառնում, ո՛չ էլ վաղն է դառնում
Այս ամէնը ճիշդ է, հարկա՛ւ,
Հենց այսպէս է, ինչպէս որ կայ:
Սակայն եթէ իմ կեանքի մէջ գէթ հարցնէին մի՛ անգամ ինձ,
Թէ ես ի՞նչ եմ գերադասում,
Ի՞նչ եմ ուզում
Ու երազում,
Ես կ'ասէի·
— Ինչ լինում է՝ թող որ լինի միանգամի՛ց···

Այստեղ արդէն Սեւակի հաւատքը բնական օրինաչափութիւնների եւ ժամանակի անհրաժեշտութեան նկատմամբ հակասութեան մէջ է մտնում իր սեփական ցանկութեան հետ, որը չի ճանաչում ժամանակ եւ ցանկանում է տեսնել միանգամից գորգը, այլ ոչ թէ գորգ պատրաստելու ընթացքը:

Շատ աւելի ցայտուն է երեւում Սեւակի ներքին հակասութիւնը, որը զոյութիւն ունի իր տեսածի եւ ենթադրածի միջեւ:

Ես կարող եմ ենթադրել,
Թէ այս ջուրը ոչ թէ պղտոր, այլ վճիտ է:
Ես կարող եմ ենթադրել,

Թէ հոյակապ ապարանիք է այս խրճիթը:
Ես կարող եմ ենթադրել,
Թէ այս ծուխը
Գոլորշացող բարածուխ է,
Եւ այս կարմիր ճոթը բարակ
Ոչ թէ լաթ է, այլ բոց-կրակ...
Ես կարող եմ ենթադրել,
Թէ այս բունը արքունութիւն է,
Եւ այն ծանըր պարտութիւնը
Ջտեսնուած յաղթութիւն է,
Թէ այս տանիքը... մեծ սափոր է,
Եւ հանդէս է այս... թափօրը,
Թէ այս լեռը... մի շուռ տրուած հսկայ փոս է
Եւ մի փոքրիկ ինքնահոս է
Իմ այն մատը,
Որ կոչտում է, կարծես, ճկոյթ...

Ես կարող եմ ենթադրել,
Բայց ի՞նչ օգուտ...

Ա.յստեղ կրկին Սեւակին ճնշում է օտարակարութիւնը: Եթէ Դոստոեւսկու հերոսները առանց որեւէ օտի ապրում էին իրենց տեսիլքներով, իրենց այն ճշմարտութիւններով, որոնք ձեռք էին բերուել յայտնութեան շնորհիւ, ապա Սեւակը դեռ չի կարողանում ապրել իր ենթադրութիւններով, նա ընկճուած է, որովհետեւ ենթադրելը քիչ է, պէտք է ուրիշներն էլ հասկանան ու հաւատան նրա ենթադրութիւններին:

Նա նմանուել է «Իւան Իլիչին», որին չի հաւատում շրջապատը, իսկ եթէ այդպէս է, ի՞նչ օգուտ, որ ինքը կարող է ենթադրել:

Եթէ Դոստոեւսկին համարում էր տրամաբանութիւնը այն երեւակայելի պատը, որի միջով միշտ կարելի է անցնել, ապա Սեւակը այդ պատը համարում է իրական եւ խոստանում է.

Խոստանում եմ
Բաց ճակատով զուր չխփուել հաստ պատերին:
Ինչի՞ համար·
Էլի՛ պատը կը մնայ պատ,
Կը պակասի մի լաւ ճակատ:

Սեւակը արդէն տեսնում է, որ պատը անտանելի է, բայց նա ափսոսում է տեփական ճակատը: Սա 1962 թուականն էր: Դեռ պէտք է դար 1971 թիւը եւ Սեւակը դեռ պէտք է առանց ճակատ կոտրելու «Եղեցիր Լույսով» հանդիսատ անցնէր ժամանակին հաստ թուացող պատի միջոցով: Բայց մինչ այդ անհրաժեշտ էր յաղթահարել երկու համընդհանուր, բայց բանաստեղծին կասկածելի թուացող ճշմարտութիւններ: Առաջինը՝ արդեօք հաւասարութիւնը արդարութեան չափանի՞շ է: Երկրորդը՝ արդեօք մեծամասնութեան կարծիքը ճշմարտութեան չափանի՞շ է: Այս՝ դրեթէ ամբողջ աշխարհում ընդունուած կարծիքները ճնշում էին Սեւակին, կաշկանդում էին նրա զգացմունքները եւ թելադրում նրան հրաժարուել սեփական արդարութեան եւ ճշմարտութեան չափանիշներից:

Համաձայն եմ, որ սագերը նկատելի
Ինչ–որ բանով ազգակից են եւ բադերին:
Բայց սագը՝ սագ,
Բադը բադ է,
Ինչո՞ւ խփուել պատէ պատ էլ,
Միթէ՞ աչքի արձակուրդ է:

Լաւ չէ՞ արդեօք ապաստանել հին լաթերին,
Քան նորաձեւ հագուստ կոչուած այն անտէրին,
Երբ որ մարդուն բարձրահասակ
Հագցընում են մանկան քասակ,
Մի համառօտ անդրավարտիկ,
Քաղուածքի պէս նեղ է գալիս եւ շապիկը, —
Ա՛յ շան որդիք,
Մարդ ենք կոչւում,
Թէ՞ կապիկ ենք...

Սակայն, ինչպէս տեսնում ենք, այս կապկութեան մէջ Սեւակը մեղադրում է մարդկանց աչքերին եւ ուղեղներին, որոնց արճակուրդի դէպքում միայն կարելի է չտարբերել բադը սագից ու չտեսնել, որ բարձրահասակ մարդուն անկարելի է մանկական թասակ հագցնել, որովհետեւ անհատասարութիւնը բնական է, որովհետեւ բնականը անկարելի է ուղղել:

Ի՞նչ խոստանամ.
Եթէ լեռ եմ՝ դա՛շտ չեմ դառնայ,
Ոխերիմ եմ՝ հա՛շտ չեմ դառնայ,
Թէ սրբութեան աւազան եմ՝
Ի՛նչ լուացքի – եւ խմորի՛ տաշտ չեմ դառնայ...

Անշուշտ Սեւակը հասկանում է, որ իր տեսածը, այսինքն հատասարութեան անարդարութիւնը՝ չի համապատասխանում համընդհանուր տեսակէտին, իսկ դա նշանակում է, որ իր տեսողութիւնը նորմալ չէ: Նա կանգնած է ընտրութեան առջեւ, կամ ինքն է խելագարուել, եւ կամ էլ խելագարուել են մնացածները: Սեւակը ընտրում է միակ ճիշտ որոշումը՝ այո, ինքը խելագարուած է, բայց խելագարութիւնը ոչ միայն չարիք չէ, այլեւ լաւ կը լինէր, որ ինքը եւ ուրիշները միշտ գտնուէին այդ վիճակում:

Եւ ինձ լսելով՝
Կարող են ասել.
«Գժուե՞լ է, ի՛նչ է»:
Իսկ ես էլ կ'ասեմ.
«Այո՛, գժուե՛լ եմ,
Ինչո՞ւ չգժուել»:

Ա՛խ, ուր էր թէ ես միշտ գի՛ժ լինէի...

Սակայն ինչո՞ւ է Սեւակը այդքան մտահոգուած անհատասարութեան խնդրով: Գուցէ նրա համար, որ այս խնդիրը, արդէն 200 տարի գտնուելով փիլիսոփաների ուշադրութեան կենտրոնում,

չի կարողանում գտնել իր բաւարար լուծումը: Իսկ դուցէ նրա համար, որ բանաստեղծը իր կաշուի վրայ էր զգում այն ճշմարտութիւնը, որ ստեղծագործութիւն կարող է ծնուել միայն անհաւասարութիւնից: Այս խնդիրը նոր չէ: Այս խնդիրը ծագեց այն ժամանակ, երբ սոցիալիստները, անիշխանականները, կոմունիստները, ժողովրդավարականները, ռադիկալները ու բոլոր տեսակի լիբերալները հաւասարութիւնը դարձրին մի տեսակ կրօն, այն հռչակելով որպէս բացարձակ արդարութեան չափանիշ: Այդ հաւասարութիւն քարոզողների մէջ չգտնուեց եւ ոչ մէկը, որ նկատէր, թէ ինչպէս է իրենց արդարութեան չափանիշը ատոմ դարձնում մարդկանց, իսկ հասարակութիւնը՝ ատոմներից բաղկացած մի չինուածք:

Բայց մարդիկ ատոմներ չեն, նրանք անձեր են, ընդորում ամէն մէկը իր տեսակի մէջ միակը ու անկրկնելի: Պատահական չէ, որ Դոստոեւսկին երեխայի մէկ արցունքը իւան կարամազովի բերնով համեմատում է տիեզերական արդարութեան հետ: Նոյնը անում է Պարոյր Սեւակը.

Նաեւ հասկանա՛ք,
Որ մեր իսկ արեան գնդիկը մանրը
Այս երկիր կոչուած գնդից աւելի մեծ է ու ծանրը...

Երեւի Բերդեաեւը առաջինն էր, որ կրօնական դիրքերից քողքեց հաւասարութեան դէմ: «Եթէ հաւասարութիւնը պէտք է մարդուն ազատի տառապանքներից, — ասած նա, — ապա դա ամենամեծ յանցանքը կը լինի մարդու դէմ: Մարդու տառապանքների, ինքնահաստատման համար մղուող պայքարի եւ, վերջապէս, մարդու ճակատագրի իմաստի մէջ է անձի էութիւնը»:

Շատերին այսօր այս միտքը յետադիմական պէտք է թուայ: Բայց, անկախ մեր ցանկութիւնից, անհաւասարութիւնը տիեզերական կարգի հիմքն է, նա անհատականութեան եւ անհատականութիւնից բխող ստեղծագործութեան աղբիւրն է:

Ստեղծագործութիւնը, ծնւում է անհաւասարութիւնից եւ ինքնըստինքեան առաջացնում է անհաւասարութիւն: Եթէ տիե-

գերքը եւ մարդը ծնուել են անհատասարութիւնից, ապա քացարճակ հաւասարութիւնը քաոս է: Հաւասարութեան պաթոսը առաջանում է պարզ նախանձից: Այս ամէնը հիանալի հասկանում են ստեղծագործութեամբ զբաղուած մարդիկ, որոնց ամէն մի ստեղծագործական քայլը աւելացնում է անհատասարութիւնը: Հաւասար աղիւսներից կառուցուած չէնքը, հաւասար ձայներից կազմըւած երաժշտութիւնը, հաւասար բառերից կազմուած բանաստեղծութիւնը, հաւասար ներկերից կազմուած նկարը ու հաւասար բջիջներից կառուցուած մարդը անհատասարութեան յուշարձաններն են:

Եւ ստեղծագործ Սեւակը չէր կարող դա չհասկանալ: Ու, ինչպէս շատ ուրիշների, անհատասարութեան փիլիսոփայութիւնը Պարոյր Սեւակին էլ տանում է դէպի մարդապաշտութիւնը: Թւում է, թէ Սեւակի հաւատքը մարդու նկատմամբ նմանւում է ֆրանսիական լուսաւորականների հաւատքին, որոնք աստուածապաշտութիւնը պարզապէս փոխարինել էին մարդապաշտութեամբ: Ռուսօն, օրինակ, համարում էր, որ մարդը այնքան կատարեալ է, որ բաւական է նրան ազատութիւն չնորհել եւ արդար հասարակարգը կը ստեղծուի ինքնըստինքեան: Այդպիսին չէ Սեւակի հաւատքը: Նա զուրկ է Ռուսսոյի միամտութիւնից: Նա հաւատում է մարդուն՝ նրա բոլոր թերութիւններով հանդերձ: Ահաւասիկ.

Ինչո՞ւ թաքցընեմ.
Ես ճանաչում եմ ու գիտեմ մարդուն:
Ի՛նչ ասես չկայ նրա փակ սրտում:

Գիտի կործանե՛լ,
Բայց եւ... գո՛րծ անել,
Մատնութիւն գրած նո՛յն իր ձեռքերով՝
Աշխարհ լցնել շռայլ թերթերով:

Նո՛յն այդ ձեռքերով՝
Ե՛ւ նրագ մարել,
Ե՛ւ խարոյկ վառել:

Նո՛յն այդ ձեռքերով՝
Ե՛ւ դաշնակ խրել,
Ե՛ւ վէպեր գրել:

Ես նրան յաճախ դատափետում եմ,
Երբեմըն նրան նոյնիսկ ատում եմ,
Բայց, ամէնից շատ, խոր հաւատո՛ւմ եմ:

Սակայն եթէ ճիշտ է, որ Սեւակը դիտէ մարդուն իր բոլոր թերութիւններով հանդերձ, արդեօք արժէ՞ հաւատալ եւ աստուածացնել այդ անկատար, իսկ, ըստ չաեերի էլ՝ այդ մարդ կոչուող գարչելի արարածին, որը նախանձ է, չահամոլ ու փառասէր: Արժէ՞ արդեօք նրան ազատութիւն շնորհել:

1531 *թուին, հեղինակի մահից չորս տարի յետոյ, լոյս տեսաւ Մաքիաւելլու հռչակաւոր «Իշխանը» գիրքը: Մաքիաւելլին եղաւ առաջինը, որ փորձեց թափանցել մարդու ոչ թէ փիլիսոփայական, ոչ թէ կրօնական, այլ իրական էութեան մէջ: Նա փորձեց ուսումնասիրել մարդուն, ուսումնասիրել նրա վարքագիծը այն ճշգրիտ մեթոդներով, որոնցից արդէն վաղուց օգտւում էր գիտութիւնը այլ բնագաւառներում:*

Մաքիաւելլին տեսաւ մարդու ի սկզբանէ բնորոշ անկատարութիւնը եւ դրա հիման վրայ փորձեց պատասխանել այն հարցին, թէ ինչ է անհրաժեշտ տիրակալին, իշխելու համար: Ահա սա էր Մաքիաւելլու պատասխանը.

«Այստեղ հարց է ծագում. ո՛րն է գերադասելի մարդկանց ներշնչել սէ՞ր, թէ՞ վախ: Աւելի լաւ կը լինէր նրանց ներշնչել երկուսն էլ, սակայն, որովհետեւ դա շատ դժուար է, աւելի ծեռնտու է ներշնչել վախը: Զէ՞ որ մարդկանց նկատմամբ կարելի է անել հետեւեալ եզրակացութիւնը. նրանք անշնորհակալ են, սըտախօս ու փոփոխամիտ, նրանք ձգտում են հարստութեան եւ խուսափում են վտանգից: Քանի դեռ վտանգը հեռու է, նրանք բոլորը ձեր կողմն են, առաջարկելով մեփական արիւնը, հարստութիւնը, տղաներին ու կեանքը: Սակայն, երբ մօտենում է վտանգը, նրանք դաւաճանում են ձեզ: Ամէն մի տիրակալ, որը

հիմնւում է միայն խոստումների վրայ եւ չի դիմում ղդուշութեան ուրիշ միջոցների, կը կործանուի, որովհետեւ բարեկամութիւնը գնւում է որոշ վարձատրութեամբ, այլ ոչ թէ հոգեկան վեհութեամբ: Ցամենայնդէպս, այդպիսի բարեկամութեան վրայ մարդիկ չեն կարող յենուել վտանգի պահին: Մարդիկ աւելի հեշտութեամբ են կործանում իրենց սիրած մարդուն, քան նրան, ումից վախենում են, որովհետեւ սէրը հիմնուած է խոստումի վրայ, որը ապատաւոր մարդը յաճախ խախտում է: Իսկ վախը հիմնուած է պատժի վրայ, որից մարդը միշտ էլ սարսափում է: Սակայն իշխանը պիտի ստիպի մարդկանց վախենալ այնքան, որ չսիրել հանդերձ, մարդիկ չատեն տիրակալին: Իսկ անել այնպէս, որ վախենան, բայց չատեն՝ հնարաւոր է: Տիրակալը կարող է հասնել դրան, եթէ ձեռք չտայ իր ենթակաների կանանց ու ունեցուածքին: Իսկ եթէ անհրաժեշտ է մէկնումէկի կախել, ապա տիրակալը չպէտք է խլի կախուածի ունեցուածքը, որովհետեւ մարդը չատ աւելի հեշտ է ներում իր հօր սպանութիւնը, քան իր ժառանգութեան բռնագրաւումը»:

Այսօր Մաքիաւելլու այս մօտեցումը կարող է դատապարտելի թուալ, սակայն չորս դար անց էլ մենք տեսնում ենք, որ մարդու վարքագիծը եւ վարքագծի դրդապատճառները չեն փոխուել եւ այսօր էլ իշխանաւորները իրենց իշխանութիւնը պահելու համար օգտւում են մարդկային թերութիւններից:

Մաքիաւելլին առաջինն էր, որ ասաց, թէ սա՛ է մարդը եւ, ուրեմն, այսպէ՛ս կարելի է նրան օգտագործել:

Բայց մի՞թէ Սեւակն էլ այդպէս էր տեսնում: Կամ դուցէ՞ Սեւակը հաւատում է, որ, այո՛, անկատար է մարդը, բայց նրան կարելի է կատարեալ դարձնել: Ո՛չ, ինչպէս տեսանք, դրան Սեւակը չի հաւատում.

Եթէ լեռ եմ՝ դաշտ չեմ դառնայ,
Ոխերիմ եմ՝ հաշտ չեմ դառնայ...

Սեւակի հաւատքը աւելի խորն է: Նրա հաւատքը նմանւում է երեխային ուղղուած մօր սիրուն: Ինչպէս որ մայրը, տեսնելով իր

երեխայի բոլոր թերութիւնները, այնուամենայնիւ, պատրաստ է իր կեանքը զոհելու նրա համար, այնպէս էլ Սեւակը պատրաստ է մարդուն, որը «դիտի կեղծել ու սրբապղծել», կատաբեալ համարել մեզ այն բանի համար, որ զարկելու հետ միասին նա դիտի «զրկել ու փրկել»: Ինչ խօսք, մի քիչ տարօրինակ է այս կատարելութիւնը, բայց պէտք է ենթադրել, որ անկեղծ է Սեւակը, երբ ասում է.

Ես հաւատում եմ կենդանի մարդուն,
Առաւել՝ նրա ծնուելիք որդուն:

Ոմանք պնդում են, թէ Սեւակի անկեղծութիւնը կասկածելի է, թէ նա ստիպուած էր այդպէս գրել, հաշուի նստելով այն պայմանների հետ, որոնց միջով պիտի անցնէր նրա խօսքը: Բայց ինչպէ՞ս կարելի է ենթադրել, որ հետեւեալ տողերի հեղինակը անկեղծ չէ.

Աղաչում եմ.—
Մի՛ վրդովուէք, եթէ ասեն
Փառասէրին հենց փառասէ՛ր,
Ո՛չ թէ համեստ.
Սրիկային՝ հենց սրիկա՛յ,
Ո՛չ թէ ազնիւ.
Հեռակային՝ հենց հեռակա՛յ,
Ո՛չ թէ ներկայ...

Աղաչում եմ.—
Մի՛ վախեցէք անկեղծ խօսքից,
Անկեղծ խօսքը չի սպանում,
Փակ խոցեր է միայն բանում:

Ի հարկէ, Սեւակը անկեղծ է: Նա անկեղծ է եւ այն ժամանակ, երբ անկատար է տեսնում մարդուն, եւ այն ժամանակ, երբ խոնարհւում է այդ անկատար մարդու առջեւ: Եւ այս հակասա-

կան թուացող անկեղծութիւնը ունի մէկ աղբիւր. ՍԵՒԱԿԻ ՄՕՏԵՑՈՒՄԸ ՈՉ ԹԷ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ Է, ԱՅԼ ԿՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ:

Մի՛թէ միայն կատարեալն է սիրոյ արժանի: Մի՛թէ սէրը, յոյսը ու հաւատքը կարող են ենթարկուել տրամաբանութեանը: Այս հարցերն էլ նոր չի ծագել:

Երբ տրամաբանութիւնն մարդկութեան համար դարձաւ մի՞ակ դատաւորը, նա չկարողացաւ նոյնիսկ պատասխանել աւստրիացի հրեայ Օտտօ Վայնինգերի հետեւեալ մտային փորձին: Նա առաջարկում էր մօր առաջ կանգնեցնել երկու երիտասարդի, որոնցից մէկը իր որդին է, իսկ միւսը օտար: Մայրը դիտի, որ իր որդին անբարոյական է եւ հասարակութեանը բոլորովին ոչպիտանի մի մարդ: Գիտի մայրը նաեւ այն, որ միւսը, այդ օտարը, փայլուն ու տաղանդաւոր մի անճնաւորութիւն է: Մայրը կանգնած է սարսափելի ընտրութեան առջեւ. այս երիտասարդներից մէկը պէտք է սպանուի: Ո՞ւմ ընտրել: Վայնինգերը ճիշտ է. մայրը կ'ընտրի օտարին, փրկելով իր անպիտանի որդու կեանքը: Փորձի արդիւնքը ճիշտ է կռահում Վայնինգերը, բայց եզրակացութիւնները ահաւոր են:

Մօր սէրը ամենակեղտոտ զգացմունքն է, — եզրակացնում է նա: Ու մտածում ես՝ սա լի՛նչ խայտառակութիւն է: Մենք փոքրուց սովոր ենք մօր հոգատար ձեռքերին, մօր անքուն աչքերին ու անճնազոհ ոգուն: Մենք, որ այդքան բանաստեղծութիւններ ենք կարդացել ու դրել մօր մասին, ինչպէ՞ս կարող ենք ընդունել Վայնինգերի մտային վարժութիւնների եզրակացութիւնը:

Բայց տրամաբանութիւնը մնում է տրամաբանութիւն՝ մայրը կենդանի թողեց իր անպիտան զաւակին: Ի՞նչ անել: Թքա՛ծ տրամաբանութեան վրայ, — ասում ենք մենք, — մօր սէրը բնական է, եւ, ուրեմն՝ գեղեցիկ է ու արժէքաւոր:

Ահա, — հրճւում է մեր բնազդը, — ուրեմն կան բնազդաւոր-ներ, որտեղ տրամաբանութիւնը նահանջո՞ւմ է, որտեղ դուք հրաժարւում էք նրան դատաւոր դարձնելուց: Այո, — չփոթուած ասում ենք մենք, — երեւի այդպիսի բնազդաւորներ կան: Մենք չատ գոյչ ենք, — չէ՞ որ սովոր ենք, որ տրամաբանութեան դէմ միայն խենթերն են պայքարում:

Բայց մեր բնազդը չարունակում է իր արշաւը:

— Ինչո՞ւ չվոխտուեցիր, — ասում է նա, — ասա քո այդ տրամաբանամոլ վայնինգերին, թող մէկ վորձ էլ դնի, թող մօրից հարցնի. ո՞ւմ սպանել՝ մօրը, թէ՞ որդուն: Եթէ պատասխանը չդիտի, թող կարդայ Աւետիք Իսահակեանի «Մօր Սիրտը»:

Իսկապէս, մօր այս որոշումն էլ տրամաբանութիւնից զուրկ է, բայց ո՛րքան դեղեցիկ է այս անտրամաբանութիւնը: Եւ մենք աւելի համարձակ ենք ըմբոստանում տրամաբանութեան դէմ:

Որպէս յայտնութիւն, ինչ որ մի տեղից առաջանում է քրիստոնէական մտածելակերպը: Խղճմտանք՝ աստուածեան փոխարէն:

Տրամաբանութիւնը անաչառ է ինքն իր մէջ՝ վատը ատի, լաւը սիրի, դեղեցիկը գրկի, տգեղը նետի: Հարիւրը մէկից չատ է, ուստի հարիւրի չահը աւելի արժէքաւոր է, քան մէկինը: Բոլորովին այլ է քրիստոնէական մտածելակերպը: Եւ լաւը եւ վատը արժանի են սիրոյ, առաւել եւս նրա կարիքը ունեն վատերը: Գրկելիս մի մոռանայ, որ տգեղը կարիքը աւելին ունի: Թող 100 ոչխարը եւ դնայ այն մէկ վորած ոչխարի յետեւից:

Ուշադրաւ է պրոֆեսոր Պետիդորսկու պատմութիւնը մէկ յոյն սպայի մասին, որը տեսնելով, թէ 1915 թուին ինչ են արել հայերի հետ թուրքերը, հրաժարուել է կռուել թուրքերի դէմ: Նրանց խղճա՛լ է հարկաւոր, այլ ոչ թէ պայքարել նրանց դէմ, — ասել էր նա: Սա՛ էր նրա պատճառաբանութիւնը, որովհետեւ՝ իսկապէս չատ մեղք են նրանք, ովքեր ընդունակ են այդպիսի վայրենութեան: Այդ խղճմտանքի աչքերով էլ նայում է Սեւակը մարդու անկատարելութեանը, երբ հրաւիրում է բոլորին իր սեղանին:

Թող մօտենայ իմ սեղանին
Նա՛, ում ձեռքը կոշտացել է
Մուրճից, բահից ու եղանից.
Ով տանջանքից կշտացել է
Ու փնտռում է սպեղանի.
Ով կրում է խոցերն անանց
Աղջիկների ու գեղանի

հարս ու կանանց:
Նա կը գտնի այստեղ նրա՛նց,
Ովքեր գիտեն երգել–պարել,
Գրկել–փարել,

Գերել–սիրել,
Ինչպէս նաեւ հիւրասիրել
Ունեցածը լաւ ծախսելով,
Ոչ թէ կիտուած կոպեկներին
Հաւի նման լուռ թխսելով:

Բայց ո՛չ·
այսօր
Ես կանչում եմ նաեւ նրա՛նց՝
Եւ այդ կիսատ–պռատներին,
Այդ ձեռը փակ–ժլատներին:
Թող գան, մարդկանց շարքը դասուեն·
Թէ կարող են՝
Իրենց յիմար արատներից
Թող ամաչեն ու հետ հաշուեն·
Թէ չեն կարող՝
Իրենց մտքում մեզպէսներին
Թող պարզապէս յիմա՛ր հաշուեն...

Մեզ համար հասկանալի է, որ Սեւակը պարզ տեսնում է լաւն ու վատը, արժանի եւ անարժան մարդկանց, բայց իր սեղանի հրաւիրելիս չի ցանկանում խտրութիւն դնել նրանց միջեւ:

Այստեղ արդէն ղգացւում է Աւետարանական այն մեծ ճշմարտութիւնը, որ չարը եւ բարին ծնւում են մարդու կաշկանդուածութիւնից:

Սալինոզան իր «էթիկայում» ասում է, թէ «եթէ մարդիկ ծընուէին ազատ, նրանք քանի դեռ ազատ էին, երբեք չէին ստեղծի չար եւ բարի հասկացութիւնները»: Այս ճշմարտութիւնը հռչակուած էր դեռ Պօղոս առաքեալի կողմից, բայց մարդկութիւնը չըն–

դուներ այն: Իսկ Սպինոզան ընդունեց միայն այն պատճառով, որ ինքը թուլացրեց իր իսկ մեծ դաղափարը, ասելով, թէ նա է միայն ազատ, ով ղեկավարուում է լոկ տրամաբանութեամբ: Իսկ եթէ նա մինչեւ վերջ դնար Աւետարանական ճշմարտութեան յետեւից, ապա կը յանդէր այն եղրակացութեան, որ մարդիկ, եթէ ծնուէին ազատ, նրանք սուտը ճշտից եւ բարին չարից տարբերելու կարիքը չէին ունենայ:

Իսկ ասելի ճիշտ, եթէ մարդիկ ազատ ծնուէին՝ չէր լինի ոչ բարի, ոչ չար, ոչ ճիշտ եւ ոչ էլ սուտ: Հենց այդ ի նկատի ունէր Պլատոնը, երբ ասում էր, որ Աստուածներից եւ ոչ մէկը չէր փիլիսոփայում եւ չէր ձգտում իմաստութեան, որովհետեւ նրանք արդէն իմաստուն էին:

Սակայն Սպինոզան, որ խոնարհւում էր տրամաբանութեան առջեւ, վախեցաւ մինչեւ վերջ դնալ այդ ճանապարհով, այն ճանապարհով, որով դժուարին պայմաններում չվախեցաւ դնալ արդյր Սեւակը: Այդ ճանապարհը բերեց նրան մէկ ուրիշ աշխարհ, որտեղ դիտութեան եւ տրամաբանութեան դերը շատ աննշան էր:

Ո՞րն էր այդ աշխարհը, որ հասկանալի էր Պարոյր Սեւակի համար եւ անհասկանալի մեզանից շատ-շատերի համար:

Ասում են, թէ Արիստոտելը չէր հասկանում Պլատոնին: Ինչպէ՞ս կարող էր դա պատահել: Մենք, որ ապրում ենք նրանից 25 դար յետոյ, որ ծանօթ ենք նրա մտքերի հետ միայն մեզ հասած նրա աշխատութիւնների թարգմանութիւնների միջոցով, հասկանում ենք նրան, իսկ Արիստոտելը՝ Պլատոնի ժամանակակիցը, աշակերտը եւ նրա մտերիմը, որ 18 տարի նստած էր իր ուսուցչի ոտքերի մօտ, չէր հասկանում նրան: Պարզ է, որ նա ոչ թէ չէր հասկանում, այլ չէր ընդունում Պլատոնի ուսմունքը: Այն, ինչ որ ուսուցիչը ընկալում էր որպէս Աստիս, աշակերտի համար սատանայական երեւակայութիւն էր:

Պլատոնը համարում էր, որ աշխարհը անհրաժեշտ է բաժանել երկու մասի, որ բնական եւ տեսանելի աշխարհից բացի գոյութիւն ունի նաեւ գերբնական աշխարհ, որտեղ Սոկրատէսը ամենաիմաստունն էր: Արիստոտելը աշխարհի բաժանումը համա-

րում էր անօգտակար եւ չէր կարողանում հասկանալ այն, ինչ որ ասաց Սոկրատէսը դատաւորներին:

«Եւ դուք, դատաւորներ, հաւատացէք, որ բարօրութիւն է, որ վերջին ճշմարտութեան համաձայն՝ լաւ մարդու հետ ոչ մի վատ բան չի կարող պատահել՝ թէ նրա կեանքի ընթացքում եւ թէ մահից յետոյ, որովհետեւ աստուածները նրան երբեք չեն մոռանում»:

Պլատոնի ուսմունքի էութիւնը Սոկրատէսի այս յայտարարութեան մէջ է: Բայց պարզ է, որ Արիստոտելի իրական աշխարհում Սոկրատէսի խօսքերը դատարկաբանութիւն են եւ սուտ: Եւ միայն այն դէպքում, երբ իրական աշխարհից բացի գոյութիւն ունի մի ինչ որ դերբնական աշխարհ, Սոկրատէսի խօսքերը իմաստաւորուած են:

Բայց որտեղի՞ց է ծնւում այդ երկրորդ աշխարհի գաղափարը, ինչպէ՞ս են ընտրեալները՝ Դոստոեւսկին, Տոլստոյը, Սեւակը եւ ուրիշները ընկալում նրա գոյութիւնը: Չէ՞ որ այդ երկրորդ աշխարհում տրամաբանութիւնը դրեթէ ոչ մի նշանակութիւն չունի եւ, ուրեմն, անկարելի է տրամաբանութեան միջոցով կառուցել այդ երկրորդ աշխարհը: Մնում է միայն մէկ ճանապարհ՝ յայտնութեան ճանապարհը:

Յայտնութեան ճանապարհի մասին պատմել են թէ փիլիսոփաները եւ թէ երաժիշտները, թէ մարդաբէները եւ թէ նոյնիսկ դիտնականները: Պատմում է այդ մասին նաեւ Պարոյր Սեւակը:

Բոլոր օրերից գուցէ առաւել անգոյն–տարտամը
Այս օրն էր որ կար,
Իսկակա՛ն միջակ ու տափակ մի օր·
Բայց նա ինձ համար
Մի արբիմեդեան օր դարձաւ յանկարծ·
Ոչ այն է կարծես նորից ծնուեցի,
Ոչ այն է յանկարծ
(Առաջի՛ն անգամ)
Գտայ ինքս ինձ·—
Խորամուխ եղայ

Ստուերի բազում երանգների մէջ,
Ե՛ւ լոյսի բոլոր զգայարանները ինձ զգացի,
Ե՛ւ ծաղիկների ներկերի հիւթը ինձ յայտնի դարձաւ.
Դարձայ ընդերքի մրափով ապար,
Ժայռի խարաճոս,
Որ արթուն է միշտ.
Դարձայ երազկոտ՝
Ջրհորի նման,
Եւ մտամոլոր՝
Որպէս արահետ.
Ես ըմբռնեցի,
Որ եթէ ունես թոցնող թեւեր՝
Չես զգայ երբեք ծանրութիւնը ֆո.
Եւ ա՛յն հասկացայ,
Որ դրամի պէս
Մաշուել են արդէն բառերը բոլոր.
Հասկացայ նաեւ,
Որ մինչեւ անգամ լաւ է աւելի
Բառերն իրար հետ կապ իսկ չունենան,
Քան թէ չունենան կշիռ ու արժէք...

Պարզ էր, որ այս յայտնութիւնից յետոյ Սեւակի ստեղծագործութեան մէջ կատարւում է այնպիսի նշանակելի փոփոխութիւն, մտնում է այնպիսի մի կարեւոր կրօնական երանգաստրում, որ մենք, ինչպէս Տոլստոյի դէպքում, վստահօրէն կարող ենք խօսել Սեւակի բոլորովին նոր ստեղծագործական ուղղութեան մասին: Սեւակը յանկարծ դիմում է Հին Կտակարանին, «երգ երգոց»ից հանելով գեղեցկուհի Սուլամիթային ու նրա առաջ խոնարհուելով:

1. Գարուն՛ն այս անգամ ձմրանը եկաւ,
Այն էլ հիւսիսում.
Ես բոլորովի՛ն չէի սպասում:
Ձմեռն այս վկայ:

Քեզ չփընտռեցի՛, չը որոնեցի՛
Եւ… գտայ յանկա՛րծ,
Ինչպէս դու մի օր աննուդ ես գտել,
O Սուլամի՛թա:

Ի՞նչ պատահեց օրինապաշտ Սեւակի հետ, որը «Աստուա էր ճիւնը՝ եթէ նա տեղում էր ամառուայ կէսին»: Ինչո՞ւ նա այլեւս չի աստուա զարունը, որ այս անգամ ձմռանն է եկել: Եւ, ընդհանրապէս, ի՞նչ է որոնում խորհրդային քաղաքացի Պարոյր Սեւակը «Հին Կտակարանի» Սուլամիթայի պատմութեան մէջ: Ինչո՞ւ է Սեւակը «սիրում նրա բիբլիական անունը, այն էլ բիբլիական սիրով»: Այս հարցին յստակ պատասխանելու համար անհրաժեշտ է կանգ առնել «Երգ Երգոց»-ի վրայ:

Սա մի դեղեցիկ բանաստեղծական ստեղծագործութիւն է, որը Աստուածաշնչի մաս է կազմում եւ որը վերագրւում է Սողոմոն թագաւորին: Ծաւալով «Երգ Երգոցը» համեմատաբար մեծ չէ: Նա բաղկացած է 117 ոտանաւորից, որոնք բաժանուած են ութը գլխի: Բովանդակութիւնը բարդ չէ:

Ստեղծագործութեան կերոսուհին, մի հասարակ հովսուհի է Սուլամիթա անունով, որը սիրում է մի երիտասարդ հովուի: Սուլամիթան ունի խորթ եղբայրներ, որոնք շատ կոպիտ են վարւում նրա հետ: Նրա խնամքի տակ է դնում մի խաղողի այգի, որտեղ արեւը անխնայ այրում է նրան: Եղբայրները դոհ չեն Սուլամիթայի եւ երիտասարդ հովուի սիրով ու միայն դրքի վերջում, երբ համոզւում են նրանց զգացմունքների անկեղծութեան մէջ, եղբայրները փոխում են իրենց կարծիքը:

Սուլամիթան ունի չափազանց փուփոխական տրամադրութիւն: Ամէն անգամ, երբ նա գալիս է իր սիրածի մօտ, չնայած փոխադարձ մեծ զգացմունքներին, Սուլամիթան անհասկանալի պատճառներով մերժում է նրան: Մերժելուն պէս՝ զղջում եւ կրկին գնում է սիրածի մօտ ու կրկին մեժում:

Ամբողջ ստեղծագործութիւնը ներծծուած է յաւերժ կարօտով: Այդ յաւերժ կարօտը ստեղծագործութեան գլխաւոր նիւթն է: Եր-

կու սիրահարուածները որոնում են մէկը միւսին, բայց անհասկանալի պատճառներ խանգարում են նրանց երջանկութեանը:

Այս երկուսի յարաբերութիւնների մէջ Սուլամիթան կանգնած է առաջին դծի վրայ: Նա տառապում ու պայքարում է իր զգացմունքների հետ: Իսկ երիտասարդը աւելի վրաւորական է: Նա աւելի շատ խօսում է իր սիրոյ մասին, քան թէ գործում այդ ուղղութեամբ: Սակայն, հարց է ծագում, թէ ինչո՞ւ այս աշխարհիկ զգացմունքները նկարագրող ստեղծագործութիւնը մտել է սուրբ գրքի կանոնների մէջ: Աւելին, «Երգ Երգոց» գարնանային աղօթքներից մէկն է: Բանը նրանումն է, որ Սուլամիթայի եւ երիտասարդ հովուի յարաբերութիւնները դիտւում է որպէս Աստծոյ եւ Իսրայէլի յարաբերութիւնների խորհրդանիշ: Յայտնի է, որ 65 թուականին, Երուսաղէմի անկումից մի քանի տարի առաջ, երբ Աստուածաշնչի կանոնները վերանայուեցին, «Երգ Երգոցի» հարցը դեռ վերջնականօրէն լուծուած չէր: Այսինքն պարզ չէր՝ նա կը մտնի՞, թէ՞ ոչ կանոնների մէջ: Սակայն, երբ այդ կանոնների հարցով զբաղուեց Աքիբան, նա յայտնաբերեց, որ «Երգ Երգոց» կանոնների երրորդ մասի մէջ մտած ստեղծագործութիւններից ամենասուրբն է: «Երգ Երգոց» այլեւս չնկատուեց որպէս մի պարզ սէր արտայայտող ստեղծագործութիւն: Սուլամիթան դարձաւ ազգի մարմնացումը, որը մէկ մոռանում էր իր Աստծուն, մէկ վերադառնում նրան: Այս պատկերացման համաձայն, Սուլամիթայի եւ հովուի երկխօսութիւնը ընկալւում է որպէս ժողովրդին ուղղուած Աստծոյ խօսքը: Այս նոյն տեսակէտի վրայ էին կանգնած «Երգ Երգոցի» աւելի ուշ շրջանի մեկնաբանները, թէ հրեական եւ թէ քրիստոնէական:

Նոյնիսկ Լիւթերը, որ յաճախ քննադատում էր Աստուածաշնչի կանոնները, ընդունում էր «Երգ Երգոցի» բովանդակութիւնը որպէս խորհրդանշական: Նոյն տեսակէտի վրայ էր կանգնած Կալվինը:

Միայն հարիւր տարի անց, 1554 թուին Սեբաստիան Կաստելիոն կրկին բարձրացրեց «Երգ Երգոցի» սուրբ բովանդակութեան հարցը: Սակայն այս անգամ էլ «Երգ Երգոցը» յաղթեց, մնալով կանոնների մէջ, որպէս Աստծոյ խօսք:

Ջնայած նրան, որ «Երգ Երգոցի» կրօնական բովանդակութեան հարցը բազմիցս կասկածի տակ տրուեց, Սողոմոնի հեղինակութեան վրայ մինչեւ մեր օրերը ոտնձգութիւններ չկան: Աստուածաշնչի այսօրուայ մեկնաբաններից շատերը «Երգ Երգոցը» վերագրում են Սողոմոնի անձնական յիշողութիւններին, որը իբր թէ իր թագաւորական պալատն է բերել Պաղեստինի հիւսիսում գտնուող Սուլամիթա քաղաքի մի նոյնանուն գեղջկուհու, որը սիրահարուած էր մի հովուի: Շքեղութեամբ ու թագաւորի սիրով չրջապատուած գեղջկուհի Սուլամիթան չարունակում է սիրել իր հովուին եւ Սողոմոնը ստիպուած է լինում ազատ արձակել նրան:

Այս երկրորդ մեկնաբանութեան մէջ «Երգ Երգոցի» սրբութիւնը վեր է ածւում սիրոյ սրբութեան, մաքուր, անդաւաճան սիրոյ գովքի:

Կայ նաեւ մէկ ուրիշ մեկնաբանութիւն: Գրեցը, օրինակ, համարում է, որ «Երգ Երգոցը» գրուել է ոչ թէ Սողոմոնի կողմից, այլ Սողոմոնի դէմ, որպէս քննադատութիւն նրա պալատների չքեղութեան եւ ընդհանրապէս այն ընթացքի դէմ, որը կործանում էր բարոյականութիւնը եւ զարգացնում պճնանքը:

Գեօթէն նոյնպէս համարում էր, որ այս ստեղծագործութիւնը մի ինչ որ մաքուր գաղափար է, որովհետեւ այնտեղ բացակայում են գործողութիւնները: Իրենց տառապանքները հերոսները արտայայտում են միայն բառերով, յիշեցնելով աշխարհի այն սկզբնական չրջանը, երբ եղել է միայն խօսքը:

Եւ պատահական չէ, որ տարբեր մարդիկ այդ ստեղծագործութեան մէջ գտել են տարբեր սրբութիւններ: Ոմանք Աստուած, ոմանք խորհուրդ, ոմանք անձնազոհութիւն, ոմանք մաքրութիւն, բայց ոչ սովորական մարդկային սէր:

Եւ զարմանալին այն է, որ ստեղծագործութիւնն ինքը կրում է բաւականին տարրական բնոյթ ու, դրանով հանդերձ, ոչ ոքի կողմից չի դիտւում որպէս կրքերի սովորական արտայայտութիւն: Ձենք գտնում մենք այդ կիրքը նաեւ Սեւակի մօտ: Մենք ծանօթ ենք Սեւակի սիրուն նուիրուած զուսպ եւ պարզ ստեղծագործութիւններին, որոնք գրուել են շատ աւելի երիտասարդ եւ շատ աւելի կրքերով լի տարիներին: Բայց Սեւակի «Երգ Երգոցը» նման

չէ նրանցից եւ ոչ մէկին: Այսպիսի ջերմութեամբ, այդպէս զըլխակոր, այդպիսի անկեղծութեամբ կարելի էր դիմել միայն Աստըծուն:

Սեւակը իր անկեղծութեամբ, անձնազոհութեամբ ու նուիրուածութեամբ նմանւում է Նարեկացուն, միայն այն տարբերութեամբ, որ Նարեկացին գտել էր իր Աստծուն,, իսկ Սեւակը դեռ որոնումների մէջ է: Սուլամիթեան է նրա Աստուածը, նրա մէջ է որոնում բանաստեղծը սրբութիւնը: Այս տեսանկիւնից արդէն կարելի է հասկանալ Սեւակին, երբ նա բացականչում է.

4· Օ Սուլամի՛թա, օ Սուլամի՛թա,
Մենք, կարծեմ, արդէն խնձորը կերանք,
Ֆանզի նա, ով որ մտոքով է տրւում,
Տրւում է, անշուշտ, մարմնից առաւել···
Ո՞ւր է դրախտը,
Եթէ ոչ՝ միայն ֆո թարթիչների հովանու ներքոյ···

«Երգ Երգոցում» Սեւակը Աթէնքի եւ Երուսաղէմի վէճը փաստօրէն լուծում է յօգուտ Երուսաղէմի.

1· Երուսաղէմում երբեւէ չեղած աղջիկնե՛ր խարտեաշ,
Դուստրե՛ր Հիւսիսի·
Ի՛նձ էլ սնուցէք կազդուրիչ գինով,
Ֆանի որ սիրուց ես նուաղում եմ:

2· Ես նուաղում եմ, իսկ կրծքիս ներքոյ
Կախուած է նաեւ ծանրաբար մի բեռ՝
Սեփական սի՛րտըս:

Որոնում է Սեւակը, բայց դեռ չի գտնում: Նա արդէն գիտէ, թէ որտեղից է գալիս լոյսը, բայց դեռ չի տեսնում.

3· Երուսաղէմում երբեւէ չեղած խարտեա՛շ աղջիկներ,
Դուստրե՛ր Հիւսիսի·

Երուսաղէմում երբեւէ չեղած
Երուսաղէմի դուստրը սեւահեր
Ի՛նձ չի պատկանում:
Նա կայ եւ չկայ՝ ինչպէս երկինքը,
Իմն է – իմը չէ՝ ինչպէս որ ինքը···

4· Ողջ գիշերն ի լոյս իմ մահճակալին
Փնտռում են նրան, չեմ գտնում սակայն:
Ողջ ցերեկն ի բուն իմ նեղ սենեակում
Կանչում եմ նրան, եւ ձայն չի տալիս:
Եւ դուրս եմ գալիս,
Որ փողոցներո՛ւմ որոնեմ նրան:

5· Երուսաղէմում երբեւէ չեղած աղջիկնե՛ր խարտեաշ,
Դուստրե՛ր Հիւսիսի·
Երուսաղէմում երբեւէ չեղած
Երուսաղէմի դստերն եմ փնտռում,
Փնտռում են նրան ես փողոցներում,
Փնտռում են նրան նաեւ ձեր դէմքին,
Գտնում եմ մի մա՛ս, մի նշո՛յլ, մի շո՛ղ,
Իսկ իրեն՝ բնա՛ւ:

8· Երդուեցնում եմ ձեզ· ասացէ՛ք նրան,
Որ սէրն իմ հին է ու վաղընջական՝
Իր բազմադարեան
Հրեական արեան
Եւ նոր՝
Նոր զարթնած իր սրտի՛ նման, –
Հին ու նոր՝
Ինչպէս առաւօտն ինքը:

Սակայն մեծ է Սեւակի ցանկութիւնը՝ գտնել այդ լոյսի աղբիւրը եւ նա խոստանում է գտնել այն: Նա համոզուած է, որ պէտք է գտնի:

13· Դու կարծես չկաս
Ու չես լինելու,
Այլեւս ինձ համար մեռած ես կարծես:
Սակայն ես գիտեմ,
Որ դու անմահ ես,
Ինչպէս անմահ է կրակն աշխարհում·
Այստեղ կը հանգչի,
Կը վառուի այլուր:
Եւ դու – ինձ համար – չե՛ս մեռնի երբեք,
Ինչպէս չի մեռել
Քո նախա–նախա–նախամայրիկը,
Որ քո սիրելի անունն էր կրում,
Իր Սուլամի՛թա:

14· Եւ ուզում եմ ես փորձըս մոռանալ,
Ահաւոր փորձը իմ ամբո՛ղջ կեանքի,
Եւ ի հակառակ անկասկա՛ծ ասել,
Որ կը մոռանայ շունը տիրոջը:
Ծառան՝ իր ծաղկելը,
Ցուլն՝ իր բառաչը,
Եւ ժամապահն՝ իր նշանաբանը,
Սակայն ո՛չ ես՝ էե՛զ,
Իմ Սո՛ւլ···
Սո՛ւլամի՛···
Իմ Սուլամի՛թա···

Բայց Սեւակի վերջնական եւ անկեղծ կրօնական աշխարհայեացքի առջեւ կանոնած էր կեղծ կրօնասիրութիւնը: Այն արտաքին ծիսակատարութիւնների, մատաղների ու կեղծ աղօթքների կրօնը, որը ոչ մի կապ չունի հաւատքի հետ, որով սակայն, դժբախտաբար, լեցուն է այսօրուայ աշխարհը եւ որով զբաղուած են աշխարհի դրեթէ բոլոր կաթողիկոսներն ու կրօնական հայրերը: Չէր կարող Սեւակը գնալ այդ կեղծ հաւատքի ճանապարհով: Չէ՞ որ նրա հաւատքը յայտնութիւն էր: Ու Սեւակը 1970 թուին, իր կեանքի վեր-

Չին օրերին սկսում է իր պայքարը կեղծ հաւատացեալների դէմ, որոնց ջախջախելով միայն, կարող էր ամփոփուել սեփական հաւատքի մէջ:

Արդէն 10 տարի, 110 տարի, 1010 տարի
Ես վախենում եմ,
Շա՛տ եմ վախենում
Բիւրաւոր ու բո՛ւթ հաւատացեալից,
Բիւրատեսք որ սո՛ւտ հաւատացեալից:
Եթէ Աստուած էի՝
Փչեցէ՛ի նրանց բոլոր մոմերը,
Մարեցէ՛ի նրանց կանթեղներն ամէն,
Հանգցրէ՛ի նրանց ջահերն այլազան,
Որ··· եղիցի լո՛յս:
Եւ ո՛չ մի գաւթում մի՛ ընդունեցէի:
Նրանց մատաղը,
Որ իրենցը չէ, այլ գողացուած է:
Մերժեցէի նրանց զո՛հն էլ խոստացեալ,
Որ··· զոհ չգնայ ինքը հաւատը՝
Մաքո՛ւր-վսե՛մը,
Անկե՛ղծ-աննո՛ւտը:
Ու թէ Աստուած էի՝
Ամուր փակեցէի ձեր ականջնե՛րն էլ
Նրանց սողոսկուն աղօթի դիմաց՝
Անգի՛ր-ինքնահո՛ս-հաշուեկշռուա՛ծ այն աղօթների,
Որով խաբում են ո՛չ իրենց,
Այլ ձե՛զ:
Եւ – բաւակա՛ն է – հասկացէ՛ի ընդմիշտ,
Որ Աստծուն ո՛չնչիսկ հայհոյողները
Շա՛տ աւելի են գերադասելի,
Վասնզի նրանց բարկացրել է ինքը հաւատը՝
Խոցուա՛ծ-արիւնո՛տ,
Այրուո՛ղ-ապտակուա՛ծ,
Ցաւա՛ծ-նչացո՛ղ,

Մանո՛ւկ հաւատը,
Որ հայր դառնալու համար է ծնուել:
Ու եթէ հայր էի՝
Մի՛ թողէի,
Որ սուտ հաւատացեալներն ապաւեն նրան:
– Ինչ֊ման էլ ծանր է մանուկ թաղելը,
Մանուկ պահելը ծանր է աւելի…

Ո՞վ իրաւունք տուեց Սեւակին դատապարտել այսպէս կոչուած կեղծ հաւատացեալներին: Ո՞վ նրան ասած, որ նրանց հաւատքը կեղծ է: Պատասխանը չատ պարզ է՝ Աւետարանը, Յիսուսի ուսմունքը: Ահաւասիկ.

«Զգո՛յշ եղէք, որ ձեր ողորմութիւնը մարդկանց առջեւ չանէք, որպէս թէ այն լինի ի ցոյց նրանց. դուցէ վարձ էլ չընդունէք ձեր Հօրից, որ երկնքում է: Այլ երբ ողորմութիւն անես, փող մի՛ հնչեցրու քո առջեւ, ինչպէս անում են կեղծաւորները ժողովարաններում եւ հրապարակներում, որպէսզի փառաւորուեն մարդկանցից: Ճշմարիտ եմ ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը: Այլ երբ դու ողորմութիւն անես, թող քո ձախ ձեռքը չիմանայ, թէ ինչ է անում քո աջը, որպէսզի քո ողորմութիւնը ծածուկ լինի, եւ քո Հայրը, որ տեսնում է ծածկապէս, կը հատուցի քեզ յայտնապէս: Եւ երբ աղօթես, չլինե՛ս կեղծաւորների նման, որոնք սիրում են ժողովարաններում եւ հրապարակների անկիւններում աղօթքի կանգնել, որպէսզի մարդկանց երեւան. ճշմարիտ եմ ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը: Այլ դու երբ աղօթես, մտի՛ր քո սենեակը, փակիր քո դռները եւ ծածո՛ւկ աղօթիր քո Հօրը, եւ քո Հայրը, որ տեսնում է ծածկապէս, կը հատուցի քեզ յայտնապէս»:

Մի՞թէ այս նոյնը չի ասում Սեւակը:

Շատերը, եթէ ոչ բոլորը, Սեւակ ասելով «Անլռելի Զանգակատուն» են հասկանում: Բայց իսկական Սեւակը «Եղեգիր Լոյսն» է, որովհետեւ այստեղ է նա «նոր աշխարհ ստեղծում իր համար», որովհետեւ այստեղ է նա առաջին անգամ տեսնում իսկական լոյսը:

Բայց ո՞րն է իսկական լոյսը, ի՞նչ իմանանք, որ մեր տեսածը իսկապէս լոյս է, ինչպէ՞ս հաշտեցնենք հղօր գիտութիւնը մեր տեսածին հետ, մեր տրամաբանութիւնը մեր ղգացմունքներուն հետ, մեր երեւակայութիւնը իրականութեան հետ:

Եթէ փիլիսոփայութիւնը գիտութիւն է եւ մեր սովորական աչքերով տեսածը իրականութիւն, հապա ինչո՞ւ են մարդիկ այդքան շատ խօսում անկեղծութեան մասին եւ պահանջում փիլիսոփաներից, արուեստագէտներից ու մարդարէներից անկեղծութիւն: Եթէ փիլիսոփայութիւնը քիմիայի, ֆիզիկայի կամ երկրաչափութեան նման սովորական գիտութիւն է, մեր ի՞նչ գործն է, թէ անկե՛ղծ են արդեօք փիլիսոփաները: Զէ՞ որ մենք չենք հետաքրքրւում այն ֆիզիկոսի անկեղծութեամբ, որը, օրինակ, պնդում է, թէ հեղուկների եռման ջերմաստիճանը կախուած է ճնշումից:

Երկրաչափութիւնը ասում է, որ շրջանագծի եւ տրամագծի յարաբերութիւնը հաստատուն մեծութիւն է, եւ ոչ ոքի գլխով անցում չի անցնում մտածել՝ անկե՞ղծ է արդեօք երկրաչափութիւնը: Ըստ երեւոյթին, փիլիսոփայութիւնը գիտութիւն չի համարում եւ փիլիսոփան էլ գիտնական չէ, եթէ նրանից անկեղծութիւն է պահանջւում: Ըստ երեւոյթին, փիլիսոփան ուղղակի վկայ է, որը վկայում է այնպիսի բաների մասին, որոնք անկարելի է ենթարկել ստուգման:

Իսկ եթէ այդպէս է, ապա պահանջում է անկեղծութիւն: Բայց ինչպէ՞ս վարուել, եթէ իրենց անկեղծ համարող տարբեր վկաներ վկայում են տարբեր բաներ:

Կանտը, Դեկարտը, Պասկալը, Սպինոզան, Շոպենհաուէրը՝ այս բոլոր անկեղծ վկաները վկայում էին տարբեր բաներ: Հերակլիտը, օրինակ, ժխտում էր հակասութիւնները, փոխարէնը տեսնելով ներդաշնակութիւն: Արիստոտելը կասկածում էր նրա անկեղծութեան մէջ: Անցան հազարամեակներ եւ Հեգելը՝ Արիստոտելի երկրպագուն, պաշտպանութեան տակ է առնում Հերակլիտին: Ինչպէ՞ս որոշել, թէ ով է անկեղծ. Հերակլիտը եւ Հեգե՞լը, թէ՞ Արիստոտելը,

Անկե՞ղծ է արդեօք Սեւակը: Անկե՞ղծ են ընդհանրապէս արուեստագէտները: Այս հարցերի միակ պատասխանը հետեւեալն է.

ԻՍԿ ՄԵՐ Ի՛ՆՉ ԳՈՐԾՆ Է՝ ԱՆԿԵՂԾ ԵՆ ՆՐԱՆՔ ԹԷ ՈՉ։ ՄԻԵՒՆՈՅՆ Է, ՄԵՆՔ ՆՐԱՆՑ ՉԵՆՔ ՀԱՒԱՏԱՑ, ԵԹԷ ՆՐԱՆՔ ԱՍԵՆ, ԹԷ ՏԵՍԵԼ ԵՆ ԱՅՆ, ԻՆՉԸ ՄԵՆՔ ԱՆԸՆԴՈՒՆԱԿ ԵՆՔ ՏԵՍՆԵԼՈՒ։

Սեւակը հիանալի գիտակցում է, որ մարդիկ ամէն ինչ չափում են սեփական չափանիշներով, դրա համար էլ նա ցանկանում է անջատուել մարդկանցից, իր սեփական աշխարհը իր տեսածի հիման վրայ կառուցելու համար։

Սակայն նա համոզուած է, որ այդ աշխարհը այնքան դեղեցիկ կը լինի, որ նա կառուցելուց յետոյ կը կարողանայ յանձնել այն մարդկութեանը։

Ու ես անյապաղ
Անջատում եմ ինձ
Աշխարհից ծանօթ
Ու պարպում եմ ինձ,
Դարձնում մի անօթ,
Որ լոկ դատարկ չէ,
Այլ նաեւ անօդ։
Եւ... ինո՛ր աշխարհ եմ ստեղծում հիմա՝
Առայժմ եթէ ոչ ձեզ բոլորիդ,
Ապա գոնէ ի՛նձ, միայն ի՛նձ համար,
Որպէսզի նախ ե՛ս
Եւ հետց ի՛նձ վրայ
Բժշկի նման փորձարկեմ կարգին,
Ու եթէ լինի այս անգամ սարբին՝
Նո՛ր միայն վստահ յանձնեմ ձե՛զ նաեւ,
Եւ ապրէք այնտեղ դուք մարդավայել։

Ինչպէ՞ս պէտք է կառուցէր Սեւակը իր աշխարհը։ Ո՞ր դիտելիքներ հիման վրայ։ Այստեղ կարելի է մի երկու խօսք ասել դիտելիքներ ձեռք բերելու մասին։ Եթէ տեսողութիւն բառը մենք օգտագործենք լայն իմաստով, ապա դիտելիքներ ձեռք բերելու

մխակ աղբիւրը մեր տեսողութիւնն է: Իսկ եթէ դա այդպէս է, հապա ինչո՞ւ արուեստագէտի տեսածին մենք աւելի քիչ ենք վըստահում եւ նրա տեսածը գիտելիք ու գիտութիւն չեն համարում:

Այն ի՞նչն է, որ զգայմունքների ընկալածին տալիս է գիտական վստահութիւն եւ գիտական անսխալութիւն: Մեր բանականութիւնը, որը իր սեփական օրինաչափութիւնների համաձայն նկարագրում է տեսածը: Բայց ինչո՞ւ մենք պէտք է մեր բանականութեանը վստահենք աւելի, քան մեր զգայմունքներին: Այս հարցին փիլիսոփաներից եւ ոչ մէկը չի կարողացել պատասխանել:

Դա փորձեց անել Դեկարտը, որը առաջարկում էր ամէն ինչ կասկածի ենթարկել, բայց ի վերջոյ հռչակեց իր «Ես մտածում եմ, ուրեմն կամ» թէզը, որը կրկին ոչինչ չբացատրեց: Նոյն յաջողութեամբ նա կարող էր ասել, որ «ես կամ, որովհետեւ յուզւում եմ, լալիս եմ, տեսնում եմ, սիրում եմ, քրտնում եմ» եւ այլն: Եւ, ի հարկ է, Սեւակը իր չինութիւնը կառուցում է այլ աղիւսներից, առանց գիտութեան ու տրամաբանութեան: Նրա լոյսը ոչ թէ էլեկտրականութիւնից է ծնւում, այլ մթութեան խըտացումից, բայց ոչ ինքնաբերաբար: Նրա համար, հակառակ բոլոր ֆիզիկական օրինաչափութիւններին, «մութը առջեւից – մութը յետեւից՝ սեղմում են այնպէս, որ մենք անվերջ խտանում ենք»:

Սեւակը հրաժարուել է բոլոր այն ուժերից, որոնց ուսումնասիրում է գիտութիւնը եւ որոնց չնորհիւ վերակառուցւում է աշխարհը: Այդ վերակառոյցը Սեւակի սրտով չէ, նա ցանկանում է այլ վերակառոյց, այլ ուժերի չնորհիւ.

Ես նախկինն եմ, բա՛ն չի փոխուել·
Առաջուայ պէս ուժն եմ սիրում,
Նախ եւ առաջ՝ ո՛ւժը,
Յետոյ՝ ո՛ւժը կրկին,
Բայց այս անգամ արդէն ո՛չ ձեր հասկացածը·
Կարեկցանքի՛
Եւ բարութե՛ան ուժն ահարկու,
Որ զօրեղ է ինչպէս··· հացը,

Հզօր, ինչպէս··· մանկան լացը, –
Կարեկցանի՛ր
Եւ բարութե՛ան ուժն ահարկու:

(Եւ յաղթում է նա ինձ հիմա՝
Հայրենիքի՛ կանչի նման)···

Արագ թափով զարգանում է դիտութիւնը: Կիբերնետիկան հրաշքներ է գործում: Խորհրդային Միութիւնում դիտնականները վիճում են առասպելական մի հարցի շուրջ· «Կարո՞ղ է արդեօք հաշուիչ մեքենան մարդուց խելօք լինել»:

Զոր տրամաբանութիւն ունեցող դիտնականները առանց տատանուելու պատասխանում են, որ՝ այո, կարող է, չէ՞ որ մարդն էլ նիւթից է բաղկացած:

Ակադեմիկոս Կալմագորովը պարզապէս խեղճացրել է դրակառնագէտ ակատէմիկոս Բեալիկին, որը փորձում է ապացուցել, թէ դեղեցիկի բնագաւառում հաղիւ թէ մեքենաները կարողանան փոխարինել մարդուն: Բայց Կալմագորովը առիւծի նման յարձակւում է այդ խղճուկ գառնուկների ձայների վրայ: «Մեքենաները արդէն բանաստեղծութիւններ ու երաժշտութիւն են գրում», — ամբիոններից ու մամուլով գոռում են դիտնականները եւ գառնուկների ձայները կտրւում են: Չէ՞ որ Կալմագորովը մաթեմատիկոս է, իսկ գառնուկները արուեստագէտներ: Կալմագորովի թիկունքում կանգնած է հզօր դիտութիւնը, իսկ գառնուկները անպաշտպան են:

Բայց չի լռում Սեւակը: Իր տաղանդի ամբողջ ուժով, յամարձակօրէն նա նետում է Կալմագորովների երեսին իր ամենափայլուն ստեղծագործութիւններից մէկը·

Հաշուո՛ւմ էք, հաշուո՛ւմ···

Հաշուեցէ՛ք հապա
Թէ ի՞նչ ալիքով, քանի՞ վայրկեանում
Եւ քանի՞ կրամ արիւն է հոսում աղջըկայ սրտից
Դէպի ամօթխած այտերը նրա՝

Առաջ բերելով ա՛յն բոնկումը ջերմամիջուկեան,
Որ մինչեւ այսօր, միամտաբա՛ր, շիկնաւիճ եմ կոչել:
Եւ կոսմիկական ճառագայթների ի՞նչ հոսք է անցնում
Մեր մթնոլորտուած աչքերի միջով,
երբ յանկարծակի նրանք դիպչում են ուրիշ աչքերի,
Եւ այս փոխադարձ ճառագայթումը
վտանգաւո՞ր է մեր սրտի համար,
թէ՞ օգտակար է:

Հաշւո՛ւմ էի, հաշւո՛ւմ...

Հաշուեցէ՛ք հապա, թէ մեր ափերով
Քանի՞ կիլովատ հոսանք եմ տուել
Երեխաների մազերին փափլիկ ու թաթիկներին,
Մեր սիրածների իրանին նկուն,
Ուսերին նկուն մեր տատիկների,
Եւ մեր ստացածն ինչքա՞ն է պակաս
կամ ինչքա՞ն աւել:

Թէ չէ՝ հաշւո՛ւմ էի, հաշւո՛ւմ էի, հաշւո՛ւմ...

Հաշուեցէ՛ք, խնդրե՛մ, հաշուեցէ՛ք նաեւ,
Թէ մեզնից գոնէ մէ՛կը իր կեանքում
Քանի՛ կնոջ է տեղչանքով նայել,
Քանիսի՛ն՝ մաքուր մի հիացմունքով,
Քանիսի՛ն միայն եղբօր բնիշդութեամբ...

Նշեցէք նաեւ տեղերն ա՛յն կանանց,
Որ կարող էին մեզ խորունկ սիրել,
Բայց մենք այդպէս էլ չհանդիպեցի՛նք:
Եւ քիւն ասացէք ա՛յն մանուկների,
Բայց մենք չունեցա՛նք ու չե՛նք ունենայ:
Եւ քիւր նաեւ ա՛յն մանուկների,
Որ պիտի մերը լինէին կարծես,
Բայց մերը չեղա՛ն...

Թէ չէ՝ հաշուո՛ւմ էի, հաշուո՛ւմ էի, հաշուո՛ւմ…

Մենի դեռ մի կարգին չգիտենի նոյնիսկ,
Թէ այդ ինչի՞ց է մարդը ծիծաղում,
Մի՛ միայն մարդը,
Եւ ո՛չ մի ուրիշ կենդանի էակ:
Դուի մեր ծիծաղի
Ալիքների թիւն ասացէի հապա,
Ցոյց տուէի նրանց գոյները պէս-պէս
Եւ մծիծաղի ու բրիջոցի
Տարբերութիւնը հասկացըրէի մեզ…

Ելեկտրոնական մեր գանգով հուժկու
Ու նառագայթուն-անսպիտակուց-կիկլոպեան բիբով
Տարրալուծեցէի կարօտն էլ հապա,
Բաղադրեցէի այն ծուխն էլ անտես,
Որ անջատւում է միշտ այդ կարօտից
Եւ ո՞ւր է բաշւում…

Թէ չէ՝ հաշուո՛ւմ էի, հաշուո՛ւմ էի, հաշուո՛ւմ…

Ա՛յն թուականը նշեցէի հիմա,
Գէթ այն մօտաւոր-մօտալուտ տարին,
Երբ որ, վերջապէ՛ս, ազգերը խոցուած
Պիտի ողջանան կամ ապաքինուեն,
Եւ վիրաւորող ազգերն ստանան
Հատուցումն արդար ու չբեկանուող:

Թէ չէ շատերը, բանի՛ դար արդէն,
Յոյսերը կտրած անողորմ Աստծուց
Սպասո՛ւմ են դեռ:
Սպասո՛ւմ են դեռ:
Դո՛ւի նո՛ր աստուածներ նո՛ր ժամանակի,
Սուտ դուրս չգայիի գէթ դո՛ւի, գոնէ դո՛ւի…

Հաշուեցէ՛ք հապա ու թիւն ասացէք
Երկրներ կապող ա՛յն կամուրջների,
Որոնց վրայով
Կ՚ուզէինք նաեւ մե՛նք անցած լինել,
Բայց դեռ չե՛նք անցել
Ու չե՛նք անցնելու·

Թիւր ցոյց տուէք
Ա՛յն երազների եւ անուրջների,
Որ այս բառով են կոչւում աշխարհում
Լոկ ա՛յն պատճառով,
Որ չեն կատարու՛մ···

Անկասկածելի թիւր նշեցէք ա՛յն կասկածների,
Ինչից մենք յաճախ հասունացել ենք,
Առաւել յաճախ վաղաժամ թօշնել···

Ցոյց տուէք գիծը հիասթափութե՛ան,
Եւ յուսանք,
Որ դա գէթ չի ունենայ ձեւը կայծակի···

Եւ գիծը նաեւ յուսախաբութե՛ան,
Ու մեր կեանքի հետ
Վա՛յ թէ հենց կազմի զուգահեռութիւն,
Իսկ զուգահեռը զուգահեռի հետ
Չի՛ հատում կարծեմ···

Եւ թիւն ասացէք
Մեր ա՛յն ժամերի, անթի՛ւ–անհամա՛ր,
Որ ծանր ու թեթեւ ժամանակներում կորա՛ն–գնացի՛ն
Ինչ–որ հերթերի
Ու երթերի մէջ
Եւ ընթերցման մէջ ա՛յն բազմալեզու օրաթերթերի,

Որանց սեւաբոց գլխագրերից
Ամէն առաւօտ
Հրաւիրքների կենտ աչքն է նայում մեր զոյգ աչքերին,
Սուզանաւերն են մեր տեղչաւիճները հոգու մէջ սուզում,
Ջրածընային արկերն են ուզում
Մեր երակների կարմիր արիւնից
Ճերմակ ջուր ծնել...

Այսքանից յետոյ պիտի՛ որ հաշուէք
Եւ ասէ՛ք, թէ դեռ քանի՞ տոնն ատամ ներքելուց յետոյ
Հեշտ կարելի է այս երկրագնդի միջուկն էլ ներքել:
Պիտի՛ որ հաշուէք,
Թէ դեռ ի՞նչ զենքեր ծնելուց յետոյ
Մայրը կը զրկուի զաւակ ծնելու կարողութիւնից:
Թէ այսքանն ասէք՝
Էլ հարկ չի՛ լինի, որ ասէք նաեւ
Ծանրութեան չափը հաւատազրկման:
Կը մնայ միայն, որ պարզաբանէք,
Թէ ի՞նչ հարշոով
Հաւատազրկման այդ բեռան ներքոյ
Մինչեւ վիզներս չենք խրուած հողում՝ սուր ցցի՛ նման...

Բարեկամաբար ասացէ՛ք նաեւ.
Քանի՞ տարին մէկ աշխարհ է գալու
Ա՛յն անտերսենեան մանուկը,
Որից
Թագաւորները պիտի խմանան,
Որ մերկ են իրենք:
Եւ խնդրեմ՝ նաեւ աւելացըրէ՛ք.
Այդ խմանալով
Թագաւորները
Ծածկո՞ւմ են արդեօք մերկութիւնն իրենց,
Թէ՞ շարունակում կրկին մերկ մնալ
Եւ հակառակը կամեցողներին

Կամ թէ պարզապէս ամաչողներին
Հարկադրըրում են՝
Աշխարհում ապրել կապուա՛ծ աչքերով…

Եւ ասէ՞ք գուցէ,
Թէ պեթհովենեան խլուքիւնն արդեօք
Զի՞ կապւում բնաւ
Ա՛յն ահագնացող պայքիւնների հետ,
Որ կատարւում են հիմա աշխարհում
Եւ վե՛ր աշխարհից:
Ու թէ կապ ունի, խնդրե՛մ, պարզեցէ՛ք.
Աշխարհը հիմա
Անքիւ–անհամար պեթհովէնեներով՞ կը երջանկանայ,
Թէ՞ կ'աւելանայ պարզապէս թիւը խլացածների…

Հաշուեցէ՛ք նաեւ, մի վերջի՛ն անգամ,
Թէ այդ ի՞նչ ձեւով,
Ի՞նչ մեքենայի օգնութեամբ պիտի
Դեռ կարելի է մարդուն մա՛րդ պահել
Եւ կամ նո՛ր միայն մարդուն դարձնել Մա՛րդ…

Կասկած չկայ նրանում, որ Սեւակը իր աշխարհը կառուցում էր այլ օրինաչափութիւնների հիման վրայ, այն օրինաչափութիւնների վրայ, որոնք տեսանելի էին դարձել մի նոր լոյսի շնորհիւ: Ու տեսնելուց յետոյ, Սեւակը երեխայի պէս հրճւում է այդ լոյսով.

Լո՛յս, լո՛յս զուարթ,
Լոյս զուա՛րթ ու գերազանցի՛կ,
Լոյս երգեցի՛կ ու նուագո՛ւն:
Դու՝ առաքեալ ամէնօրեայ,
Որ բերում է միայն հաւատ,
Բայց ի դերեւ հանում–վանում
Եւ ջղաձածկ–ծպտեալ յոյսերը:

Դու՝ սուրհանդակ, բայց եւ կաւատ,
Դու՝ հետախոյզ, բայց եւ մատնիչ,
Բայց ամենից առաջ՝ միշտ սէ՛ր
Եւ ամենից յետոյ՝ միշտ սէ՛ր...

Ի՞նչ օրինաչափութիւններ տեսանելի դարձան այդ լոյսի տակ: Ինչո՞ւ այդ լոյսը Սեւակը անուանեց «Շաղառն առաւօտի»: Այդ օրինաչափութիւնները զարմանալիօրէն նմանւում են նրանց, որոնք տեսան Դոստոեւսկին ու Տոլստոյը: «Իսկ դուցէ մարդուն տառապա՞նք է հարկաւոր», — բացականչում էր Դոստոեւսկին: «Միայն տառապանքից կարող է վերածուել մարդը», — ասում էր Տոլստոյը: Նոյն միտքը կրկնում է նաեւ Սեւակը.

Եւ այդ ո՞ւմ է պէտք
Պատգամախօսի մեր ծիծաղելի վստահութիւնը,
Եթէ օրէնսդիրն այն ցաւն է միայն,
Որի ծնունդն եմ:
Ու կնճիռների վայրիվերումը
Բնաւ էլ պա՛ր չէ,
Այլ մի այնպիսի՛ արարողութիւն,
Որով ամէն օր սրբագործւում է իմը ճակատը:
Ուրեմն էլ ինչո՞ւ, սիրելինե՛րս, ինչո՞ւ խուսափել
Եւ ցա՞ւն է արդեօք վտանգաւորը,
Թէ՞ հենց այն դեղը,
Որով ձգտում եմ ցաւը դարմանել, –
Այս տափակ հարցին
Ո՞վ պիտի իր սուր պատասխանը տայ,
Այդ ո՞վ կարող է ցաւի հետ վիճել,
Այդ ո՞ր յիմարը,
Եթէ ցաւի հետ վիճելը նոյնն է,
Ինչ ծովի վէճը աղաջրի հետ:
Ուրեմն՝ էլ ինչպէ՞ս, սիրելինե՛րս,
Մենք ինչպէ՞ս պոկուենք իմ ներքս մեզնից

Տոլստոյի ու Դոստոեւսկու նման Սեւակը մաքրութիւն է ո-րոնում աշխարհի համար։

Աշխարհին, այո՛, մաքրութի՛ւն է պէտք՝
Ա՛յն հերոսների տխրունակ տեսով,
Որոնք մեռնում են··· անգործութիւնից···
Նաեւ ա՛յն կանանց, որոնք մինչեւ մահ
Ճանաչում են լոկ մէ՛կ տղամարդու···
Եւ կերպարանքով ա՛յն տղամարդկանց,
Որոնք ֆայլում են գլխահակ թէպէտ
Ու միայն իրենց ոտքի տակ նայում,
Բայց իրենց միտքը, անկախ իրենցից,
Իրենց լքելով՝
Թռչում է վերեւ,
Իսկ երբ յոգնում է՝ գալիս, նայի պէս,
Թառում է մարդու ախտի եւ բախտի
Համաշխարհային ովկիանի վրայ···

Տոլստոյի ու Դոստոեւսկու նման Սեւակի մէջ պայքարում են նոր եւ հին էութիւնները, եւ բանաստեղծը՝ Տոլստոյի եւ Դոստոեւսկու նման երբեմն ուզում է բռնել իրենից փախչող իր հին էութիւնը։

Ա՛խ, փախստական իմ էութիւնը պէտք է ե՛տ բերել,
Մի կերպ ե՛տ բերել, թէկուզ խաբելո՛վ,
Թէ չէ դատարկուած իմ բարանձաւում
Ամայութիւնն է գկրտում անվերջ,
Թէ չէ արբնացած իմ չղջիկներն են աչքերիս զարկւում,
Իրեն լպրծուն թեւերով կախւում իր թարթափներից,
Իբրեւ գորշ կաթիլ հոգու արցունքի՝
Ա՛յն համաչափուած կաթոցի ձեւով,
Որ ընդամէնը լոկ ֆա՛ր չի ծակում,
Այլ համբր եւ խուլ վայրկեաններին էլ պարգեւում է ձա՛յն
Եւ դրանով իսկ կետադրում է անտրրոհ օրը·

Դոստոեւսկու ու Տոլստոյի նման Սեւակը անճանաչելի է համարում ճշմարտութիւնը ոչ մարդարէների համար: Նա համարում է, որ ճշմարտութիւն ստեղծելու բոլոր փորձերը նմանւում են խաղալիք սարքող վարպետի ճիղերին:

Ու... հասկանում եմ, որ ես չե՛մ կարող
(Եւ աշխարհումըս ո՛չ ոք չի կարող)
Լոկ մի՛ բան սարքել՝
Ա՛յն միայն,
Ինչին ճշմարտութիւն են կոչել աշխարհում:

Սակայն, ի տարբերութիւն Դոստոեւսկու եւ Տոլստոյի, Սեւակը չի հրաժարւում ճշմարտութիւն կերտելուց: Եթէ ուրիշները սարքում են, հապա ինչո՞ւ ես չպէտք է սարքեմ այդ ճշմարտութիւնը, — ասում է նա, — եւ միացնում իր ճիղերը ուրիշ ճշմարտութիւն կերտողների ճիղերին:

Սարքո՛ւմ են:
Իսկ ես ումի՞ց եմ պակաս:
Եւ... վճռուա՛ծ է.
Ե՛ս էլ այսուհետ
Ճշմարտութիւն եմ սարքելու, եւ շա՛տ:

Բայց Սեւակը երբեք չի մոռանում, որ իր ճշմարտութիւնը սարքովի է:

Սակայն խաղալիք սարքող վարպետը
Ի՛մ իսկ բերանով,
Ի՛մ իսկ բերանով
Արդէն կը պոռա՛յ ու կը կրկնի՛
Հնավաճառի ելեւէջումով.
«Ճշմարտութի՛ւն եմ ծախում, սարքովի՛»...

Ինչո՞ւ է Սեւակը իր ճշմարտութիւնը համարում սարքովի: Ինչո՞ւ նա չի հաւատում իր երկրորդ աչքերով տեսածին, ինչո՞ւ չի վստահում այդ աչքերին:

Սա արդէն դարաշրջանի ցաւն է: Այդ ցաւով, որի անունն է դիտապաչտութիւն, տառապում են մեր դարաշրջանի դրեթէ բոլոր մտաւորականները: Ու չատ քչերը ցանկացան բուժուել այդ ցաւից ու քչերը, տարակուսանքների բեռը դցած ուսերին, հաւատքով քայլեցին անհաւատացեալների չարքերում:

Գիտութի՞ւն, թէ՞ կրօն: Այս հարցն է, որից չի խուսափում եւ ոչ մի մտաւորական, առաւել եւս զգացմունքներով, բարոյականութեամբ եւ երկրորդ աչքերով օժտուած մարդը: Այս հարցի պատասխանը որոնելու տառապանքներից աղատուած մարդիկ, որպէս օրէնք, հրաժարւում են կրօնից, վերջնականապէս խոնարհուելով գիտութեան առջեւ:

Ժորհրդային Միութիւնում մեծացած Պարոյր Սեւակին դպրոցական նստարանից սկսած ներշնչում էին, որ կրօնը՝ «թմրեցուցիչ է ժողովրդի համար», որ կրօնը յօրինուած է տէրտէրների կողմից, ժողովրդին խաբելու եւ հալածելու համար: Բայց չէր կարող այդքան միամիտ դտնուել Սեւակը: Ամենատարրական պատմական կրթութիւն ունեցող մարդու համար պարզ է, որ կրօնը ոչ ոքի կողմից յօրինուած չէ, որ կրօնը մարդու հոգու յատկութիւններից մէկն է, որ ամէն մի ժողովուրդ ունի ոչ ոքի կողմից չյօրինուած, այլ ինքն ըստ ինքեան առաջացած պատկերացումներ չարի եւ բարու մասին:

Շէր կարող Սեւակը չհասկանալ, որ մինչեւ «թմրեցուցիչները» պատրաստելը պէտք է որ արդէն իսկ գոյութիւն ունենային այդ «թմրեցուցիչները» ստեղծող տէրտէրները ու քրմերը, իսկ դա հնարաւոր էր միայն այն դէպքում, երբ ժողովուրդը արդէն ունենար հաւատք: Այստեղ ամէն ինչ պարզ էր: Շատ ասելի լուրջ էր հարցի միւս կողմը:

Որքանո՞վ ճշմարիտ են կրօնական պնդումները: Կարո՞ղ է, արդեօք, կրօնը ճշմարտութեան լմաստով մրցել գիտութեան հետ: Ինչպէ՞ս, օրինակ, աշխարհի արարչագործութեան մասին կրօնական ուսմունքը համատեղել աշխարհակառոյցի գիտական պատկե-

բացումների հետ: Կամ ինչպէ՞ս սուրբ Մարիամ Աստուածածնի յղիութիւնը բացատրել տարրական կենսաբանական օրինաչափութիւններով: Թւում է, թէ այս հակասութիւնը անլուծելի է, թւում է, թէ հաւատք պահանջող կրօնը նահանջում է ապացոյցներ պահանջող դիտութեան առջեւ: Թւում է, թէ ապացոյցներով ու տրամաբանութեամբ ղեկավարուող դիտնականը չատ աւելի հզօր է, քան հաւատքով ղեկավարուող մարդարէն: Բայց, այնուամենայնիւ, մէկ բան զարմանք է պատճառում: Ինչո՞վ բացատրել այն փաստը, որ մեծ դիտնականներից չատերը, իսկ աւելի ճիշտ՝ գրեթէ բոլորը, մինչեւ իրենց կեանքի վերջը մնացել են խոր հաւատացեալները: Բերենք միայն մի քանի յայտնի օրինակներ: Նիւտոնը, որը յայտնաբերեց մոլորակների շարժման օրինաչափութիւնները, հաւատացեալ էր: Հանճարեղ մաթեմատիկոս Պասկալը ոչ միայն հաւատացեալ էր, այլեւ պատկանում է քրիստոնէութեան սրբերի շարքին: Ա.յսօրուայ մանրէաբանութեան հայր Պաստեօրը, Կոպերնիկոսը, Կեպլերը, Պաւլովը, Ցիոլկովսկին եւ նոյնիսկ Դարւինը, այս բոլորը խոր հաւատացեալներ էին: Այս ամէնը չէր կարող չիմանալ Պարոյր Սեւակը, ու դրա համար էլ չէր կարող նա կուրօրէն հետեւել կրօնը հերքող դիտութեանը:

Բայց մեզ յայտնի չէ, թէ արդեօք յաջողուե՞ց նրան յաղթահարել իր ներքին տագնապը, որի համար կար միայն մէկ ճանապարհ: Ա.յն էլ հետեւեալն էր:

Գիտութիւնը եւ կրօնը խօսում են տարբեր բաների մասին եւ չեն կարող իրար հակասել: Մի՞թէ հակասում է դիտութեանը արուեստը, երբ նա խօսում է ղոյների պեղեցկութեան, այլ ոչ թէ ալիքների երկարութեան մասին:

Վերցնենք, օրինակ, կրօնական ուսմունքը մարդու արարչագործութեան մասին եւ համեմատենք այն ծագումնաբանութեան դիտական պատկերացումների հետ: Եթէ այս համեմատութիւնը մենք ընկալենք որպէս մրեւնոյն հարցի երկու պատասխան, ապա նրանց միջեւ, անշուշտ, ղոյութիւն ունի անհարթելի հակասութիւն: Բայց իրականում դա այդպէս չէ: Մէկը խօսում է մարդու կենսաբանական, այսինքն ծագման յարաբերական էութեան մասին, իսկ միւսը՝ մարդու ծագման բացարձակ էութեան մասին:

Բայց խօսքը տանք աշխարհահռչակ Ֆիզիկոս Մաքս Պլանկին, որի մասին Բորը ասում էր, թէ ուրիշ ոչ մէկին չի յաջողուել անել այդքան մեծ նշանակութիւն ունեցող յայտնագործութիւններ:

Մաքս Պլանկը, որին Այնշտայնի հետ միասին համարում են մեր դարի ամենախոշոր ֆիտնական, 1945 թուին Բերտոլէին ուղղուած նամակում գրում էր հետեւեալը.

«Սա երկնքի բարերը պարզեւն է, որ ես մանկութիւնից պահպանել եմ իմ անսասան հաւատքը դէպի Աստուած: Ի հարկէ, Նրա ճանապարհը մեր ճանապարհներից չէ, բայց նրա դոյութիւնը օգնում է մեզ դիմանալ ամենածանր փորձութիւններին: Հաւատացեալի համար՝ Աստուած եւ Նրա կամքը բոլոր երեւոյթների ելակէտն է: Գիտնականի համար ամէն ինչի միակ սկիզբը իր ընկալումներն են եւ նրա հետ կապուած չափումները: Երբ կրօնը եւ դիտութիւնը խօսում են հաւատքի մասին՝ առաջինը դնում է Աստծուն բոլոր տեսակ մտքերի սկզբում, իսկ երկրորդը վերջում: Առաջինը պատկերացնում է նրան որպէս հիմք, երկրորդը որպէս աշխարհակառոյցի պսակ: Ո՞ւր էլ որ մենք դիմենք, որտեղ էլ որ մենք ուղղենք մեր հայեացքը՝ ոչ մի տեղ մենք չենք գտնի հակասութիւն դիտութեան եւ կրօնի միջեւ: Աւելի շուտ մենք կը պտնենք նրանց բացարձակ ներդաշնակութիւնը: Կրօնը եւ դիտութիւնը չեն բացառում մէկը միւսին, ինչպէս ենթադրում էին առաջներում եւ ինչից վախենում են մեր բազմաթիւ ժամանակակիցները: Ընդհակառակն, նրանք լրացնում են մէկը միւսին»:

Այո, վախենում էր այդ հակասութիւնից նաեւ Պարոյր Սեւակը: Դժուար է ենթադրել, որ նրան յաջողուեց յաղթահարել այդ հակասութիւնից առաջացող տագնապը: Աւելի հաւանական է, որ նա վախեցաւ իր երկրորդ աչքերով տեսածից եւ չտասլեց յայտարարել այն «սարքովի ճշմարտութիւն»: Ո՞վ կարող է նրան մեղադրել դրանում: Մեր աթէիստական աշխարհում, ամենաանաստուածերկրում, ինչպէ՞ս կարող էր մի հայ բանաստեղծ իր երկրորդ տեսողութեան հանդէպ ունենալ այն վստահութիւնը, որը այսօր չունեն պապերն ու կաթողիկոսները: Եւ, վերջապէս, եթէ նա այդքան վստահէր իր երկրորդ աչքերին, էլ ինչո՞վ պէտք է նա տարբերուէր ինքնահաւան դիտնականներից:

Դոստոեւսկու ու Տոլստոյի նման Սեւակը հասկանում է, որ աշխարհում, ընդհուպ մինչեւ կրօնը, մի ինչ որ բան սխալ է եւ այդ սխալութիւնը Դոստոեւսկու ու Տոլստոյի նման Սեւակը տեսնում է իր երկրորդ աչքերով, լսում է իր երկրորդ ականջներով:

Չե՛մ ուզում ընդունել ո՛չ մի ձայն:
Բայց անվերջ լսւում է թէ՛ իմ մէջ, թէ՛ իմ շուրջ·
«Ինչ–որ տեղ ինչ–որ բան սխալ է»:

... Ինչ–որ բան սխալ է հենց երկրի առանցքում,
Որ ուղի՛ղ չի անցնում, այլ ինչ–որ թեքուքեա՛մբ:

Ինչ–որ բան սխալ է մինչեւ իսկ լոյսի՛ մէջ,
Որ պիտի՛ ունենար ծանրութիւն ու կշիռ:

Թէ կրօնն է սխալ այդ վաղո՛ւց յայտնի է,
Բայց մի տեղ սխալ չէ եւ հաւա՛տ կոչուածը·

Ինչ–որ բան սխալ է ճշմարտի մէջ անգամ·
Եւ ստոյգ կոչուածն է ստուգել աղերսում:

Բայց այս հարցում Սեւակը Դեկարտից էլ իմաստուն է դըտնըւում: Եթէ Դեկարտը իր յայտնի «ամէն ինչ կասկածի տակ դիր» թէզը իր սեփական ձեռքերով ջնջեց, առանց կասկածելու հուչակելով, թէ «տրամաբանում եմ, ուրեմն կամ», ապա Սեւակը սըխալ համարելով աշխարհը՝ սխալ է համարում եւ իր դատողութիւնը այդ մասին.

Սխալ է, անկասկած, եւ այսպէս դատել;
Ուստի եւ այս երգը... սխալից սխալ է...

Բայց աշխարհի սխալները Սեւակը վերագրում է ոչ թէ կատարեալ Աստուածներին եւ կատարեալ բնութեանը, այլ անկատար մարդուն: Այս հարցումն էլ Սեւակը աւելի համարձակ է դնում, քան սոլիպսիստ Բերկլին եւ Հիւմը:

Երբ այս երկուսը չէին վստահում մարդու ղեկցմունքներին եւ մեղ չրջապատող աչխարհը համարում էին մեր ղեկայարանների ցնորք, այլ ոչ իրականութիւն, Սեւակը հաւատում է մարդուն, բայց չի հաւատում նրա դիմակին, համարելով ամբողջ կեանքը ու իրականութիւնը դիմակահանդէս: Նա համոզուած է, որ եթէ մարդիկ հանեն իրենց դիմակները, ապա կեանքը դեղեցիկ կը դառնայ, որովհետեւ մարդը ըստ էութեան դեղեցիկ է, եւ միայն դիմակն է դարձնում նրան անկատար:

Լսո՞ւմ էք ինձ:
Բաւակա՛ն է,
Հանեցէ՛ք ձեր դիմակները:
Հանեցէ՛ք,
Որ ֆամու ձեռով
Ձեզ կարօտած օդն ապտակի
Ձեր իսկական դէմքը տխեղծ,
Եւ շող-շաղափն արեգակի
Սրսկումի նման ծակի
Ընդարմացած ձեր դէմքը խեղճ,
Որի ծանօթ նմանութեամբ են յօրինուած
(Մի՛ մոռացէք) աստուածները (մի՛ մոռացէք)...
Ամաչեցէ՛ք աստուածներից
Եւ հանեցէ՛ք դիմակներդ,
Բաւական է:

Այստեղ Սեւակը նմանւում է Ռուսսոյին, որը համարում էր, որ բաւական է մարդը ազատութիւն ստանայ եւ արդարութիւն կը տիրի աչխարհի վրայ: Բայց Սեւակը ի տարբերութիւն Ռուսսոյի, հասկանում էր, որ եթէ դիմակահանդէսը երկար տեւի, եւ կեղծ դիմակները երկար մնան մարդկանց երեսներին, ապա մարդը այնքան կ'այլանդակուի, որ արդար հասարակարգ կառուցելու համար ուշ կը լինի.

Պարն աւարտուել
Ու խաղն արդէն վերջանում է:
Հանեցէ՛ք ձեր դիմակները:
Ուշացումի ամէ՛ն պահից
Իմ վիճակը
Ձեր փոխարէն լրջանում է,
Որովհետեւ ինձ է տրուած, դժբախտաբար,
Յիշեցնելու ձեզ վերստին ու վերջապէս,
Որ ուշացած արթնացումը
Կը նմանուի մի պայթիւնի՛,
Որից յետոյ
Լռութիւնն ու Փոշին պիտի գօտեմարտեն
Չգոյութեան գահի համար...

Ոմանք բանաստեղծի այս խօսքերը վերագրում են Խորհրդային Իրականութեանը, որը ամբողջովին դիմակահանդէս է, բայց մենք կարծում ենք, որ խօսքը աւելի մեծ, ամբողջ մարդկութեան դիմակահանդէսի մասին է, որից ուզում է փախչել Սեւակը, եթէ այդ մարդկութիւնը չարունակի իր կեղծ խաղը.

Իսկ եթէ դեռ պիտի խաղաք,
Է՛հ, խաղացէ՛ք, խնդրե՛մ, ինչքան սրտներդ ուզի,
Խաղ խաղացէք ինքներդ ձեզ եւ իրար հետ,
Բայց... առանց ինձ:
Ես այլեւս չեմ մասնակցում
Ո՛չ թէ խաղին,
Այլ միայն իսկ եւ մատաղի՛ն,
Թէ մորթուողը
Մարդկայնութիւն–մարդկութիւն է...

Ու ես արդէն ո՛չ բողոքում,
Ո՛չ ողոքում,
Ո՛չ էլ կոկորդս եմ կեղեքում:
Ինչի՞ համար

Կամ ո՞ւմ:
Հիմա
Ես ջանում եմ լոկ··· չլինե՛լ
Ամբողջովին դառնալ··· դիմա՛կ:

Բայց Սեւակի դիմակահանդէսը սովորական դիմակահանդէս չէ, եւ նրա դիմակներն էլ սովորական չեն: Այդ դիմակներով Սեւակը ծածկում է այն, ինչով կանտը ծածկում էր իր հռչակաւոր «իրն ինքնին»–ը, այսինքն անճանաչելի էութիւնը: Այս նոյն դիմակներով Սեւակը ծածկում է նաեւ իրերի բնութիւնը եւ գեղարուեստական միջոցներով ասում է այն, ինչը փաստօրէն կազմում էր Կանտի փիլիսոփայութեան հիմնական էութիւնը:

Իրերն ապրում են մի բոլորովին անծանո՛թ կեանք
Լոկ իրե՛նց համար,
Մի՛միայն իրենց:
Մինչդեռ մե՛զ համար
Նրանք պարզապէս թատրոն են խաղում
Հենց որ, բանի դե՛ռ նայում ենք նրանց:
Իսկ երբ չե՛նք նայում,
Հենց որ չենք նայում
Նրանք հանում են դիմակները իրենց
Ու ծաղրում են մեզ լեզու հանելով:
Իսկոյն հանում են դիմակները իրենց
Ու նայում իրենց դէմքով իսկական,
Որ խաղացկուն է (հաւատացէ՛ք ինձ),
Եւ արտայայտի՛չ,
Եւ խօսո՛ւն–խօսո՛ւն՝
Փամիների հետ վիճող ծառի՛ պէս,
Լեռնային գետի
Ու գեղեցկուհո՛ւ···

Բայց Կանտից որքա՞ն աւելի համարձակ է Սեւակը: Եթէ յայտնութիւնը իրերի անճանաչելիութեան մասին չօդնեց Կանտին

դիտական օրինաչափութիւնների իշխանութեան տակից դուրս դալու հարցում, եթէ կանտը, հետեւելով Սպինոզային, ենթարկեց իր տրամաբանութիւնը տրամաբանութեան իսկ կողմից ստեղծուած օրինաչափութիւններին, ապա Սեւակը, նչելով իրերի բարութիւնն ու չարութիւնը, նրանց դատն ու դատաստանը, հրաժարուեց ենթարկուել նրան, ինչը ստեղծուել էր իր իսկ ձեռքերով:

Ներեցէք մի պահ:
Մինչեւ ընդմիջում յայտարարելը
Իմ բարոյական պարտքն եմ համարում
Ե՛րբս երկու բառ ասել ըստ հարկի՝
Նախ ձե՛զ դիմելով,
Իմ մեծապատի՛ւ ատենակալներ:
Մեր ձեռքով սարքուած
Իրերն իրաւունք ունե՛ն իշխելու,
Բայց ո՛չ մեզ վրայ:
Այսօր դատում ենք լոկ մի բանիսին:
Այսպէս կը դատենք բոլորի՛ն ևաեւ՝
Մինչեւ հասկանան,
Որ մեր իսկ սարքած
Իրերն իրաւունք չունե՛ն իշխելու
Գոնէ մե՛զ վրայ:
Եթէ Օրէնքը,
Որ նմանապէս մենք ենք ստեղծել,
Եթէ Օրէնքն էլ ի՛ր լինէր, դիցուք,
Մինչեւ իսկ նրա՛ն մենք կը դատէին:
Զգուշացնում ենք.
Թո՛ղ վախենայ նա
Եւ չվերածուի անկենդան իրի,
Այսինքն՝ թող նա
Զրհամարձակուի... իր–ականանալ...

Սեւակի հրաժարականը դիմակահանդէսային խաղերից եւ համընդհանուր օրինաչափութիւններից կրաւորական չէ: Եթէ Տոլստոյի ու Դոստոեւսկու հերոսների մեծ մասը, հրաժարուելով

համընդհանուր դաղափարներից ու կեանքից, լուծում էին միայն սեփական հարցը ասպա Սեւակը ցանկանում էր իր հետ միասին փրկել նաեւ մարդկութիւնը: Նա հասկանում էր, որ մեր օրերին, երբ դիմակահանդէսը շատ երկարեց, երբ տրամաբանութիւնը չափից աւելին իշխեց զգացմունքների վրայ, երբ նիւթական շահերը դարձան հոգեկան պահանջներից աւելի բարձր ու կարեւոր, երբ մարդաբէների հանդէպ մարդիկ դարձան այնքան անտարբեր, որ նրանցից այլեւս վտանգ չսպասելով՝ նրանց էլ չէին կախում, այս պայմաններում մարդկութիւնը փրկելու համար անհրաժեշտ էր լինքնահրկիզում:

Առաջներում մերպէսներին
Այրում էին խարոյկի մէջ…

Հիմա պիտի խարոյկ վառենք մենք իմքներըս,
Խարոյկ մեզնո՛վ:
Աղը կըրակ է հանգցընում:
Բայց մենք պիտի մեր կըրակով աղն էլ վառենք,
Որ աւելի բոցավառուենք,
Այնպէ՛ս վառուենք,
Որ չմնայ նոյնիսկ մոխիր ու մնաղորդ…

Առաջներում մերպէսներին
Կա՛մ խառատում, կա՛մ սպանում էին դանդաղ՝
Մեր մարմնի մէջ ցից խըրելով,
Ինչպէս խորոցն են մխրճում
Թիքեոնիկի եղա՛ծ–չեղած մէկ օրուայ մէջ…

Հիմա պիտի մենք իմքներըս հանգիստ ցստենք
Հեռուստացոյց–աշտարակի բարձրը ցցին,
Որպէսզի մեր սուր դէմքերով ու խօսքերով
Մենք իմքներըս ցցուենք–մնանք
Ողջ մարդկութեան ականջներում ու աչքերում՝
Իբրեւ նշտար ապաքինման,
Իբրեւ ասեղ սրսկումի…

Պլոտինը վերջին հելլենական փիլիսոփան էր, որը յիշեցնում էր, որ մարդիկ ժամանակին ապրել են աստուածների կողքին: Նոր փիլիսոփայութիւնը, որ սկսուեց Սպինոզայից, ժխտեց աստուածներին եւ աշխարհը լցրեց օրէնքներով ու օրինաչափութիւններով: Սպինոզայից յետոյ մարդիկ իրենք իրենց ձեռքերով սկսեցին ստեղծել աստուածներ: Մարդիկ մեղադրեցին հին հելլեններին նրանում, որ նրանք Աստուած էին համարում այն, ինչը դրուած էր մակերեսի վրայ եւ ինչը հեշտութեամբ աչքի էր ընկնում: Իսկական ճշմարտութիւնը եւ գեղեցկութիւնը, — ասում էին նրանք, — դտնուում է խոքերում եւ կարող է ճանաչելի դառնալ միայն ծանր աշխատանքի միջոցով: Եւ, ուրեմն, իսկական արժէքները նրանք են, որոնք հանուում են բնութեան խոքերից աշխատանքի միջոցով:

Իսկ դուցէ՞ իսկական ճշմարտութիւնը եւ իսկական գեղեցկութիւնը դտնուում են հենց մակերեսին: Գուցէ՞ Աստծոյ կողմից չընորհուած գեղեցկութիւնը տեսնելու համար ոչ մի աշխատանք չի պահանջուում: Եւ դուցէ՞, իսկապէս, այն, ինչ ստեղծուում է աշխատանքի միջոցով, երկրպագման արժանի չէ: Հենց այդպէս է մտածում Սեւակը, որովհետեւ նա ծունկ չի ուզում ծալել կուռքի առջեւ, բայց սիրով խոնարհուում է պարզ տեսանելի գեղեցկութեան առջեւ:

Մերպէսները, ո՛չ, երբեւէ
Ծունկ չեն ծալում կուռքի առաջ
Եւ չեն հանում իրենց աչքը ա՛յն պատճառով,
Որ այդ կուռքը, կիկլոպի պէս, մէկ աչք ունի:
Շա՛տ–շա՛տ՝ նրանք կկոցում են մէկ աչքն իրենց,
Որ··· աւելի հեռո՛ւն տեսնեն ու պա՛րզ տեսնեն:

Բայց սիրում են նրանք իրենց ծունկը ծալել՝
Անտանելի ցաւն աշխարհի
Որեւէ կերպ բարձրացնելու
Եւ արեւի կիզարանում մոխրացնելու նպատակով:

Բայց սիրում են նրանք իրենց ծունկը ծալել՝
Գեղեցկութեան մերկ ծնկներին շուլալուելո՛ւ,
Հողի տաքուկ բուրմունքի մէջ լուռ հալուելո՛ւ,
Մանուկների աչքերի մէջ նկարուելո՛ւ երազանքով...

«Առաջներում մեղպէսների ականջն էին հատում հիմքից», — ասում է Սեւակը: Բայց ովքե՞ր էին այդ $մեղպէսները»: Ինչո՞ւ էին «հատում նրանց ականջները», «կտրում ձեռքերը» ու «կտցում աչքերը»: Միայն նրա համար, որ այդ աչքերը ու ականջները ունէին պարզ տեսնելու ցանկութիւն:

Իմ ուզա՛ծը...
Իմ ուզածը կարծում էք թէ մի մեծ բա՞ն է:
Ես չե՛մ հայցում երջանկութիւն,
Զէ՛:
Տանջում է ինձ հասարա՛կ մի ցանկութիւն՝
Պարզ տեսնելու,
Պա՛րզ տեսնելու ցանկութիւնը:

Ա՛խ, տրուէ՛ր ինձ պարզ տեսնելու
Կարողութիւնն աստուածային

Թւում է, թէ այդ աչքերի ուզածը մի մեծ բան չէ, եթէ միայն պարզ տեսնելն է: Բայց հենց այդ պարզ տեսողութիւնն է, որ իր պարզութեան համար երկրորդ տեսողութիւն է կոչւում: Այդ պարզ տեսողութիւնը ոչնչով չի նմանւում սովորական տեսողութեանը, որը հետեւելով Սեւակին, կարելի էր անուանել դիմակատեսութիւն:

Հիւանդի մօտ մենք հրաւիրում ենք բժշկին, որը փորձում է վերականգնացնել մարդուն երկրային կեանքի: Իսկ մեռնողի մօտ մենք կանչում ենք քահանայի, որը բարի երթ է մաղթում դէպի երկնային կեանք: Եւ ո՛րքան տարբեր են բժշկի ու քահանայի ասելիքները, այնքան տարբեր են առաջին եւ երկրորդ տեսողութիւնները, դիտողութիւնը եւ փիլիսոփայութիւնը, տրամաբանութիւնը եւ զգացմունքները:

Ինչպէս յայտնի է հաճոյքը եւ ցաւը ընդունուած է բացատրել որպէս արտաքին դրդռումների հանդէպ հակազդեցութիւն օրգանիզմի կողմից: Երբ արտաքին ազդեցութիւնը սպառնում է մեր օրգանիզմին, մենք ցաւ ենք ղգում, իսկ երբ օգտակար է՝ այդ ազդեցութիւնը մեզ հաճոյք է պատճառում:

Ենթադրւում է, որ օրգանիզմի պահպանումը այն միակ նպատակն է, որը հետապնդում էր բնութիւնը, ստեղծելով մեր օրգանիզմները: Այսպիսի բացատրութիւնը արդէն իսկ պարունակում է իր մէջ այն մարդապատկերացումը, որից այդքան խուսափում է գիտութիւնը:

Ճիրաւի, եթէ մենք բնութեանը վերագրենք որեւէ, նոյնիսկ ամենահամեստ նպատակ, ապա դրանով իսկ մենք նրա գործունէութեանը նմանեցնում ենք մարդու նպատակասլաց գործունէութեանը: Փաստօրէն, վերագրել բնութեանը մտահղութիւն՝ նշանակում է դուրս գալ գիտութեան սահմաններից: Եթէ բնութիւնը իսկապէս ունի մտահղութիւններ, ապա ոչ, ի հարկէ, օրգանիզմների ինքնապահպանութեան ուղղութեամբ, դրա համար նա կարող էր ստեղծել շատ աւելի պարզ միջոցներ, քան իրար հակասող ցաւն ու հաճոյքը:

Մենք կարող ենք զարմանալ կենդանի օրգանիզմի բարդութեան վրայ, նրա զարմանալի կառուցուածքի վրայ, բայց ցաւ եւ հաճոյք ապրելու ընդունակութիւնը արժանի է շատ աւելի մեծ զարմանքի, բան ամենաբարդ մեքենայի բարդութիւնը: Եւ եթէ մենք ցանկանում ենք խօսել նպատակների եւ միջոցների մասին, ապա շատ աւելի հաւանական է, որ կենդանի օրգանիզմը ստեղծուել է ցաւ եւ հաճոյք ղգալու համար, այլինքն ապրելու համար, քան նրա համար, որ ինքը իր մէջ ապրող այդ օրգանիզմը երկար ժամանակ չքայքայուի:

Եւ, վերջին հաշուով, ինչի՞ համար պէտք է բնութիւնը այդքան մտահղուած լինէր օրգանիզմների պահպանմամբ: Ինչո՞վ են օրգանիզմները քարերից ու մետաղներից աւելի գերադասելի: Ի՞րենց բարդութեա՞մբ: Բայց դա մարդիկ են, որ խոնարհւում են բարդութեան առջեւ, բնութեան համար բարդութիւնը ոչ մի դին չունի:

Եւ եթէ անկեղծ լինենք, անօրդանական աշխարհը շատ աւելի լաւ է պաշտպանուած: Գրանիտէ ժայռը, օրինակ, առանց քայքայուելու ապրում է հազարամեակներ: Եւ եթէ բնութեան միակ նպատակը իր ստեղծագործութիւնների պահպանումը լինէր, ապա իր ստեղծագործութեան մէջ նա դուրս չէր գայ անօրդանական աշխարհի սահմաններից: Ըստ երեւոյթին, այդքան էլ հասարակ չեն բնութեան նպատակները:

Երբեմն էլ ոչ թէ ցաւը, այլ հաճոյքն է սպառնում մարդուն: Պատահական չէ, որ Անտիոքենէսը ասում էր, թէ՝ աւելի լաւ է ես խելագարուեմ, քան հաճոյք ղգամ: Գուցէ այսօր հաճոյքից հրաժարուող Անտիոքենէսներին խելագար համարէին, բայց նա պարզապէս օժտուած էր նրանով, ինչը Սեւակը անուանում է պարզ տեսողութիւն: Այդ պարզ տեսողութեան չնորհիւ է, որ Սեւակը հրաժարուում է համընդհանուր դաղափարներից: Նա չի ցանկանում կուրօրէն ենթարկուել «ընդունուած» կանոններին:

Ի՛նչ–որ ժամանակ,
Մեզանից առա՛ջ, մեզ անյա՛յտ մարդիկ
Նստել–մտածել ու յօրինել են զանազան բաներ.
Այս մէկը՝ անե՛լ,
Այն մէկը՝ չանե՛լ,
Այս՝ համարել ճի՛շդ,
Այն՝ մերժել–վանե՛լ, –
Սահմանել ինչ–որ հերքականութիւն,
Կոչել պատիւ ու··· պարտականութիւն···

Ու մենք էլ ահա անցնում ենք հանգիստ
Անհերքելիութեանց այս թանգարանով,
Եւ ծըւատում ենք ո՛չ մեր հագուստը,
Այլ հոգի՛ն մեր խեղճ,
Որի յատակում
Կայ անտանելի նոյնպիսի մի բան,
Ինչպէս աւազը՝ մեր կօշիկի մէջ,
Ինչպէս սուր փուշը՝ մեր եղունգի տակ:

Նա առաջարկում է հանել եղունդի տակից այդ փուչը եւ ապրթըննալ մղձաւանջային քնից:

Ու երբ ճնի մէջ մղձաւանջային
Ձեզ առնէտները կրծոտեն սիրով,
Դուք արթնանալով մի պահ մտածէք,
Թէ՞ արժի արդեօք դարեր շարունակ
Քնել մե՛ծ ուղտի փոքրի՛կ ականջում...

Սակայն հեշտ չէ թօթափել դարերից եկող քունը, հեշտ չէ ըմբռստանալ տրամաբանութեան դէմ եւ Սեւակը մեղք համարելով իր ապստամբութիւնը պատմում է այդ մասին իր խոստովանութեան մէջ.

Հա՛յր Սուրբ, ես կ'ուզէի կեանքի՛ս գնով
Ջնջել «զգոյշ» բառը:
Մեծ մե՞ղք է սա:

Հա՛յր Սուրբ, ես կ'ուզէի դարձնել կանոն
Անկանոնութիւնը:
Մեծ մե՞ղք է սա:

Կարելի չէ՞, Հա՛յր Սուրբ, որ ոտքերը,
Գէթ ոտքե՛րը լինեն ինքնագլուխ,
Գէթ ոտքե՛րը, Հա՛յր Սուրբ, ո՛չ գլուխը...
Թէ՞ մեծ մեղք է դա էլ:

Եւ մահի չափ յոգնած մի կա՛րճ պահի
Կարելի չէ՞ արդեօք «մարդ եմ» բառին
Զհագցընել ո՛չ մի նեղ ածական...
Թէ՞ մեծ մեղք է դա էլ:

Հա՛յր Սուրբ, եթէ մարդը հաւատացեալդ չէ,
Որտե՛ղ պիտի նա իր մեղքը խոստովանի:

Խո՛ս–տո՛–վա՛–նո՛ւ–թեա՛ն եմ կարօտ, Հա՛յր Սուրբ՝
Ձներուելո՛ւ գնով
Եւ բանադրուելո՛ւ:

Որտե՞ղ խոստովանեմ,
Եւ ո՞ւմ խոստովանեմ,
Հա՛յր Սուրբ խոհեմութիւն
... Ո՛չ սուրբ եւ ո՛չ էլ հայր...

Այժմ տեսնենք, թէ ինչ ճանապարհով կարող է մարդը հասնել ճշմարտութեան: Ճշմարտութիւնը տեսնելու համար պարզ տեսողութիւնը բաւական չէ, անհրաժեշտ է մեծագոյն ինքնազոհութիւն: Սակայն խօսքը պարզ ինքնազոհութեան մասին չէ: Այս-ինքն, ամենաւելին էլ բաւական չէ՝ հրաժարուել կեանքի հաճոյքներից, մէնախուցերում ճգնաւորի կեանքով, տանել վիրաւորանքներ եւ համակերպուել տառապանքների հետ: Անհրաժեշտ է ամբողջովին մերուել տիեզերքի հետ, կամ ինչպէս ասում է Սողոմոնը իր սաղմոսներից մէկում՝ «ամբողջ էութեամբ հալուել մոմի նման»: Սեւակը շատ շուտ հասկացաւ, որ միայն տառապանքով անկարելի է հասնել ճշմարտութեան, անկարելի է նոյնիսկ մաքրուել:

Ասում են, թէ մի բան կայ լոկ,
Որ անձնապէս ու մեն–մենակ են սովորում՝
Գիտութիւնը տառապանքի...

Ու կսկիծն է տիրակալի հովեր առնում:
Ա՛խ, տէ՛ր կսկիծ, հարկաւոր չէ՛,
Բաւական է, տէ՛ր, ողորմեա՛:
Այս դժուարին գիտութեան մէջ
Հմտացել եմ ես շա՛տ վաղուց:
Ու չլինէր թէ ինքնածին բարութիւնըս,
Կարող էի ի՛նչէս դառնալ

Ուսուցչապետն ա՛յն գիտութեան,
Որ անձնապէս ու մեն–մենակ են սովորում:
Ա՛խ, տէ՛ր կսկիծ,
Այսքանն արդէն բաւակա՛ն է,
Է՛լ աւելին հարկաւոր չէ՛, տէ՛ր, ողորմեա՛...
Ջե՛մ ուրանում.
Ես էո նախկին ու մշտական հպատակն եմ:
Ուրեմն այլեւս ինչի՞ համար
Ոյժը վտրձել հպատակի հլու մէջքին:
Ինչի համա՛ր, տէ՛ր, ողորմեա՛...
Եւ չափազանց զգո՛յշ եմ ես,
Նոյնիսկ վախկո՛տ.
Անջատումից եմ վախենում,
Երկիւղում եմ տուայտանքից չվտարուող,
Կարօտի սեւ արիւնումից եմ սարսափում...

Ա՛խ, տէ՛ր կսկիծ,
Փու բարձունքից ամենազօր
Մի պահ անսա հեզ ու հլու հպատակիդ.
– Դժուա՛ր բան է մարդ լինելը,

Լիւթերի նման Սեւակը համարում է, որ դէպի ճշմարտութիւն տանող ճանապարհը, տառապանքներից բացի անցնում է նաեւ մի տեսակ հոգեկան ցնցումների միջով: Այդ ցնցումը Սեւակը անուանում է ճառագայթային ախտ, մէկ կողմից նմանեցնելով այն մեր օրերի ամենասարսափելի հիւանդութիւններից մէկին, միւս կողմից՝ ի նկատի ունենալով բարեբեր արեւի ճառագայթները եւ այն յատուկ լոյսը, որ տեսանել էր ինքը իր երկրորդ աչքերով:

Ճառագայթային այս ախտը քնաւ նո՛ր չէ, բարեկա՛մ.
Նա նորածի՛ն չէ,
Այլ առնուազըն ութ հազար եւ ութ հարիւր տարեկան:

Այդ ախտով էին տակաւին հիւանդ
Հին հելլենացիք, հնդիկները հին:
Եւ Հոմերոսի կուրութիւնն իրօք այդ ախտից էր հենց:
Եւ այդ նոյն ախտով գերեզման իջան
Զե՛ր Նարեկացին, Շեքսպիրը մե՛ր,
Ու բոլո՛ր նրանք, ովքեր թոռ ունեն
Մեր մոլորակի կիսագնդերի մեծութեան չափով
Կամ այնքա՛ն մեծ սիրտ,
Որ գրաւում է տեղն էլ թոռերի…

Այս ախտով մարդիկ չե՛ն վարակւում, չէ՛,
Այլ վարակուած են ծնւում մայրերից:

Այս ախտը միայն նրա՛նց է բռնում,
Ովքեր հօր հազար հօր գոյն են տեսնում ծիածանի մէջ,
Ովքեր լսում են
Մոլեկուլների խելայեղ վազքի համաձուագը
Ա՛յն մուրճերի մէջ կամ կացիններին,
Որոնք միևչեւ իսկ զնգոց չեն հանում,
Այլ համր են ու լուռ՝ կուռքերի նման…

Այս ախտը միայն նրա՛նց է կպչում,
Ովքեր նայում են սեւուկ գոմէշին,
Իբրեւ մի բայլող սեւ դաշնամուրի,
Որ նուագում է լոկ իրե՛նց համար:

Այս ախտը միայն նրա՛նց է կպչուն,
Ովքեր ապառաժ–անտաշ բարի մէջ
Տեսնում են ոՓրում, տեսնում Զուարթնոց,
Ժայռի զանգուածում տեսնում Աջանտա, Էլլորա, Գեղարդ,
Անգոյն կտաւին՝ Սրբազան ընթրիք ու Մագթաղինէ,
Եւ ամէն անցնող երիտասարդի հոգու խորքերում՝
Մի ննջող Համլէտ, արթուն Օթելլոյ…

Յայտնի է, որ հասարակութեան մէջ հոդեկան կեանքի առաջնութիւնը պատկանում է մշակոյթին, այլ ոչ թէ քաղաքականութեան, ոչ թէ տնտեսութեան: Մշակոյթի մէջ են իրականանում հասարակութեան նպատակները: Եւ հենց մշակոյթի մակարդակով է գնահատւում հասարակութեան որակը եւ մակարդակը:

Մեր տնտեսական եւ դիտական վերելքի ժամանակաշրջանում մշակոյթի ընդհանուր մակարդակը օրեց-օր ցածրանում է: Այսօր մշակոյթը աւելի էժան է, աւելի տարածուած, աւելի հասանելի, աւելի օգտակար, աւելի յարմար, բայց աւելի տափակ, աւելի տգեղ, աւելի անդէմ եւ աւելի անորակ:

Այսօր մշակոյթը վեր է ածուել քաղաքակրթութեան: Ոչ մի ժամանակ այդքան սուր չէր առանձին նուրբ արուեստագէտի բախումը հասարակութեան հետ, ոչ մի ժամանակ այդքան չէր տարբերւում մշակոյթի դադաթը միջին մակարդակից: Մշակոյթը միշտ պարծենում է անցեալով, եւ միշտ ձգտում է կապեր հաստատել անցեալի հետ:

Հակառակ քաղաքականութեան, որ պարծենում է իր երիտասարդութեամբ, որ համարձակօրէն խղում է անցեալի հետ իր կապերը՝ նորանոր յարմարութիւններ առաջարկելով մարդկութեանը, անցեալից կտրուած մշակոյթը մի տեսակ ամաչում է իր երիտասարդութիւնից եւ ջանում է ապացուցել, որ ինքն էլ այդքան նոր չէ:

Մշակոյթի մէջ տեղի է ունենում յաւերժութեան եւ ժամանակի պայքարը: Եգիպտական բուրգերը կառուցուեցին յաւերժութեան ձգտման հիմնաքարի վրայ: Եւ եգիպտական բուրգերը ապրեցին հազարամեակներ:

Ժամանակակից քաղաքակրթութիւնը այլեւս չի կառուցում հազարամեակներ ապրելու ամրութիւն ունեցող շինութիւններ: Ամէն ինչ փոփոխական է ժամանակակից քաղաքակրթութեան մէջ: Քաղաքակրթութիւնը, ի տարբերութիւն մշակոյթի, յաւերժութիւն չի պահանջում ու չի ցանկանում: Նա ոչ միայն համակերպւում է իր մահուան հետ, այլեւ հենց իր մահկանացու լինելու վրայ է հիմնում իր բոլոր յաջողութիւնները:

Ու չնայած նրան, որ քաղաքակրթությունը տարաւ իր յետեւից մշակոյթը, աշխարհի տարբեր ծայրերում երբեմն-երբեմն ծնւում են մշակոյթի իսկական ներկայացուցիչները, որոնք եղիսատական բուրգերի նման կերտում են հազարամեակների համար: Այդպիսին էին Դոստոեւսկին, Տոլստոյը եւ Պարոյր Սեւակը: Սեւակը չհասցրեց իր մտայղացումները ժայռի վերածել, չկարողացաւ իր պարզ տեսածը մարդկանց նուիրել, չհասցրին նրա հայրենակիցները նրան աշխարհահռչակ դարձնել, բայց այնքանն էլ բաւական է, որ սիրեց ու խոնարհուեց նրա առջեւ հայ ժողովուրդը, եթէ ոչ միշտ տեսնելով, ապա գոնէ հաւատալով նրա տեսածին: Խոնարհւում ենք նրա առջեւ նաեւ մենք, նուիրելով նրա յիշատակին այս դրքոյկը:

Finito di stampare
il 6 aprile 1978
in T.L.A. - Venezia

